ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

1 (99). 2019

«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը Պետերբուրգյան միջազգային տնտեսական համաժողովի 23-րդ լիագումար նիստում

Բեմում. աջից ձախ՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար *Անտոնիու Գուտերեշ*, Սլովակիայի Հանրապետության Վարչապետ *Պետեր Պելեգրինի*, Բուլղարիայի Հանրապետության Նախագահ *Ռումեն Ռադև*, Ռուսաստանի Դաշնության Նախագահ *Վլադիմիր Պուտին*, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Նախագահ *Սի Ցզինպին*

2019 թ. հունիսի 7

Մի դրվագ Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Եվրոպական խորհրդի Նախագահ Դոնալդ Տուսկի հանդիպումից

Բրյուսել, 2019 թ. մարտի 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

1 (99). **2019**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տավարածյան Գ. Վ.
(նախագահ)
Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)
Ալեքսանյան Ա. Ջ.
Ալթունյան Գ. Ռ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապերյան Վ. Վ.
Բալայան Գ. Կ.
Գասպարյան Օ. Վ.
Դավթյան Ա. Մ.
Խաչատրյան Տ. Վ.
Հովհաննիսյան Գ. Մ.
Ղամբարյան Մ. Ա.
Մակարյան Ա. Ա.
Մարգարյան Ռ. Պ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիկյան Ա. Մ.
Մարտիրոսով Լ. Ա.
Յալանուզյան Ա. Կ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
Շահնազարյան Թ. Ն.
Սիմոնյան Ս. Վ.
Սմբատյան Ն. Վ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գ. Վ. Տավարածյան, Փոփոխվող անվտանգային միջավայրի պայմաններում ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի դերն ու խնդիրները 7

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆԻ ՈՒՂԵՐՁ-ՏԵՍԼԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՌՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Ա. Կ. Հովհաննիսյան, Ժամանակակից պատերազմներում ուժերի լրահամալրման ժամանակային խնդիրը 17

Լ. Ա. Ներսիսյան, Հայաստանը Ադրբեջանի հետ հակամարտությունում կանխիչ հարվածի ճանապարհին 27

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ. Վ. Տավարածյան, Մարտական գործողությունների տեղափոխում հակառակորդի տարածք. ռազմավարական դիտարկում 31

ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՎԵՍՏ

Ա. Կ. Յալանուզյան, 1950–1980-ական թվականների տեղային պատերազմների որոշ ռազմավարական և օպերատիվ-մարտավարական բնութագրական գծեր 47

ՌԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մ. Ռ. Աբրահամյան, Օդային նշանակետերի թռիչքների մոդելավորման մեթոդ 59

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ս. Ա. Բաղդասարյան, Բուլղարիայի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի խնդրում 71

ՌԱԶՄԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ

Ա. Գ. Դավթյան, Ռազմաարդյունաբերության ոլորտում միջպետական համագործակցության առանձնահատկությունները. ԵԱՏՄ շրջանակներում և Չինաստանի հետ ՀՀ համագործակցության հեռանկարները 82

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ս. Օ. Աբրահամյան, Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զինծառայողների իրավական կարգավիճակի հարցի շուրջ 90

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գ. Ա. Պետրոսյան, Թուրքիայի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության ստեղծումը 96

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Վ. Գ. Գևորգյան, Որովայնի սուր ցավի պատճառով հոսպիտալացված հիվանդների բուժուղղորդման նկատմամբ ընդհանուր մոտեցումներ 108

Գ. Կ. Աղամյան, Վ. Վ. Մովսիսյան, Բժշկական փորձաքննությունը որպես ՀՀ ոստիկանության աշխատողների դիսպանսերային զննման որակի գնահատման միջոց 118

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ, Համարի բառարան 125

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Լ. Ս. Արզումանյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ս. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Կ. Ս. Դանիելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Հ. Մաթևոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Վ. Մարկոսյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Յ. Սայադյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ռ. Ա. Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ա. Հ. Սիմոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Ս. Սիսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հ. Ս. Քոթանջյան, գեներալ-լեյտենանտ (պաշտոնաթող), քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 1 (99)**. 2019**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Таварацян Г. В. (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Айвазян Л. Г., Айдинян Р. А., Алексанян А. Дж., Алтунян Г. Р., Аперян В. В.,
Балаян Г. К., Варданян А. Г., Гамбарян М. А., Гаспарян О. В., Давтян А. М.,
Макарян А. А., Маргарян Р. П., Мартикян А. М., Мартиросов Л. А.,
Ованнисян Г. М., Симонян С. В., Смбатян Н. В., Тер-Григорьянц Н. Г.,
Хачатрян Т. В., Шахназарян Т. Н., Яланузян А. К. (зам. глав. ред.)

СОДЕРЖАНИЕ

Г. В. Таварацян. Роль и задачи Национального исследовательского университета обороны МО РА в изменяющихся условиях безопасностной среды . . . . . 7 (12)*

МАТЕРИАЛЫ ТРЕХДНЕВНОЙ КОНФЕРЕНЦИИ ПО ОБСУЖДЕНИЮ ОБРАЩЕНИЯ-ВИДЕНИЯ МИНИСТРА ОБОРОНЫ РА ДАВИДА ТОНОЯНА

А. К. Оганесян. Временная проблема доукомплектования сил в современных войнах 17

Л. А. Нерсисян. Армения на пути к превентивному удару в конфликте с Азербайджаном 27

СТРАТЕГИЯ

Г. В. Таварацян. Перенос боевых действий на территорию противника: стратегический ракурс 31 (44)

ОПЕРАТИВНОЕ ИСКУССТВО

А. К. Яланузян. Некоторые стратегические и оперативно-тактические характерные черты локальных войн 1950–1980-ых годов . . 47 (56)

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

М. Р. Абрамян. Метод моделирования полета воздушных целей 59 (69)

ПОЛИТИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

С. А. Багдасарян. Позиция Болгарии в вопросе Нагорного Карабаха 71 (80)

ВОЕННАЯ ЭКОНОМИКА

А. Г. Давтян. Особенности межгосударственного сотрудничества в военно-промышленной сфере: перспективы сотрудничества в рамках ЕАЭС и с Китаем 82 (89)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ВОЕННОЕ ПРАВО

С. О. Абрамян. К вопросу о правовом статусе военнослужащих Вооруженных Сил Российской Федерации в Республике Армения 90 (94)

ИСТОРИЯ НАЦИОНАЛЬНЫХ СТРУКТУР БЕЗОПАСНОСТИ

Г. А. Петросян. Создание Службы национальной безопасности Турецкой Республики 96 (106)

ВОЕННАЯ МЕДИЦИНА

В. Г. Геворкян. Общие подходы к медицинскому направлению больных, госпитализированных из-за острой боли в животе . . 108 (122)

Г. К. Адамян, В. В. Мовсисян. Врачебная экспертиза как средство оценки качества диспансеризации сотрудников Полиции РА 118 (122)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян и др. Словарь номера 125 (127)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

Р. В. Агузумцян, кандидат психологических наук, профессор;
Н. У. Аракелян, академик НАН РА;
Л. С. Арзуманян, доктор филологических наук;
Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;
В. М. Арутюнян, академик НАН РА;
Г. Е. Багдасарян, академик НАН РА;
С. А. Галстян, доктор филологических наук, профессор;
С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор;
Г. А. Геворкян, академик НАН РА;
К. С. Даниелян, кандидат биологических наук, доктор географических наук;
Г. С. Котанджян, генерал-лейтенант (в отставке),
доктор политических наук, профессор;
А. А. Манташян, академик НАН РА;
М. М. Маргарян, доктор политических наук, профессор;
М. В. Маркосян, доктор технических наук, профессор;
Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;
М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;
Р. А. Сафрастян, академик НАН РА,
О. Я. Саядян, доктор географических наук, профессор,
А. Г. Симонян, член-корреспондент НАН РА,
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 1 (99)**. 2019**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Tavaratsyan G. V. (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J.*, *Altunyan G. R.*, *Aperyan V. V.*, *Ayvazyan L. G.*, *Balayan G. K.*, *Davtyan A. M.*, *Gasparyan O. V.*, *Ghambaryan M. A.*, *Hovhannisyan G. M.*, *Idinyan R. A.*, *Khachatryan T. V.*, *Makaryan A. A.*, *Margaryan R. P.*, *Margaryan V. H.*, *Martikyan A. M.*, *Martirossov L. A.*, *Shahnazaryan T. N.*, *Simonyan S. V.*, *Smbatyan N. V.*, *Ter-Grigoryants N. G.*, *Vardanyan A. G.*, *Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief)

CONTENTS

G. V. Tavaratsyan. The role and tasks of National Defense Research University of the MOD, RA in the changing conditions of security environment . . . . . 7 (13)*

MATERIALS OF THE THREE-DAY CONFERENCE ON THE DISCUSSION OF THE ADDRESS-VISION OF DAVID TONOYAN, THE RA DEFENSE MINISTER

A. K. Hovhannisyan. Temporal problem of forces regeneration in modern warfares 17

L. A. Nersisyan. Armenia on the road to pre-emptive strike in the conflict with Azerbaijan 27

STRATEGY

G. V. Tavaratsyan. Transferring hostilities to the opponent's territory: strategic perspective 31 (45)

OPERATIONAL ART

A. K. Yalanuzyan. A number of strategic and operational-tactical features of local wars in 1950—1980 . . . . . 47 (57)

MILITARY ENGINEERING

M. R. Abrahamyan. Method of modelling the air targets flight . . 59 (70)

POLITICAL SECURITY

S. A. Baghdasaryan. Bulgaria's position in relation to the Nagorno-Karabakh issue 71 (81)

MILITARY ECONOMICS

A. G. Davtyan. Peculiarities of interstate cooperation in the sphere of military industry: perspectives of the RA cooperation within the framework of the EAEU and with China 82 (89)

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY LAW

S. O. Abrahamyan. To the issue of the legal status of servicemen of the Armed Forces of the Russian Federation in the Republic of Armenia 90 (95)

HISTORY OF NATIONAL SECURITY STRUCTURES

G. A. Petrosyan. Establishment of the National Security Service of the Republic of Turkey 96 (107)

MILITARY MEDICINE

V. G. Gevorgyan. General approaches to the medical referral of patients hospitalized due to acute abdominal pain 108 (123)

G. K. Adamyan, V. V. Movsisyan. Medical examination as a means of quality assessment of prophylactic medical examination of the RA Police officers 118 (123)

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan and others. Volume Dictionary 125 (129)

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

R. V. Aghouzoumtsian, Candidate of Psychological Sciences, Professor;
N. H. Arakelian, Full Member, NAS RA;
L. S. Arzumanyan, Doctor of Philology;
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;
K. S. Danielyan, PhD in Biology, Doctor of Geography;
S. A. Galstyan, Doctor of Philology, Professor;
S. G. Galstyan, Doctor of Medical Sciences, Professor;
H. A. Gevorkian, Full Member, NAS RA;
B. N. Harutyunyan, Doctor of Medical Sciences, Professor;
V. M. Haroutyounian, Full Member, NAS RA;
H. S. Kotanjian, Lieutenant General (retired),
Doctor of Political Sciences, Professor
A. H. Mantashian, Full Member, NAS RA;
M. M. Margaryan, Doctor of Political Sciences, Professor;
M. V. Markosyan, Doctor of Technical Sciences, Professor;
H. H. Matevosyan, Corresponding Member, NAS RA;
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;
R. A. Safrastyan, Full Member, NAS RA;
Hov. Y. Sayadyan, Doctor in Geography, Professor;
A. H. Simonyan, Corresponding Member, NAS RA;
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor

ՓՈՓՈԽՎՈՂ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գ. Վ. ՏԱՎՈՒՇՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետ

Դեռ 2007 թվականին Հայաստանի «Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ նշվել էր, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է մի տարածաշրջանում, որը բնութագրվում է անկայուն անվտանգային միջավայրով և արագ փոփոխվող ռազմաքաղաքական իրադրությամբ, այստեղ գործող հիմնական դերակատարների շահերի մրցակցությամբ[1]: Այժմ աշխարհում և տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակը ավելի է սրվել: Ժամանակակից ռազմաքաղաքական իրավիճակը բնութագրվում է մեծ տերությունների, ինչպես նաև միջազգային անվտանգության ճարտարապետության կարևոր տարրերի՝ տարաբնույթ ռազմաքաղաքական ու աշխարհատնտեսական դաշինքների միջև հակասությունների խորացմամբ: Դրա դրսևորումներից է ԱՄՆ–Ռուսաստան և ԱՄՆ–Չինաստան աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական հակամարտությունը, որը երբեմն վերածվում է բացահայտ առճակատման: Որպես հիմնական պատճառներից մեկը կարելի է նշել այն հանգամանքը, որ ԽՍՀՄ փլուզումից հետո ձևավորված միաբևեռ աշխարհը՝ ԱՄՆ-ի անվերապահ առաջավարությամբ, հետզհետե վերածվում է բազմակենտրոն աշխարհի[2]:

ԱՄՆ–ՌԴ հարաբերությունները ծայր աստիճանի սրվել են Սիրիական ճգնաժամի, Ուկրաինայի և Ղրիմի առնչությամբ՝ շոշափելով նաև տնտեսական ոլորտը (նավթի գներ, գազատարների կառուցում, զենքի վաճառք և այլն): Չինաստանի հետ ԱՄՆ-ի հակասություններն առանձնակի ցայտունությամբ են դրսևորվում Հարավ-Չինական ծովին առնչվող ռազմաքաղաքական իրավիճակում և միջազգային առևտրի ասպարեզում[3]: Մասնավո-

---

[1] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, էջ 17:

[2] Տես, օրինակ, «Россия в полицентричном мире». Под ред. А. А. Дынкина, Н. И. Ивановой. М., 2011; «Патрушев рассказал, почему США мешают переходу к многополярному миру». «РИА Новости», 16 апреля 2019 (https://ria.ru/20190416/1552746377.html); “From Unipolar To Multipolar. The Remaking Of Global Hegemony”. Ed. by Ian Boxill. “IDEAZ”, (Special Issue), 2012-2014, Vol. 10-12:

[3] Տես, օրինակ, “A quick guide to the US-China trade war”. “BBC News”, 14 May 2019 (https://www.bbc.com/news/business-45899310):

որպես՝ ԱՄՆ-ը և Ռուսաստանը սպառնում են դուրս գալ միջին և փոքր հեռահարության հրթիռների վերացման մասին պայմանագրից, Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ ԱՄՆ-ը ներկայացնում է նոր պահանջներ: Մեծ տերությունների միջև հակասությունների սրումն իր արտացոլումն է ստացել նաև ԱՄՆ-ի 2018 թ. Ազգային պաշտպանության ռազմավարությունում, որտեղ ազգային անվտանգության հիմնական խնդիր համարվում է ոչ թե ահաբեկչությունը, այլ միջպետական մրցակցությունը[4]:

Միջազգային մակարդակով տեղի ունեցող այդ երևույթները էական ազդեցություն են գործում տարածաշրջանային ռազմաքաղաքական իրադրության վրա՝ ավելի բարդ ու անորոշ դարձնելով Հարավային Կովկասում ձևավորված անվտանգային միջավայրը[5]:

Մեր տարածաշրջանը, գտնվելով պայթունավտանգ Մերձավորարևելյան և Կենտրոնասիական տարածաշրջանների միջև ու կրելով այդ երկուսի ազդեցությունների բարդ համակցությունը, հանդես է գալիս որպես Արևելքից դեպի Եվրոպա էներգակիրների տեղափոխման միջանցք ու Չինաստանի «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» ծրագրի կարևոր տարր[6]: Ըստ այդմ տարածաշրջանի պետությունները վարում են տարամետ քաղաքականություն:

Այսպես. Վրաստանը, կողմնորոշվելով դեպի Արևմուտք, մեծ հակասություններ ունի Ռուսաստանի հետ: Ադրբեջանը թշնամական քաղաքականություն է վարում Հայաստանի ու Արցախի դեմ և առաջնորդվում է Թուրքիայի հետ հարաբերությունները «Մեկ ազգ՝ երկու պետություն» սկզբունքով կառուցելու գաղափարով: Միևնույն ժամանակ, նա ունի որոշակի կնճռոտ հարցեր Իրանի հետ: Իրանը, հակասություններ ունենալով Արևմուտքի, հատկապես՝ ԱՄՆ-ի և Իսրայելի հետ, շիա մահմեդականների անառարկելի համաշխարհային առաջնորդն է և մահմեդական աշխարհում առաջավորության համար պայքարում է Սաուդյան Արաբիայի ու Թուրքիայի հետ: Թուրքիան ձգտում է տարածաշրջանային հեգեմոն դառնալու ոչ միայն Հարավային Կովկասում, այլև Մեծ Մերձավոր Արևելքում և ըստ այդմ ճկուն քաղաքականություն է վարում ԱՄՆ-ի և ՌԴ-ի նկատմամբ[7]:

---

[4] Տես “DoD Official: National Defense Strategy Will Enhance Deterrence”. U.S. Department of Defense, 19 January 2018 (https://dod.defense.gov/News/Article/Article/1419045/dod-official-national-defense-strategy-will-enhance-deterrence/):

[5] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 31–34:

[6] Տես *Уэйд Шенард*. Задачи Китая за рубежом: почему инициатива «Один пояс, один путь» обречена на успех. «ИноСМИ.РУ», 10.01.2018 (https://inosmi.ru/politic/20180110/241157191.html):

[7] Տես *Г. Г. Тищенко*. Военно-политическая обстановка в Кавказском регионе. «Военный портал», 09.11.2013 (http://milportal.ru/grigorij-tishhenko-voenno-politicheskaya-obstanovka-v-kavkazskom-regione/); «Южный Кавказ: текущий срез глобальной и региональной безопасности». «Оборонно-промышленный курьер», 13.05. 2019 (http://opk.com.ua/%D1%8E%D0%B6%D0%BD%D1%8B%D0%B9-%D0%BA%D0%B0%D0%B2%D0%BA%D0%B0%D0%B7-%D1%82%D0%B5%D0%BA%D1%83%D1%89%D0%B8%D0%B9-%D1%81%D1%80%D0%B5%D0%B7-%D0%B3%D0%BB%

Հայաստանի անվտանգության համար հույժ կարևոր գործոններից են Հարավային Կովկասում չլուծված հակամարտությունների, առաջին հերթին՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առկայությունը, Ադրբեջանի վարած բացահայտ հակահայկական քաղաքականությունը, որը ապակայունացնում է իրադրությունը ամբողջ տարածաշրջանում և հղի է Հայաստանի ու Արցախի դեմ պատերազմի վերսկսմամբ[8]: Նման իրավիճակում ծագում են Հայաստանի և Արցախի անվտանգությունների դեմ ուղղված բազմաթիվ ու բազմաբնույթ սպառնալիքներ, որոնցից առավել ազդու են ռազմական սպառնալիքները:

Միևնույն ժամանակ, տնտեսական ոլորտում, գիտության ու տեխնիկայի ասպարեզում տեղի է ունենում թռիչքաձև զարգացում, որը հանգեցնում է նաև զինված պայքարի նոր միջոցների, ուստի և նոր ձևերի ու եղանակների ստեղծման: Ընդհանուր զարգացման հետևանքով տեղի են ունենում տեխնիկական միջոցների գների էական նվազում ու թվաքանակի սրընթաց աճում: Որպես արդյունք՝ նախկինում միայն օպերատիվ-ռազմավարական օղակին ստորադասվող ռազմատեխնիկական միջոցները կարող են կիրառվել նաև մարտավարական օղակի հրամանատարների որոշմամբ: Մասնավորապես՝ եթե առաջ անօդաչու թռչող ապարատները կիրառում էին միայն առաջատար տերությունները, ապա այսօր դրանք հասանելի են ցանկացած պետության համար[9]:

Տվյալ գործոնների ազդեցությամբ տեղի է ունենում պատերազմների բնույթի փոփոխություն:

Ապագա պատերազմներն ու զինված հակամարտությունները կարելի է բնորոշել հետևյալ հատկանիշներով.

– ռազմական ուժի, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական և ոչ ռազմական բնույթի այլ միջոցների համալիր կիրառում՝ բնակչության բողոքային ներուժի և հատուկ օպերացիաների ուժերի լայն օգտագործմամբ,
– հակառակորդի վրա ներգործություն նրա տարածքի ամբողջ խորությամբ, միաժամանակ համընդհանուր տեղեկատվական տարածությունում, օդատիեզերական տարածությունում, ցամաքում ու ծովում,

D0%BE%D0%B1%D0%B0%D0%BB%D1%8C%D0%BD%D0%BE%D0%B9/); *С. Мартиросян*. О последних изменениях военно-политической обстановки в регионе Южного Кавказа. «Военно-политическая аналитика», 18.04.2017 (http://vpoanalytics.com/2017/04/18/o-poslednih-izmeneniyah-voenno-politicheskoj-obstanovki-v-regione-yuzhnogo-kavkaza/):

[8] Տես «Азербайджан угрожает Карабаху войной из Киева-СМИ». «EurAsia Daily», 19.02.2019 (https://eadaily.com/ru/news/2019/02/19/azerbaydzhan-ugrozhaet-karabahu-voynoy-iz-kieva-smi):

[9] Տես *Н. А. Ширяев, Ю. В. Водолажская*. Развитие беспилотных летательных аппаратов. «CyberLeninka» (https://cyberleninka.ru/article/v/razvitie-bespilotnyh-letatelnyh-apparatov):

– պատերազմի վարմանը պատրաստման ժամանակի աճում, և միևնույն ժամանակ՝ անմիջական ռազմական գործողությունների նախապատրաստման ժամանակային պարամետրերի նվազեցում:

Դրա հետ մեկտեղ փոփոխվում է նաև ռազմական արվեստի սկզբունքների բովանդակությունը: Օրինակ՝ հետախուզության ու խոցման միջոցների համար հակառակորդի ամբողջ տարածքի հասանելիության պայմաններում նախկինում գերակա սկզբունքներից մեկը՝ գլխավոր ուղղությունների վրա ուժերի կենտրոնացումը, դառնում է դժվար իրագործելի: Հետախուզության միջոցների կատարելագործման հետևանքով բարդացել է օպերատիվ ու մարտավարական քողարկման իրագործումը: Մարտի արագընթացության աճման պայմաններում հակառակորդի գործողությունների նկատմամբ առաջանցիկության ապահովան համար հրամանատարներից պահանջվելու է ստեղծագործական ու խելամիտ որոշումների ընդունման ունակություն՝ հիմնված ռազմական արվեստի խոր իմացության վրա:

Առանձնակի կարևորություն են ներկայացնում այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել ռազմական կառավարման համակարգում: Եթե զորքերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները, որպես այդպիսիք, անվանապես չեն փոխվել, ապա դրանց բովանդակությունը փոխակերպվել է: Դրանցից հիմնականներն են՝ կառավարման համակարգերի մշտական պատրաստությունը մարտական աշխատանքին, կառավարման օպերատիվությունը, բարձր որակը, կայունությունը և ծածուկությունը[10]:

Ամերիկյան հրամանատարության կարծիքով՝ կառավարման ոլորտում ԱՄՆ-ի ԶՈՒ-ի գերազանցությունը հաջողության հասնելու նույնքան վճռորոշ գործոն է, որքան և թվային ու որակական առաջնությունը սպառազինության ու ռազմական տեխնիկայի ասպարեզում[11]:

Մշտական բարձր մակարդակի պատրաստությունը ենթադրում է մարտական աշխատանք վարելուն կառավարման համակարգի անխտիր բոլոր օղակների բոլոր մարմինների պատրաստությունը և պետք է պատեհաժամությամբ գերազանցի զորքերի մարտական պատրաստությունն ու տարածվի ամբողջ ԶՈՒ-ի վրա:

Օպերատիվության տեսակետից այսօր կարևոր է նկատի առնել մեր և հակառակորդի ժամանակային ծախսերի հաշվեկշիռը: Այս առումով հույժ կարևոր է մշտապես միջոցներ ձեռնարկել կառավարման փուլաշրջանը կրճատելու համար:

Առանձնահատուկ կարևորություն է տրվում կառավարման կայունության և անընդհատության ապահովմանը, քանի որ կառավարման համակարգը առաջնահերթ խոցման օբյեկտ է: Այսօր կայունություն ասելով հասկանում ենք մի համալիր հատկություն, որը ներառում է հուսալիությունը, գոյունակությունը, խանգարումապաշտպանվածությունը և արագ վերականգնելիությունը:

[10] Տես *А. В. Ковтун.* Совершенствование системы управления войсками на ТВД. «Военная мысль», 1991, № 4:

[11] Տես նույն տեղում:

Կառավարման անընդհատությունը ոչ թե մի պարզ մեխանիկական հատկություն է, այլ ենթակաների վրա մշտապես ներգործելու և սահմանված ժամկետում նրանցից անհրաժեշտ տեղեկություններ ստանալու հնարավորության մշտական առկայություն:

Կառավարման ծածուկությունը կոչված է կանխելու կառավարման կետերի, կապի հանգույցների ու գծերի տեղաբաշխման վայրերի, դրանց աշխատանքի բանելակարգերի, զորախմբերի կազմերի, ինչպես նաև օպերացիաների (մարտերի) նախապատրաստմանն ու վարմանը վերաբերող որոշումների ու պլանների բացահայտումը:

Դաշնադրային ուժերի օպերացիաները, որոնք ՆԱՏՕ-ն վարել է վերջին շրջանում, ցույց են տալիս, որ կառավարման համակարգի կազմակերպմանը հատկացվում է մեծ ուշադրություն և՛ ժամանակի տևողության, և՛ իրագործման մանրակրկիտության տեսակետից[12]:

Ժամանակակից ռազմական հակամարտությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս պնդելու, որ այսօր զինված հակամարտությունը վերածվել է *մտավոր-տեղեկատվական ընդդիմամարտության*, քանի որ մարտում աճել է յուրաքանչյուր հրամանատարի արագ կողմնորոշվելու, իր մտահղացումը թաքցնելու և հակառակորդի ծրագրերը մտովի բացահայտելու ունակության դերը[13]: Տեղին է հիշել Սուն Ցզիի հետևյալ պատկերավոր խոսքը. «Լավ մարտնչողը ղեկավարում է հակառակորդին և նրան թույլ չի տալիս ղեկավարել իրեն»[14]: Իսկ դա նշանակում է, որ կանոնադրություններին ու ղեկավար ձեռնարկներին տիրապետելն այսօր արդեն բավարար չէ. պետք է բոլոր հրամանատարներին առաջին հերթին սովորեցնել մտածել:

Ստեղծված իրադրությունում Հայաստանի Հանրապետությունը, որը, ինչպես վերջերս նշեց ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նաև Արցախի անվտանգության երաշխավորն է, ստիպված է որպես գերակայություն զարգացնել իր պաշտպանական համակարգը՝ այն համապատասխանեցնելով ռազմական ոլորտում եղած սպառնալիքներին, զարգացման հիմնական միտումներին և ապագա պատերազմների կանխատեսվող բնույթին:

Տվյալ համակարգի ստեղծումը, հատկապես՝ Հայաստանի նման փոքր տարածք, սուղ մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսներ ունեցող պետության դեպքում պետք է կատարվի գործողությունների օպտիմալ ընթացքն ուղենշող գիտական մշակումների հիման վրա:

Ըստ այդմ՝ մեր Համալսարանի առջև խնդիր է դրված հետազոտելու՝

– ապագա պատերազմների բնույթը, ներկայումս և ապագայում հավանական հակառակորդի մարտական գործողությունների վարման եղանակներն ու ձևերը,

[12] Տես *А. В. Алехнович*. Основные принципы организации систем управления коалиционных группировок войск по опыту современных военных конфликтов. «Наука и военная безопасность», 2006, № 3:

[13] Տես *В. Д. Рябчук, В. И. Ничипор*. Философия войны и теория управления современным противоборством. «Военная мысль», 2007, № 8:

[14] Տես *Սուն Ցզի,* Ստրատեգիայի արվեստը: Ե., 2013, էջ 29:

– ՀՀ Զինված ուժերի շինարարության, պատերազմին պետության և բանակի պատրաստման օպտիմալ ուղղությունները,
– տարածաշրջանային անվտանգային միջավայրի փոփոխման դինամիկան՝ դրա հետագա զարգացման կանխատեսմամբ:

Բացի այդ, խնդիր է դրված նաև մշակելու ռազմական սպառնալիքների չեզոքացման վերաբերյալ եզրակացություններ ու առաջարկություններ և վերլուծական գրությունների ու զեկուցագրերի ձևով ներկայացնելու հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությանը:

Ռուսական Համալսարանը կատարված հետազոտությունների արդյունքներով ըստ անհրաժեշտության կազմում է վերլուծական տեղեկանքներ՝ եզրակացություններով և գործնական առաջարկություններով հանդերձ, որոնք ներկայացվում են պետության և Զինված ուժերի ղեկավարությանը: Հաշվի առնելով վերը նշվածը՝ Կառավարությունը 2018 թ. որոշմամբ մեր առջև խնդիր է դրել, գիտական գործունեությունից բացի, նաև ապահովելու ռազմավարական օղակի սպաների ու գեներալների պատրաստում: Դրան համապատասխան՝ Համալսարանում պետք է գործարկվի կրթական բաղադրիչը, այն է՝ կազմակերպվի ուսուցում գերատեսչական ու միջգերատեսչական վերապատրաստման, մագիստրոսական ու հետբուհական կրթության ծրագրերով:

Ամփոփելով՝ նշեմ, որ Համալսարանի գիտակրթական գործունեությունը կազմակերպվում է արևմտյան ու ռուսաստանյան գիտակրթական հաստատությունների լավագույն մոդելների հաշվառմամբ, ըստ որոնց՝ կրթական ու հետազոտական բաղադրիչները պետք է գործեն համադրության սկզբունքով, այսինքն՝ գիտնականները պետք է ստեղծեն նոր գիտելիք և իրենք էլ այն հաղորդեն լսարանին:

РОЛЬ И ЗАДАЧИ НАЦИОНАЛЬНОГО ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ МО РА В ИЗМЕНЯЮЩИХСЯ УСЛОВИЯХ БЕЗОПАСНОСТНОЙ СРЕДЫ

Г. В. ТАВАРАЦЯН, генерал-майор, Начальник Национального исследовательского университета обороны МО РА

РЕЗЮМЕ

Современная военно-политическая обстановка в мире характеризуется углублением противоречий между сверхдержавами, а также между различными военно-политическими и геоэкономическими блоками. Эти явления международного масштаба существенным образом влияют на динамику региональной безопасностной среды на Южном Кавказе, вследствие чего существенно возрастает степень неопределенности и турбулентности протекающих здесь военно-политических процессов.

В то же время скачкообразное развитие экономики, науки и техники

приводит к появлению новых средств вооруженной борьбы, а следовательно и новых форм и способов ее ведения. При этом рост и удешевление производства привели к тому, что решение о применении ВВТ, ранее доступных командующим стратегического уровня, сегодня принимается командирами оперативно-тактического звена.

В результате этого сегодня военное противоборство в значительной мере перешло в интеллектуально-информационную сферу, повысилась роль умения командира быстро ориентироваться в постоянно меняющейся скоротечной обстановке, скрывать от противника свой замысел и проникать в его планы, т. е. сегодня недостаточно владеть уставами и требованиями руководящих пособий и наставлений, а всем командирам необходимо прежде всего научиться мыслить.

В соответствии с этим перед Национальным исследовательским университетом обороны МО РА поставлена задача исследовать характер будущих войн, вероятные способы и формы ведения военных действий противником; оптимальные направления строительства ВС РА, подготовки государства и армии к войне; динамику изменения безопасностной среды региона с прогнозированием направлений ее вероятного развития. Кроме того, решением Правительства Армении перед Университетом поставлена задача подготовки военных кадров стратегического звена, умеющих единообразно мыслить и принимать взаимосогласованные решения. На этих принципах будет организовано обучение по программам ведомственной и межведомственной переподготовки, а также магистерского и послевузовского образования, в военно-стратегической и военно-безопасностной сферах.

THE ROLE AND TASKS OF NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY OF THE MOD, RA IN THE CHANGING CONDITIONS OF SECURITY ENVIRONMENT

G. V. TAVARATSYAN, Major General, Head, National Defense Research University, MOD, RA

SUMMARY

The current military-political situation in the world is characterized by deepening contradictions between the superpowers, as well as between various military-political and geoeconomic blocs. These global-scale phenomena have a significant impact on the dynamics of the regional security environment in the South Caucasus, due to which the degree of uncertainty and turbulence of the military-political processes progressing here increases significantly.

At the same time, the leaping development of the economy, science and technology leads to the emergence of new means of armed struggle, and consequently, of new forms and methods of waging it. However, the growth and reduction in the cost of production have led to the fact that the decision on the use of Armament and Military Equipment previously available to the commanders at the strategic level is now made by the commanders of the operational-tactical link.

As a result of this, today the military confrontation has largely shifted to the intellectual-information sphere, the role of the commander's ability to quickly orient himself in the constantly changing transient situation, conceal his intention from the enemy and penetrate into his plans has increased, i.e., today it takes more than knowing military manuals and requirements of guidance documents and instructions, yet all the commanders should first learn to think.

According to that, the National Defense Research University, MOD, RA, is tasked with studying the nature of future wars, an enemy's possible ways and forms of operating; optimal directions for the construction of the Armed Forces of the Republic of Armenia, preparation of the state and the army for war; the dynamics of changes in the security environment of the region with the prediction of the directions of its plausible development. In addition, by the decision of the RA Government, the University has been tasked to train strategic level military personnel to be able to uniformly think and make coordinated decisions. Training within the programs of agency and interagency retraining, as well as of master and postgraduate education, in the military-strategic and military-security spheres will be organized on these principles.

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆԻ
ՈՒՂԵՐՁ-ՏԵՍԼԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ
ԵՌՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

МАТЕРИАЛЫ ТРЕХДНЕВНОЙ КОНФЕРЕНЦИИ
ПО ОБСУЖДЕНИЮ ОБРАЩЕНИЯ-ВИДЕНИЯ
МИНИСТРА ОБОРОНЫ РА
ДАВИДА ТОНОЯНА

MATERIALS OF THE THREE-DAY CONFERENCE
ON THE DISCUSSION OF THE ADDRESS-VISION OF
DAVID TONOYAN,
THE RA DEFENSE MINISTER

2018 թ. սեպտեմբերի 7–9-ը պաշտպանության նախարարությունում կազմակերպվեց գիտաժողով: Դրա նպատակն էր ռազմագիտական տեսանկյունից քննարկել ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի տեսլականի հիմնական դրույթները՝ դրանք դարձնելով զորքերի հրամանատարության համար ավելի խորքային, ընկալելի ու հիմնավորված: Գիտաժողովն անցկացվել է ՀՀ ՊՆ ռազմագիտական կառույցների և զորային օղակի հրամանատարության ներգրավմամբ, քաղաքացիական գիտական հիմնարկների և ուսումնական հաստատությունների մասնագետների մասնակցությամբ: Այդ գործում չափազանց կարևոր էին ինչպես ռազմական գիտաուսումնական հաստատությունների ներկայացուցիչների, այնպես էլ քաղաքացիական գիտնականների ու փորձագետների կարծիքները, արծարծված հարցերն ու պրոբլեմները, նրանց միջև ծագած բանավեճերը:

Սա բանակաշինության ասպարեզում առաջադիմական մշակույթի ներդրման լավ օրինակ է, երբ ամեն առաջարկություն ու դոկտրինային փաստաթուղթ ենթարկվում է համապատասխան գիտական քննարկման և ստանում է անհրաժեշտ հիմնավորում: Կարևոր են նաև գիտական հարթակներում զինվորականության և քաղաքացիական գիտական շրջանների շփումները:

Ելույթները հրապարակվում են առանց խմբագրական միջամտության*:

* Սկիզբը տես «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի 2018 թ. հմ. 4-ում:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ՈՒԺԵՐԻ ԼՐԱՀԱՄԱԼՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ

Ա. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բոլոր սերունդների պատերազմներում յուրաքանչյուր կողմ ձգտել է գործելու ավելի արագ, քան հակառակորդը: Դրան համապատասխան կազմվել են պլաններ, ստեղծվել են զենքեր, անձնակազմի պատրաստումը հիմնվել է ժամանակի կրճատման վրա և այլն: Ըստ այդմ հրամանատարներին ավելի ու ավելի քիչ ժամանակ է մնացել իրավիճակը գնահատելու, պլանավորելու և որոշում կայացնելու համար:

Այստեղ ներկայացնենք առաջին պլանավորված շտաբային օպերացիաներից մեկը: Գերմանացի գեներալ, մեծ տեսաբան Շառնհորստը և նրա դպրոցի ներկայացուցիչները, ավելի ու ավելի զարգացնելով դասական ռազմական գիտությունը և ձեռնամուխ լինելով ռազմական գործողությունների պլանավորման արվեստի կիրառմանը, մտահանգեցին Մեծ գերագույն շտաբի գաղափարին, ինչը կոնկրետ Հելմուտ ֆոն Մոլտկե Ավագի հոգեզավակն էր. նա դեռ 1864 թ. Շլեզվիգի և Հոլշտայնի համար մղված պատերազմում փորձեց ամեն ինչ իդեալականորեն պլանավորել, որպեսզի գործողությունները կատարվեն հնարավորինս արագ[1]: Գերմանացի պլանավորողների համար արագ գործողությունները դարձան նորմ ու գործելաոճ: Գլխավոր շտաբը մտածում էր արագընթաց գործողությունների մասին՝ մտահոգված լինելով երկու ճակատով պատերազմելու անհրաժեշտությամբ[2]: Այսպիսով՝ արագ պատերազմելու շնորհիվ ջախջախման մոդելը քայլ առ քայլ մոտենում էր իր գագաթնակետին՝ «բլիցկրիգի» («կայծակնային պատերազմի») տեսությանը: Սակայն ջախջախման պատերազմի մոդելը պատմականորեն ծնունդ էր առել ավելի վաղ: Դրանում մեծ ներդրում ունեին շատ դասականներ, իսկ գիտության մակարդակի այն հասցրին Ֆրիդրիխ Մեծը և Բոնապարտը: Պրուսական ռազմական դպրոցն այն կատարելագործեց և մշակեց հստակ կանոններ: Միավորված Գերմանական կայսրությունը հենց դրա արգասիքն էր, իսկ նրա բանակի Մեծ գերագույն շտաբն այն ուղեղային կենտրոնն էր, որտեղ մասնագետները կռում էին ջախջախման պատերազմի նոր կանոնները: Այդ կառույցի ղեկավար Ալֆրեդ ֆոն Շլիֆենի «Կաննե» բանաձևը հետագայում դարձավ աշխարհի շատ

[1] Տես *Н. А. Власов.* Гельмут фон Мольтке. Полководец индустриальной эпохи. СПб., 2011, с. 45:

[2] Տես *F. Waitl.* The True Strategy of Blitzkrieg (https://www.militaryhistoryonline.com/wwii/articles/strategyofblitzkrieg.aspx):

զինվորականների համար դասագրքային: Շլիֆենի բանաձևի հիմքը Կաննեի ճակատամարտն էր, որում Հաննիբալը հաղթեց զորաթևերից հռոմեացիներին շրջանցելու և շրջապատելու շնորհիվ: Շլիֆենի ծրագիրը բազմիցս քննարկվեց ու խաղարկվեց գերմանական սպայակազմի զորավարժություններում, դարձավ «Շլիֆենի պլան» և, ըստ էության, կիսաշրջափակման օպերացիա էր:

Ըստ Շլիֆենի՝ քանի որ գերմանական զորքերը չունեին այնքան ուժեր ու միջոցներ, որպեսզի կատարեին երկկողմ շրջանցում, ապա պետք է ձեռնարկեին միակողմ շրջանցում՝ երկրորդ կողմում նմանարկելով այն[3]: Գերմանական բանակի աջ թևը մեծ կորագծով Բելգիայի տարածքով պետք է ներխուժեր Ֆրանսիայի տարածք և, թևանցելով ֆրանսիական բանակին, անցներ նրա թիկունքը, ջախջախեր նրան, ապա գրավեր Փարիզը: Օպերացիան պետք է հաղթական վախճանի հասցվեր առավելագույնը քառասուն օրում, որպեսզի գերմանական բանակը հասցներ կատարել ռազմավարական վերախմբավորում և հայտնվեր Ռուսաստանի դիմաց[4]: Այդ ժամանակ աշխարհի մեծ բանակների համալրման արագությունը հաշվարկվում էր երկուսից-երեք ամիս: Գերմանական բանակը վարժվում էր դա երկու-երեք անգամ ավելի արագ անելուն:

Արդեն Շլիֆենի մահից հետո գերմանական բանակը հարձակվեց Ֆրանսիայի վրա ու թեև այդ պատերազմում պարտվեց, մի բան ակնհայտ է՝ կատարվել էր ժամանակային հեղափոխություն: Գերմանական զորքերն իրոք արագ գործողությունների առումով հրաշքներ գործեցին, սակայն նրանց դեմն առնելու համար Ֆրանսիան ևս ստիպված էր դիմելու արագ գործողությունների, և ծնվեց հայտնի արտահայտությունը՝ «Փարիզը փրկեցին տաքսիները»[*]:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Օպերատիվ արվեստի սաղմների ձևավորումից և առաջին լայն կիրառությունից հետո, այսինքն՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ, առաջատար պետությունները վերանայում էին իրենց ռազմական դոկտրինները, մարտական կանոնադրությունները հարմարեցնում զանգվածային բանակներին, միևնույն ժամանակ, ձգտում այդ մարդաշատ բանակներին սովորեցնելու գործել շատ արագ: Առաջին համաշխարհային պատերազմի արյունալի մարտերը որոշ նահանջ էին արագագործությունից: Իհարկե, մարտական գործողությունների արագ վարման առաջին նախապայմանը մեքենայացումն էր՝ ինչպես փոխադրամիջոցներով զորաշարժերի նպատակով, այնպես էլ աշխարհի առաջատար բանակներում մեծ արագությամբ քանակապես շատացող զրահատանկային միջոցների կիրառ-

[3] Տես *J. Grenville.* A History of the World from the 20th to the 21st Century. Harvard University Press, 2000, P. 21:

[4] Տես *H. Strachan.* The First World War: to Arms, Vol. 1. Oxford, 2003, P. 177:

[*] Բանն այն է, որ ֆրանսիական զորքը Գերմանիայի հետ սահմանի մերձակայք էր հասցվում ցանկացած փոխադրամիջոցով, անգամ՝ տաքսիով: – *Խմբ.*:

մամբ: Եթե բուն մարտական գործողությունների վարման արագությանը վերաբերող բոլոր հարցերի պատասխանները պարզ էին (գոնե՝ տեսականորեն), ապա պարզ չէր, թե ինչպես է հնարավոր ապահովել մարտի մեջ պահեստազորի արագ զորամուտը: Չէ՞ որ զանգվածային բանակների դեպքում հիմնական թվաքանակը պահեստազորն էր:

Տվյալ ասպարեզում, ինչպես վերջին հարյուր տարում ռազմական գործի բոլոր բնագավառներում, գլխավոր առաջատարը գերմանական ռազմագիտական դպրոցն էր, որը, նախ, մշակեց զրահատանկային զորքերի կիրառության, մարտի մեջ պահեստազորի արագ զորամուտի լավագույն բանաձևերը: Սակայն եթե առաջինը զինվորականների համար քիչ թե շատ հասկանալի էր, ապա երկրորդ խնդրի լուծումը ակներև չէր:

Խորհրդային հրամանատարությունը հասկանում էր «բլիցկրիգի» իմաստը, նույնիսկ ավելի մեծ մասշտաբներով էր պատկերացնում: ԽՍՀՄ-ում ծնվել էր ոչ պակաս հետաքրքիր մի տեսություն՝ «խոր օպերացիա» կամ «խոր ճեղքում», որի հիմնական հեղինակներն էին խորհրդային անվանի ռազմական գործիչներ գեներալ Վ. Տրիանդաֆիլովը և մարշալ Մ. Տուխաչևսկին[5]:

«Խոր օպերացիան» հենց գերմանական «Կայծակնային պատերազմի» ավելի ընդգրկուն տարատեսակն էր, որտեղ ամեն ինչ քանակապես հաշվարկված էր: Բավական է ասել, որ օպերատիվ խորությամբ ճեղքման համար նախատեսված էր կիրառել զորքերի վեց շարակարգ և օդադեսանտային ուժերը՝ որպես հատուկ շարակարգ: 1941 թ. դրությամբ Խորհրդային զորքերի ռազմավարական առաջին շարակարգը, ըստ էության, հենց դրա համար էր ստեղծված, սակայն այն չափազանց կտրված էր մյուս շարակարգերից, և առանց այն էլ կառավարման վատ համակարգի հետ զուգակցված՝ հանգեցրեց մեծաթիվ անդառնալի կորուստների: Միևնույն ժամանակ, հասունացած չէր նաև խորհրդային ռազմատեսական միտքը ռազմավարական և օպերատիվ մակարդակներում: Ուստի և ի սկզբանե թույլ էին տրվել մի շարք տեսական ու գործնական սխալներ, որոնց թվում առավել էականներից էր ժամանակի սխալ հաշվարկումը:

Խորհրդային տեսաբանները համարում էին, որ պատերազմի նախնական փուլը, որը կվարվի առաջին մեծ զորախմբերը ծավալելու և մարտական իրադրությունում կիրառելու համար, կտևի մոտավորապես կես ամիս կամ փոքր-ինչ ավելի: Հետևաբար այդ ժամանակ կձեռնարկվեն սահմանափակ մարտական գործողություններ, կամ, ինչպես ոմանք էին ասում, շոշափողական մարտեր, մինչև որ հիմնական ուժերը կկենտրոնացվեն ու մարտակարգ կկազմեն[6]: Ինչպես կյանքը ցույց տվեց, գերմանական բանակը կարողանում էր առանց լրահամալրման ծածուկ կենտրոնանալ և շատ արագ կազմել մարտակարգ:

---

[5] Տես *В. К. Триандафиллов.* Характер операций современных армий. Изд. 3. М., 1936:

[6] Տես *П. А. Жилин, М. М. Кирьян и др.* История военного искусства. М.,1986, сс. 104–121:

«Գերմանական զորքերի հրամանատարությունը զորքերը սահմանի մոտ կենտրոնացրել է ամենավերջին պահին, իսկ զրահատանկային զորքերը, որոնք գտնվում էին զգալի հեռավորության վրա, ելման շրջաններ են տեղափոխվել միայն հունիսի 22-ի գիշերը»[7]:

Գերմանական ռազմական միտքը մարտի մեջ հիմնական խմբավորումների զորամուտը նախորդ պատերազմից մնացած 2-4-շաբաթյա ժամկետները կրճատել էր մի քանի անգամ[*]: Թեև գերմանական բանակն այդ հեղափոխական ձեռքբերումը վերջին երեք տարում մի քանի անգամ էր ցուցադրել, այդուհանդերձ, խորհրդային ռազմավարների ուշադրությունից դա կա՛մ վրիպել էր, կա՛մ ըստ արժանվույն չէր գնահատվել: Այս թյուրիմացությունը, բնականաբար, հիմքեր ուներ՝ պայմանավորված էր խորհրդային օպերատիվ արվեստի քանակական մտածելակերպով և վատ կառավարման պատճառով սովորական դարձած գործողությունների դանդաղ ընթացությամբ: Սա ավելի քան զարմանալի է, եթե հաշվի առնենք խորհրդային զրահատանկային միջոցների զարգացման միտումները:

Իհարկե, այս սխալները հետագայում ուղղվեցին միլիոնավոր կյանքերի գնով, սակայն ռազմական տեսաբանները հասկացան մի կարևոր բան. ռազմական գործում գերմանական դպրոցը սահմանել էր արագագործության նոր չափանիշներ:

ՕՐԻՆԱԿՆԵՐ ՉՈՐՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻՑ

Երկրորդ աշխարհամարտից հետո տեղի ունեցած այսպես կոչված կանոնավոր պատերազմների առումով ուշագրավ էին արաբա-իսրայելական պատերազմները, որոնց ժամանակ կողմերը կրկին փորձում էին ամեն ինչ սկսել ու ավարտել հնարավորինս արագ և աննկատ: Այդ գործում մի քանի անգամ հաջողություն ունեցավ իսրայելական բանակը, որն ավելի կազմակերպված էր և ավելի արագ էր գործում: Տվյալ առումով հետաքրքրական է հատկապես 1967 թ. պատերազմը, որը տևեց ընդամենը վեց օր: Իսրայելական հրամանատարությանը հաջողվեց ապահովել զորքերի ծածուկ կենտրոնացում և անակնկալ հարձակում:

1967 թ. հունիսի 5-ին Իսրայելի ժամանակով ժամը 07.45-ին հնչեցին քաղաքացիական պաշտպանության ահազանգերը, Իսրայելի օդուժն սկսեց «ֆոկուս» օպերացիան: Նա եգիպտական օդանավակայանների վրա ձեռնարկեց 12 զանգվածեղ հարձակում[8]: Ժամը 08.45-ին իսրայելական օդուժը

[7] Տես *Г. К. Жуков.* Воспоминания и размышления. В 2-х томах, т. 1. М., 2002, с. 363:

[*] Ժամանակի կրճատումը ռազմական գործում ամենակարևոր ձեռքբերումներից էր, որին հասնելու համար կատարվել էր զինված ուժերի կառավարման համակարգի խորքային բարեփոխում: Դրան հնարավոր եղավ հասնել միայն պատասխանատուների բարձր պրոֆեսիոնալիզմի, պարտականությունների հստակ իմացության ու կատարման, ամբողջ պետական համակարգի հստակ աշխատանքի, զինված ուժերի մեծ մոբիլության և այլ ձեռնարկումների շնորհիվ:

[8] Տես *Jeremy Bowen.* Author interview with Moredechai Hod, May 7, 2002. “Six Days: How the 1967 War Shaped the Middle East”. London, 2003, P. 99:

երկու հաջորդական հարվածներ հասցրեց Եգիպտոսի հիմնական ռազմաօդային զորակայաններին: Այդ հարվածների հետևանքով երկու-երեք ժամում ոչնչացվեցին հակառակորդի ռազմաօդային ուժերի 65 %-ը և 16 օդանավակայանի թռիչքուղիները: Դրանից հետո օդուժը ձեռնամուխ եղավ ցամաքային զորքերին աջակցմանը: Իսրայելի ռազմական ինքնաթիռները, որոնք հսկում էին Միջերկրական ծովը, նախքան դեպի Եգիպտոս թեքվելը, ցածր էին թռչում՝ խուսափելով ռադիոտեղորոշումային հայտնաբերումից, մինչդեռ մյուսները թռչում էին Կարմիր ծովի վրայով[9]:

Իսրայելի զորքերը, որոնք կենտրոնացած էին Եգիպտոսի հետ սահմանում, իրենց կազմում ունեին 6 տանկային խմբավորում, 1 հետևակային խումբ, 1 մոտոհետևակային միավորում, 3 խումբ պարաշյուտիստ-դեսանտայիններ: Քանի որ այս խմբերը թվապես համարժեք էին բրիգադների, ապա ընդհանուր հաշվով կային 70000 զինծառայող և 700 տանկ, որոնք ընդգրկված էին 3 դիվիզիայում: Պատերազմի նախորդ գիշերը նրանք ծածուկ կերպով կուտակվել էին սահմանի մոտ՝ քողարկելով իրենց դիրքերը և պահպանելով ռադիոլռություն, մինչև որ կիրամայվեր գրոհել: Այս ուժերը թվապես զգալիորեն փոքր էին եգիպտական ուժերից:

Իսրայելական բանակի ամենահյուսիսային ստորաբաժանումը, որը բաղկացած էր 3 խմբավորումից, և որը գլխավորում էր Իսրայելի ամենանշանավոր հրամանատարներից մեկը՝ գեներալ-մայոր Իսրայել Թալը, սահմանը հատեց Նահալ Օզին հակադիր և Խան Յունիսից դեպի հարավ գտնվող երկու կետերից: Խմբավորումներն առանց կրակը դադարեցնելու սրարշավ առաջ ընթացան՝ նպատակ ունենալով առավելագույնս օգտվելու անակնկալ հարվածի արդյունքից: Թալի զորքերը գրոհեցին Ռաֆահ Գեփի ուղղությամբ, յոթ մղոնանոց մի տարածության, որով անցնում է Սինայով դեպի էլ-Քանթարահ, էշ-Շարքիյյա և Սուեզի ջրանցք տանող երեք ուղիներից ամենակարճը: Եգիպտացիներն այստեղ ունեին 4 գնդերի հավասարազոր խումբ՝ պաշտպանված ականադաշտերով, ստորգետնյա բունկերներով, քողարկված կրակակետերով և խրամատներով: Երթուղու երկու կողմերի տարածքներն անանցանելի էին: Իսրայելը ծրագրել էր ընտրված վայրերում եգիպտացիներին հարվածել կենտրոնացված զրահատեխնիկայով[10]:

Ի սկզբանե առաջխաղացումը հանդիպեց չնչին դիմադրության, քանի որ եգիպտական հրամանատարությունը ենթադրում էր, թե դա գլխավոր հարձակմանն աջակցելու համար ձեռնարկված դիվերսիա էր: Այդուհանդերձ, դիմադրություն եղավ, և իսրայելցիները ծանր կորուստների գնով գրավեցին եգիպտական դիրքերն ու չորս ժամից էլ քիչ ժամանակում հասան Խան Յունիսի երկաթուղու հանգույց[11]:

---

[9] Տես *M. Oren.* The War: Day One, June 5. "Six days of war: June 1967 and the Making of the Modern Middle East". Oxford, 2002, PP. 176-188:

[10] Տես նույն տեղում, էջ 178:

[11] Տես նույն տեղում, էջ 181:

Իսրայելական ուժերը բաց ճանապարհով շարունակեցին առաջխաղացումը դեպի Արիշ: Արդեն ուշ երեկոյան 79-րդ տանկային գումարտակի տարրերն անցան յոթ մղոն երկարությամբ Ձիրադի կիրճով, որը պաշտպանում էր եգիպտական 112-րդ հետևակային գումարտակի լավ դիրքավորված զորքը: Եգիպտացիներն ունեցան մեծաթիվ զոհեր ու ծանր տանկային կորուստներ, իսրայելցիները՝ ավելի քիչ: Իսրայելական բանակն իր ռազմագիտորեն հիմնավորված, «գրագետ» գործողությունների շնորհիվ ձեռք էր բերում հաջողություններ:

Հաջորդ օրը օդային ճանապարհով օգնություն ստանալուց հետո իսրայելցիները մտան Արիշ, գրավեցին օդանավակայանը, ապա և քաղաքը[12]:

Գեներալ-մայոր Արիել Շարոնի գլխավորած 38-րդ տանկային դիվիզիան հարավում հարձակվեց ՈՒմ-Կատեֆի վրա, որը գեներալ-մայոր Սաադի Նագիբին ենթակա 16000-անոց զորքի՝ եգիպտական երկրորդ հետևակային դիվիզիայով պաշտպանվող, ռազմագիտորեն ամրակայված տարածք էր: Եգիպտացիներն ունեին նաև կործանիչ տանկերի գումարտակ և տանկային գունդ:

Հաջորդ երկու օրերին (հունիսի 6 և 7) բոլոր երեք իսրայելական դիվիզիաները շտապեցին դեպի արևմուտք:

Հունիսի 7-ին Իսրայելն սկսեց Շարմ-էլ-Շեյխի գրավումը՝ իսրայելական ծովուժի ներգրավմամբ ձեռնարկելով հետախուզում: Երեք հրթիռային նավեր մոտավորապես ժամը 4.30-ին կրակ բացեցին եգիպտական ափամերձ մարտկոցների ուղղությամբ, մինչ պարաշյուտիստներն ու կոմանդոսները պատրաստում էին ուղղաթիռներն ու «Նորդ Նորատլաս» տրանսպորտային օդանավը՝ Ալ-Տուրի վրա հարձակվելու համար:

Քաղաքը դեռ նախորդ օրը մեծ մասամբ դատարկվել էր և շատ արագ գրավվեց: Պաշտպանության նախարար Դայանը ժամը 12.15-ին հայտարարեց, որ Տիրանի նեղուցը՝ որպես միջազգային ծովային ուղի, անխտիր բոլոր նավերի համար բաց է[13]:

Հունիսի 8-ին Իսրայելը, հետևակային միավորումներ ուղարկելով Ռաս Սուդար թերակղզու արևմտյան ափ, ավարտեց Սինայի գրավումը:

Իսրայելական բանակի հաջողության գրավականը անակնկալ հարձակումն էր: Նա լայնորեն կիրառում էր նորամուծական մարտավարական հնարներ: Սրան, իհարկե, պետք է գումարել իսրայելական բանակի ներդաշնակ գործողությունները, հուսալի ու լավ կառավարվող կապը, մինչդեռ եգիպտական զորքերն այս հարցերում թերացել էին:

Իսրայելի ՑՁ-ն լայնորեն կիրառեց շրջանցումներ, ուղղաթիռային զորէջք ճակատից ոչ մեծ հեռավորությամբ գտնվող վայրերում, ինչպես նաև տանկային շարասյուններով ճեղքում այն տեղամասերում, որոնք համարվում էին տանկերի համար անանցանելի, և հակառակորդն այստեղ պաշտպանութ-

[12] Տես նույն տեղում, էջ 202, “Six Day War”. “Israeli-weapons.com” (http://www.israeli-weapons.com/history/six_day_war/SixDayWar.html):

[13] Տես *Մ. Օրեն,* Նշ. աշխ., էջ 248:

յուն չէր կազմակերպել: Երեք օրում իսրայելական ուժերը ճեղքեցին ճակատը, անցան եգիպտական զորքերի թիկունք և շրջապատեցին նահանջող հակառակորդին:

1973 թ. պատերազմում, որը կոչվում էր Դատաստանի օրվա պատերազմ, արաբական պետություններին հաջողվել էր անակնկալի բերել Իսրայելին և պատերազմի սկզբում արագ հարձակում կազմակերպել:

Այդ պատերազմում Սիրիական ռազմաճակատում ծավալած մարտական գործողություններն առաջին իսկ օրից ունեին ավելի սաստիկ բնույթ: Դա հասկանալի է, քանի որ տվյալ ուղղությունն Իսրայելի համար ավելի վտանգավոր էր: Այստեղ տեղի է ունեցել Երկրորդ աշխարհամարտից հետո ամենամեծ տանկային ճակատամարտը, որին արաբական կողմից մասնակցում էին մոտավորապես 1300 խորհրդային «Տ-55» և նոր «Տ-62» տանկ: Դրանց դիմակայում էին ընդամենը 180 իսրայելական տանկ[14]: Այսինքն՝ սիրիական բանակն ուներ ռազմավարական խնդիր. գրավել Գոլանի բարձունքները, ապա ներխուժել Իսրայելի համար կենսական նշանակություն ունեցող տարածքներ և սպառնալ պետության գոյությանը: Քանի որ Սինայի թերակղզում ձեռնարկված մարտական գործողությունները Իսրայելից բավական հեռու էին, ապա նրա համար պակաս վտանգավոր էին: Եթե Գոլանում իսրայելական պաշտպանությունը ճեղքվեր, ապա սիրիական զորքերն առանց որևէ խոչընդոտի մի քանի ժամում կհայտնվեին երկրի կենտրոնում:

Ինչպես արդեն նկարագրել էինք[15], պահեստազորի զինվորները զորակոչվելուց հետո իսկույն նետվում էին սիրիական ճակատ, ինչն էլ եղավ Սիրիայի դեմ հաղթանակի կերտման որոշիչ ու ակներև ժամանակային գործոն:

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ

1998 թ. դեկտեմբերի 20-ին դաշնակից ուժերը ևս հարվածներ հասցրին Իրաքին («Անապատի աղվես» օպերացիա): Դրանով փաստվեցին ռազմավարության ու օպերատիվ արվեստի զարգացման ուղղությունները, որոնք նկատելի էին 1990-ական թվականների կեսից, և ի հայտ եկան նորերը:

Օպերատիվ արվեստի տեսության ու պրակտիկայի տեսանկյունից առավել կարևոր և հետաքրքրական են օպերացիաների վարման հետևյալ նոր միտումները.

1. Գործողություններն սկսվեցին առանց Իրաքի սահմանի մոտ նախօրոք լրացուցիչ ուժերի տեղաբաշխման[16]: Ընդ որում, ծովային, օդային և

[14] Տես *Edgar O'Ballance.* No Victor, No Vanquished: The Yom Kippur War. Barrie & Jenkins Publishing, 1979, Chap. 7: “The Syrians attack”, PP. 119–146:

[15] Տես *Ա. Կ. Հովհաննիսյան*, Ճկուն և ստատիկ պաշտպանության խնդիրները նոր սերնդի պատերազմներում. դիտարկում ՀՀ ՊՆ տեսլականի համատեքստում: «ՀԲ», 2018, հմ. 4:

[16] Տես *А. А. Кольтюков, А. Ф. Маслов и др.* Военное искусство в локальных войнах и вооруженных конфликтах. М., 2009, с. 69:

ցամաքային խմբերի մեծացումը կատարվեց զանգվածային հրթիռաավիացիոն հարվածին զուգընթաց: Գործնականում երկու օրում տարածաշրջանում ծավալվեցին ուժեր ու միջոցներ, որոնք թվապես բազմակի գերազանցում էին սկզբում եղած արժեքները: Ըստ այդմ կարող ենք եզրահանգել, որ զորքի խմբավորումների հարմարեցման (ադապտացման) տևողությունը նվազում է (ըստ էության՝ չկա) և կատարելագործվում են ուժերի կուտակման միջոցները: Իսկ մարտերին հընթացս կատարվող զորամուտը պաշտպանվող կողմին զրկում է ռեզերվներն օգտագործելու հնարավորությունից: Ժամանակային խնդիրն ստանում է ռազմավարական նշանակություն:

2. Հրթիռների առաջին արձակումները և ինքնաթիռների մարտական թռիչքները իրաքցիների համար միանգամայն անսպասելի էին: Որպես արդյունք՝ հենց առաջին հարվածը եղավ ամենաարդյունավետը: Սա, մի կողմից, պայմանավորված էր իրաքյան ուժերի անզգուշությամբ, մյուս կողմից՝ շարժուն, նոր դիրքեր զբաղեցրած նշանակետերի հայտնաբերման ու խոցման ասպարեզում ամերիկյան հարվածային միջոցների դեռ ոչ այնքան բարձր մակարդակով: Դա նշանակում է, որ մեծանում է ռազմական գործողությունների հանկարծակիության նշանակությունը, քանի որ առաջին հարվածը ձեռնարկվում է եղած ուժերով ու միջոցներով: Ակնհայտ է, որ մարտապատրաստ խմբերով ռազմական գործողությունների ձեռնարկման այս ձևերը հիմնական են լինելու ոչ միայն նման մասշտաբի ակցիաներում:

Պատերազմներում սա առհասարակ հեղափոխական երևույթ է: Առաջին հարվածը հասցնել առանց նախապես ուժեր կուտակելու հնարավոր է միայն համապատասխան ուժեր ունենալու և դրանց բարձր աստիճանի պատրաստության դեպքում:

Այս խնդրին անդրադարձել է նաև ռուսական 58-րդ բանակի հրամանատար գեներալ Ա. Ն. Խրուլյովը, որը 2008 թ. փաստացի հաղթեց Վրացական բանակին: Նա պատմում է, որ վրացական բանակը լայնորեն պատրաստվում էր պատերազմի: Ըստ նրա՝ վրացական ԳՇ-ն կարող էր համարել, թե ռուսական զորքերը ծավալուն զորավարժություններից նոր էին վերադարձել իրենց մշտական տեղաբաշխման վայրերը և չէին կարող արագորեն նախապատրաստվել նոր օպերացիայի, իսկ տեղանքը խիստ բարդ էր, և շատ դժվար էր կազմակերպել արագ զորաշարժ: Սակայն ռուսական զորքը կատարել է իր խնդիրը. փոքր խմբերով արագորեն մարտի բռնվելով՝ վրացական բանակին չի թողել ամրանալ Ցխինվալում[17]: Խրուլյովի այս օրինակը ուսանելի է մեզ համար նաև այլ պատճառով: Այն դասական չորրորդ սերնդի պատերազմ էր, որտեղ, սակայն, կողմերը կիրառում էին նաև նոր սերնդի լուծումներ:

Այսօր մեր իրավիճակը համանման է, մեր և հակառակորդի բանակները մեծապես զինված ու պատրաստված են չորրորդ սերնդի պատերազմների,

[17] Տես «Внезапности не было: генерал Хрулев о пятидневной войне в Южной Осетии». «Sputnik», 08.08.2018 (https://sputnik-abkhazia.ru/interview/20180808/1024661498/general-xrulev-o-pyatidnevnoj-vojne-v-yuzhnoj-osetii.html):

սակայն սահմանափակ չափերով կիրառում են նաև նոր սերնդի գործիքակազմ: Երկու կողմն էլ առաջագծում կուտակել են, անգամ հաստիքներով համալրել են այնպիսի ուժեր ու միջոցներ, որոնք առանց լրահամալրման ի վիճակի են լուծելու մարտավարական և անգամ օպերատիվ խնդիրներ: Հարկավոր է մշտապես լինել զգոն, արձագանքման ժամանակը կրճատել և հրամանատարներին տալ կայծակնային որոշումներ կայացնելու և դրանք տեղում իրագործելու հնարավորություն:

ՎԵՐՁԱԲԱՆ

Ինչպես վերը փաստեցինք, այսօր պատերազմներին կարող են պատրաստվել ծածուկ կերպով ու տևականորեն, սակայն խաղաղից բուն մարտական գործողությունների անցումը կարող է տևել շատ կարճ ու կատարվել չափազանց արագ:



Նկ. 1.

Ինչպես ցույց է տալիս այս սխեման, նոր սերնդի պատերազմները սկսվում են շատ ավելի կարճ ժամանակում: Այս անցումը երբեմն տեղի է ունենում այնքան արագ, որ պետական ու հասարակական մարմինները չեն հասցնում համապատասխան կարգով արձագանքել:

Օրինակ՝ այսօր լուծումներ գտնելու և որոշումներ կայացնելու համար հրամանատարներն ունեն շատ կարճ ժամանակ: Իսկ լուծումները, ինչպես և միջոցները, արագորեն հնանում են, այսինքն՝ հարկավոր է մտքի ու գործելակերպի մշտական ճկունություն:

20-րդ դարում այս առումով առնվազն երկու անգամ հեղափոխություն եղավ: Դեռ Առաջին աշխարհամարտի երկրորդ փուլում հասունանում էր այն մարտահրավերը, որ հրամանատարությունից որոշումների կայացման համար ավելի ու ավելի կարճ ժամանակ էր պահանջվում: Այսինքն՝ հարձակվողները կարողանում էին ավելի ու ավելի արագ լուծել բոլոր նախապատրաստական խնդիրները: Իրական հեղափոխությունը տեղի ունեցավ ԵՀՊ-ի սկզբին, երբ գերմանական բանակը ավելի քան կրկնակի կրճատեց այդ ժամանակը: Հետո Սառը պատերազմի տարիներին այդ կրճատումը թեև դանդաղորեն, սակայն իրագործվեց տեխնիկական միջոցների զարգացման և կազմակերպչական այլ գործոնների շնորհիվ:

Սակայն իրական նոր հեղափոխություն կատարվեց 1990-ականներին և նոր դարի առաջին տարիներին: Այսօր այդ նոր հեղափոխության շնորհիվ որոշումների կայացման գործում համակարգերը պիտի արձագանքեն կայծակնային արագությամբ և լինեն ապակենտրոնացված, այսինքն՝ օժտված ցանցային ինքնուրույնությամբ, ինչպես նշված է ՀՀ պաշտպանության նախարարի տեսլականում:

Այստեղ կարևոր ենք համարում նշել, որ մենք պետք է հատկապես զարկ տանք ապակենտրոնացված կառավարմանը, «հրամանատրում առաջադրանքի միջոցով» սկզբունքի ակտիվ ներդրմանը, ակտիվ պահեստազորին[18], օդուժի զարգացմանը, մեծ արագաշարժությամբ օժտված ու քանակապես փոքրաթիվ ցամաքային զորքերին, փոքր գրոհող խմբերի մարտավարությանը:

---

[18] Տես *Ա. Մ. Պետրոսյան, Գ. Բ. Ղույյան*, Զինվորական ծառայության կազմակերպման որոշ խնդիրների այլընտրանքային լուծումներ և ակտիվ պահեստազորի ստեղծման ու կատարելագործման հարցեր: «ՀԲ», 2018, հմ. 1–2:

АРМЕНИЯ НА ПУТИ К ПРЕВЕНТИВНОМУ УДАРУ В КОНФЛИКТЕ С АЗЕРБАЙДЖАНОМ

Анализ последствий гонки вооружений между Арменией и Азербайджаном

Л. А. НЕРСИСЯН, военный аналитик, шеф-редактор журнала «Новый оборонный заказ. Стратегии»

В последние годы гонка вооружений между Арменией и Азербайджаном достигла беспрецедентного уровня. При этом Баку, обладая большими финансовыми возможностями, в большинстве случаев задает направление в этой гонке, а Ереван в меру своих возможностей отвечает на эти закупки, при этом полагаясь не на количество, а на некую асимметричность, так как даже с учетом льготных условий поставок из России финансовые средства все равно не достаточны.

Если посмотреть на динамику закупок вооружения, можно отметить как количественное, так и качественное превосходство Азербайджана по большинству категорий вооружения – приобреталось в основном самое современное оружие, такое как танки Т-90С, реактивные системы залпового огня (РСЗО) «Смерч», боевые машины пехоты БМП-3, тяжелые огнеметные системы ТОС-1А, израильские БПЛА всех классов и многое другое. Армения до 2016 года в основном полагалась на поставки с хранения ВС России, и речь шла, как правило, о технике советского производства – достаточно серьезно была усилена ПВО страны за счет поставок не менее 5 дивизионов зенитных ракетных комплексов (ЗРК) С-300ПС/ПТ-1, приобреталась и бронетехника, такая как танки Т-72 и боевые машины пехоты БМП-2.

Надо отметить, что ВС Армении сделали серьезную ставку на развитие своих ракетных подразделений – еще в середине 1990-х были получены 8 пусковых установок (ПУ) Р-17 «Эльбрус», позже было приобретено некоторое количество оперативно-тактических ракетных комплексов (ОТРК) «Точка». В 2016 году впервые были продемонстрированы действительно современные вооружения – ОТРК «Искандер», РСЗО «Смерч». Позже появилась информация о закупке противотанковых ракетных комплексов (ПТРК) «Корнет», а также переносных зенитных ракетных комплексов (ПЗРК) «Игла-С» и «Верба». Ожидаются поставки войсковых ЗРК малого радиуса действия «Тор-М2».

Азербайджанская сторона также сделала акцент на развитие дальнобойного и высокоточного вооружения. За последние годы Азербайджан заполучил ОТРК «Точка-У» (максимальная дальность пуска до 70 км) и LORA (максимальная дальность пуска до 250−300 км), тяжелые РСЗО «Полонез» (максимальная дальность пуска до 200 км), «Смерч» (максимальная дальность пуска до 90 км) и T-300 Kasirga (максимальная дальность пуска не менее 100 км, возможно, есть ракеты с повышенной до 180 км дальностью полета). В дополнение к этим системам Азербайджан получил либо получит крылатые ракеты SOM-1B, которые из-за своей низкой высоты полета являются очень непростой целью для системы противовоздушной обороны (ПВО).

Учитывая большее количество тяжелых РСЗО в распоряжении у Баку и в целом тенденцию к наращиванию количества дальнобойного оружия, происходит серьезное расшатывание устоявшегося баланса – мы приходим к тому, что та сторона, которая первой нанесет неожиданный массированный ракетно-артиллерийский удар по ключевым военным объектам противника, получит очень серьезное преимущество, ведь в мирное время большая часть военной техники находится на базах с известными координатами. Такие статичные цели становятся в современных условиях очень уязвимыми.

У армянской стороны не было и нет мотивов развязывать новую войну в Нагорном Карабахе, однако именно эти тенденции могут привести к тому, что у Еревана не будет иного выбора, как наносить превентивный удар по азербайджанским военным базам и аэродромам. В ином случае, удар со стороны Баку, который может случиться в любое время, очень сильно ухудшит прогнозы для армянской армии.

В связи с этим армянской стороне необходимо пересмотреть свою доктрину, которая ранее всегда была сугубо оборонительной. Необходимо иметь четкий план активных наступательных действий, иметь подготовленную для этого инфраструктуру, а также регулярно проводить учения и в этом ключе. Подобный подход требует от Еревана и соответствующего направления в закупках военной техники – должен быть создан достаточный запас ракет для ОТРК «Точка» и «Искандер», необходимо приобретать больше самоходных артиллерийских установок и тяжелых РСЗО «Смерч». Для повышения точности и эффективности ударов на большие расстояния следует обратить внимание и на беспилотники класса MALE (средневысотный полет большой продолжительности), способные вести разведку на всей территории противника. Именно за этой категорией оружия, возможно, стоит попробовать обратиться к Израилю – в России MALE беспилотники пока только разрабатываются, китайские имеют сомнительное качество, а американские сторонам азербайджано-карабах-

ского конфликта не поставляются. Возможна попытка самостоятельной разработки подобного беспилотника.

Другим важным шагом должно стать создание собственной истребительной авиации. Имеющиеся на вооружении ВВС Армении штурмовики Су-25 в своей нынешней конфигурации не могут реально влиять на ход войны, тогда как приобретение эскадрильи многоцелевых истребителей Су-30СМ, способных эффективно выполнять как ударные задачи, так и задачи ПВО, позволит армянской стороне быть более гибкой и диктовать свои собственные условия на поле боя. Надо отметить, что Су-30СМ способен нести как крылатые ракеты Х-59МК2 с максимальной дальностью до 285 км, так и противорадиолокационные ракеты Х-58У, способные бороться с радарами противника с дистанции до 200 км. Что касается штурмовиков, то они нуждаются в глубокой модернизации до уровня Су-25СМ3, после чего они также будут способны нести современное высокоточное вооружение.

С целью же повышения устойчивости собственных вооруженных сил, в том случае, если все-таки Азербайджан первым нанесет массированный удар, следует перевести наиболее важные типы военной техники в режим постоянного патрулирования, чтобы они не были уничтожены на базах. Конечно, это связано с серьезными финансовыми затратами, но необходимо сохранять потенциал для ответного массированного удара.

Для практической реализации концепции превентивного удара можно создать шкалу, подобную американской *DEFense readiness CONdition (DEFCON).* При уровне готовности, соответствующей *DEFCON 1* (война неизбежна), следует незамедлительно наносить превентивный удар по противнику и начинать наступательную операцию.

Что касается преимуществ наступательной доктрины и элементов превентивного удара, то к ним можно отнести:

- возможность переноса боевых действий на территорию противника;
- возможность большего контроля над уровнем эскалации;
- возможность не допустить затягивания боевых действий;
- меньшая привязанность к статичной оборонительной инфраструктуре.

Однако есть и недостатки:

- потери наступающей стороны могут быть заметно больше;
- большие затраты при закупках вооружения и военной техники;
- политические риски.

Как итог, можно выделить несколько основных приоритетных направлений развития ВС Армении:

- повышение уровня мобильности подразделений ВС РА и АО Арцаха;
- приобретение многоцелевой авиации в сочетании с высокоточным оружием «воздух-поверхность»;
- расширение возможностей сухопутных огневых средств за счет использования управляемых боеприпасов (152-мм снаряды «Краснополь-Д» и т.п.);
- работа над элементами АСУ, включающей в себя все рода войск;
- повышение возможностей ведения боевых действий ночью;
- работа над концепцией легких мобильных тактических групп.

Отдельно стоит отметить, что необходимо вести работу по информированию мировых центров силы. Подобный, на первый взгляд, более агрессивный подход армянской стороны не должен стать новостью или неожиданностью ни для кого. И, судя по всему, в Ереване теперь действительно начали осознавать, что, уйдя в глухую оборону, добиться чего-то положительного будет очень сложно. Об этом говорят ряд жестких заявлений министра обороны Армении Давида Тонояна и министра обороны Нагорно-Карабахской Республики Левона Мнацаканяна. Их поддержал и премьер-министр Армении Никол Пашинян.

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՏԱՐԱԾՔ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Գ. Վ. ՏԱՎԱՐԱԾՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետ

Ադրբեջանը ոչ մի կերպ չի կարողանում համակերպվել այն մտքի հետ, որ Ղարաբաղյան հակամարտության զինված փուլում կրել է ծանր պարտություն: Ուստի և նրա ղեկավարությունը, առաջնորդվելով առաջին հերթին միջազգային ասպարեզում ու ներքին քաղաքական-պետական դաշտում «իր հեղինակությունը հաստատելու» մտադրությամբ, ցանկանում է հասնել ռազմական ռևանշի: Ըստ այդմ նա անընդհատ խախտում է իր իսկ հայցած կրակի դադարեցման ռեժիմն ու փոքրաթիվ դիվերսիոն խմբերով փորձում է ներխուժել մեր դիրքերը՝ դրանով իսկ ձգտելով բթացնելու մեր զգոնությունը և հարմար պահի անցնելու մասշտաբային ռազմական ներխուժման, սանձազերծել է սպառազինությունների մրցավազք, կիրառում է հիբրիդային պատերազմի տարրեր, Թուրքիայի հետ համատեղ ձեռնարկել է Հայաստանի և Արցախի տնտեսական ու տրանսպորտային շրջափակում՝ ձգտելով այդ եղանակով հյուծել նրանց տնտեսությունը և հարուցել իշխանություններից բնակչության դժգոհությունը, մեր դեմ վարում է տեղեկատվական պատերազմ՝ նպատակ դնելով միջազգային հանրությանը մեզ ներկայացնելու որպես ագրեսորի և «խոստանալով ազատագրել ադրբեջանցիների պատմական մայրաքաղաք Երևանը»[1]:

Այսպիսով՝ Ղարաբաղյան հակամարտության չլուծվածությունը Հայաստանի համար ստեղծում է բազմապիսի պրոբլեմներ ու սպառնալիքներ, որոնք վտանգում են մեր պետության ու հասարակության ոչ միայն կայուն զարգացումը, այլև ֆիզիկական գոյությունը՝ բարդ խնդիրներ առաջադրելով պաշտպանական համակարգին, տնտեսությանը և այլ ոլորտների:

Պաշտպանության կազմակերպման տեսակետից բարդությունը գերազանցապես պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. փոքր տարածք, որը չի ապահովում պաշտպանության ռազմավարական խորություն և ծրագրված նահանջի հնարավորություն,
2. փոքրաթիվ բնակչություն, ինչը չի ապահովում զանգվածային բանակ ստեղծելու համար անհրաժեշտ զորահավաքային ծավալում,
3. սուղ նյութական ու ֆինանսական ռեսուրսներ, ինչը հնարավորութ-

[1] Տես, օրինակ, «Ильхам Алиев: Ереван – исконно азербайджанская территория». ИА «REGNUM», 09.02.2018 (https://regnum.ru/news/2378417.html):

յուն չի տալիս ապահովելու անհրաժեշտ քանակությամբ սպառազինություն, ռազմական տեխնիկա ու զինամթերք:

Դրա հետ մեկտեղ Հայաստանը իրավունք չունի պարտվելու և ո՛չ մի պատերազմում, ուստի պետք է ընտրի ճիշտ պատերազմական ռազմավարություն:

Հայտնի է, որ գոյություն ունեն երկու տիպի պատերազմավարություններ՝ ջախջախման և հյուծման[2]:

Ջախջախման ռազմավարությունը ռազմական գործողությունների այն եղանակն է, «որի հիմքում դրված է հաղթանակի նվաճումը հակառակորդի լիակատար կործանման, նրա զինված ուժերի ոչնչացման և ռազմատնտեսական հիմքերի խարխլման միջոցով: Առաջներում այն կապված է եղել ակտիվ տարաշարժի և մեկ-երկու գլխավոր ճակատամարտերում կամ արագընթաց ռազմարշավի արդյունքներով հակառակորդի հիմնական ուժերի ջախջախիչ խորտակման հետ»[3]:

Ջախջախման ռազմավարությամբ առաջնորդվելու առավել վառ օրինակներ են Նապոլեոնի պատերազմավարությունը Եվրոպայում 1805, 1806, 1807 և 1809 թթ., ինչպես նաև Մոլտկեի կիրառած ռազմավարությունը 1870–1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմում[4]: Ռուս ականավոր ռազմագետ գեներալ Ա. Սվեչինը նշում է, որ ջախջախման ռազմավարությունը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ եղած միջոցները լիովին համապատասխանում են նպատակադրմանը[5]:

Գերմանացի հռչակավոր ռազմագետ Կառլ ֆոն Կլաուզևիցը ևս նշում է, որ «եթե մենք դիմենք կոնկրետ օրինակների, ապա ստիպված կլինենք խոստովանել, որ մի ամբողջ շարք... դեպքերում, այն է՝ երբ հակառակորդն զգալիորեն ավելի ուժեղ է, նրա *ջախջախումը* կլիներ երևակայության խաղ»[6]:

Որպես ջախջախման ռազմավարությանը հակակշիռ՝ Կլաուզևիցը նշում է հետևյալ երեք ճանապարհները, որոնք տանում են դեպի հակառակորդի ուժերի ծախսի մեծացում. *ներխուժում*, այսինքն՝ հակառակորդի տարածքի զավթում, բայց ոչ այն իր ձեռքում պահելու, այլ այնտեղից ռազմատուգանք գանձելու կամ նույնիսկ ամայացնելու նպատակով, *օպերացիաների ուղղվածություն հակառակորդի վնասների մեծացմանը* և *թշնամու հյուծում*, որն այս երեքից առավել կարևորն է, քանի որ առավել տարածված ուղղությունն է: Ընդսմին նա նշում է. «Հյուծում ասելով մենք նկատի ունենք գործողությունների տևականության շնորհիվ հակառակորդի ֆիզիկական ուժերի ու կամքի հետզհետե վրա հասնող սպառումը»[7]:

---

[2] Այս մասին հանգամանորեն տես *Հ. Հ. Սվեչին*. Стратегия. Второе издание. М., 1927, сс. 173–182:

[3] Տես «Война и мир в терминах и определениях». Под общей редакцией Дмитрия Рогозина. М., 2003, сс. 5–18:

[4] Տես *Ա. Սվեչին*, Նշ. աշխ., էջ 173–175:

[5] Տես նույն տեղում, էջ 174:

[6] *Կ. Կլաուզևից*. О войне. Перевод с нем. А. Рачинского. М., 1994, с. 61.

[7] Նույն տեղում, էջ 65:

Գերմանացի մեկ այլ ռազմական պատմաբան Ֆրանց Մերինգը, համեմատության մեջ դնելով ջախջախման ու հյուծման ռազմավարությունները, դեռ նախքան առաջին աշխարհամարտը արդարացի կերպով գրել է. «Հյուծմանը նպատակաուղղված պատերազմական ռազմավարությունը, թեև ունի պատերազմի վարման ավելի մեղմ տեսք, դրա անհամեմատելիորեն ավելի դաժան ձևն է:... Այդ է պատճառը, որ ժամանակակից ռազմամոլության երկրպագուները որոշակիորեն իրավացի են, երբ պնդում են, թե այն պատերազմը, որն ընթանում է արագ ու կարճատև հարվածների տեսքով, ավելի տանելի է, քան առանց վճռական բախումների ձգվող պատերազմը: Նրանց հիմարությունը ծնունդ է առնում այն պահին, երբ նրանք պնդում են, թե ծովում ու ցամաքում կուտակված հսկայական սպառազինությունը ... ոչնչացման պատերազմի ռազմավարության անկասկածելի միջոցն է:... Միջազգային սպառազինման արդի վիճակում ոչ մի տերություն կամ տերությունների ոչ մի դաշնադրություն չի կարող հուսալ, որ իր ուժերի գերազանցության շնորհիվ կհաջողի նվաճել այլ տերություն...: Նրանք բոլորն էլ գործում են փոխադարձ հյուծման ուղղությամբ»[8]:

Հյուծումը՝ որպես ռազմավարական մեթոդ, կարող է իրագործվել տարբեր բնագավառներում, առաջին հերթին՝ տնտեսական, քաղաքական, ռազմական, տեղեկատվական-հոգեբանական ոլորտներում: Ընդսմին զինված պայքարի մեթոդների զարգացման միտումները վկայում են, որ տեղի է ունենում՝

- ժամանակի գործոնի և տեղեկատվական ընդդիմամարտության դերի աճում, ինչի հետևանքով գերակա է դառնում ոչ թե ռազմական ու տնտեսական օբյեկտների ոչնչացումը, այլ պետական ու ռազմական կառավարման համակարգի ճնշումը,
- հնարավոր վնասի անընդունելիության շեմի նվազում,
- գերճշգրիտ զենքի դերի աճում, ինչի հետևանքով նվազարկվում են հակառակորդին պատճառվող էկոլոգիական (և՛ բնական, և՛ հասարակական) վնասների մասշտաբները,
- մարտական գործողությունների վարման ոչ շփումային եղանակների կիրառման միտումների գերակայումը,
- հակառակորդի զորքերի ու բնակչության վրա կրակային ներգործության հզորության և ինտենսիվության աճումը,
- ջախջախման ռազմավարության փոխարեն հյուծման ռազմավարության գերադասումը,
- շտաբների ու զորքերի համակարգչայնացումը, ինչը հնարավորություն է տալիս կրճատելու հետախուզումից մինչև հարվածը եղած փուլաշրջանի տևողությունը[9]:

Ընդսմին պատերազմավարության եղանակի ընտրությունը կատարում է տվյալ պետության քաղաքական ղեկավարությունը. «քաղաքականության խնդիրն է ապագա պատերազմի որոշարկումը ոչ միայն որպես պաշտպա-

[8] *Ֆ. Меринг*. Очерки по истории войн и военного искусства. М., 1956, сс. 86–87.
[9] Տես *Хрусталев*. Концептуальные основы военной безопасности государства:

նության կամ հարձակման, այլև որպես հյուծման կամ ջախջախման»[10]: Դրա հետ մեկտեղ պետք է հիշել, որ եթե պայքարում հարձակումն ու պաշտպանությունը տեղի են ունենում միաժամանակ (մի կողմի հարձակում, մյուսի՝ պաշտպանություն), ապա մի կողմի իրականացվող ջախջախումը մյուս կողմին պարտադրում է դիմադրել ըստ ջախջախման տրամաբանության[11]:

Եվ այսպես՝ ռազմական գործի խոշոր տեսաբանների ներկայացրած պնդումներից կարելի է միանշանակ կերպով անել այն եզրակացությունը, որ պետք է նախ սահմանել ապագա պատերազմի քաղաքական նպատակները և յուրային ու հակառակորդի համախումբ հզորությունների հաշվառմամբ որոշել այդ նպատակներին ռազմի դաշտում հասնելու օպտիմալ եղանակները, այսինքն՝ պատերազմի ռազմավարությունը, և դրանց հաջող իրագործման համար անհրաժեշտ միջոցները: «Պետք է հստակ կերպով պատկերացնել ապագա օպերացիաների բնույթը, պետք է որսալ, թե ինչ պահանջներ դրանք կներկայացնեն մարտավարությանը և նոր միայն կարելի կլինի ճիշտ լուծել այն խնդիրները, թե որ զորատեսակներն է իրականում անհրաժեշտ ստեղծել և ինչ հարաբերակցությամբ: Ճիշտ լուծումը կարող է ապահովել հսկայական խնայողություն, բայց հաջողությունը կժպտա միայն այն կազմակերպչին, որը վարպետացել է և՛ ռազմավարության, և՛ օպերատիվ արվեստի, և՛ մարտավարության ոլորտներում»[12]:

Դա առանձնակի կարևոր է փոքր պետությունների դեպքում, հատկապես՝ եթե նրանք ստիպված են պատերազմել իրենցից ավելի մեծ տարածքային, մարդկային, ֆինանսատնտեսական, հումքային ռեսուրսներ ունեցող պետության կամ պետությունների դաշինքի դեմ: Համախումբ հզորությունների մեծ բացասական հարաբերակցության դեպքում, հասկանալի է, չի կարող խոսք լինել ուժեղի նկատմամբ ջախջախման ռազմավարություն կիրառելու մասին: Հյուծումը ևս բառիս սովորական իմաստով չի կարող տալ ցանկալի արդյունք: Սակայն կա ելք և դրա վառ օրինակն է արդի Իսրայելի Պետության գոյության 7 տասնամյակների պատմությունը: Իսրայելը, շրջապատված լինելով թշնամական արաբական պետություններով, նրանց էապես զիջելով և՛ տարածքով, և՛ բնակչությամբ, և՛ արտադրանքի ծավալներով, կարողանում է հաջողությամբ դիմագրավել նրանց ձգտմանը՝ վերջ տալու իր գոյությանը: Առաջնորդվելով «Իսրայելն իրավունք չունի պարտվելու և ոչ մի պատերազմում» կարգախոսով՝ հրեական պետությունն այդ գաղափարին է ենթարկել իր ամբողջ պետական ու հասարակական գործունեությունը՝ մշակելով արդյունավետ մոտեցումներ ու գործելաոճ:

Իսրայելի ռազմավարական նպատակն է իր հակառակորդներին համոզել այն բանում, որ նրանց ձեռնարկած ցանկացած ագրեսիվ քայլ կանխավ դատապարտված է անխուսափելի զուգաչափ հատուցման ու անընդունելի կորուստների: Իսրայելը ձգտում է այդ նպատակին հասնելու կանխիչ հարված-

[10] Տես *Ա. Ա. Սվեչին,* Նշ. աշխ., էջ 41:

[11] Տես նույն տեղում, էջ 40:

[12] Տես նույն տեղում, էջ 129:

ների ու մարտական գործողություններն արագորեն նրանց տարածքներ տեղափոխելու ճանապարհով նրանց հետ պահել նման «անխոհեմ» նախաձեռնություններից՝ բացառելով ագրեսիայի դիմելու ցանկացած մտադրություն[13]:

Այսպես. Իսրայելի ռազմական դոկտրինը խարսխվում է այն դրույթի վրա, որ ռազմավարական խորություն չունենալու պայմաններում անհրաժեշտ է «պատերազմը վարել հակառակորդի տարածքում, սակայն՝ պատերազմի պայմանների համար»[14]: Այս միտքը դեռ 1948 թ. ձևակերպել էր Իսրայելի հիմնադիր Դավիդ Բեն-Գուրիոնը, որը մոտ 10 տարի եղել է վարչապետ և ռազմական նախարար: Ըստ էության, Իսրայելի ռազմական դոկտրինի հիմնադրույթներն իրենց ձևակերպման օրից մնում են անփոփոխ՝ խարսխվելով հետևյալ պնդումների վրա.

– Իսրայելը հարևան պետություններին զիջում է բնակչության թվով և մոտ ապագայում մշտապես ստիպված կլինի պատերազմ վարել թվապես գերազանցող հակառակորդի դեմ,
– հարևանների հետ վեճի պատճառը ոչ թե սահմանների հարցում անհամաձայնությունն է, այլ նրանց տեսակետից Իսրայելի գոյության անընդունելիությունը. Իսրայելի հակառակորդները միշտ վարելու են նրա ոչնչացմանը միտված պատերազմներ,
– Իսրայելը, հաշվի առնելով աշխարհագրական իրողությունը (ամենանեղ մասում ծովից մինչև սահման հեռավորությունը 14 կմ է, սահմանի մերձակայքում գտնվում են մեծ թվով բնակավայրեր, այդ թվում և խոշոր), ինչպես նաև հակառակորդի գերազանցությունը կենդանի ուժի և տեխնիկայի տեսակետից, չի կարող պատերազմում ակնկալել հաղթանակի նվաճում թշնամու ոչնչացման միջոցով, այլ նրա ռեալ նպատակը պետք է լինի հակառակորդի զինված ուժերին այնպիսի վնասի պատճառումը, որի հետևանքով դրանք շարքից դուրս գան հնարավորինս երկար ժամանակով[15]:

Առաջնորդվելով այս դրույթներով՝ Իսրայելը ինքնապաշտպանության համար կիրառում է երկու հնար. մարտական գործողությունների արագ տեղափոխում հակառակորդի տարածք և կանխիչ *(превентивный; prevention)* կամ առաջանցիկ *(упреждающий; preemption)* հարված: Վերջին հնարն առնչվում է միջազգային իրավունքի նորմերին (իսկ մեզ հայտնի է, որ հենվելով համաշխարհային հրեության հսկայական ներուժի վրա՝ Իսրայելը չի խորշում անհրաժեշտության դեպքում միջազգային նորմերն ու հաստատագրումները անպատիժ կերպով խախտելուց), ուստի մենք, այդ հարցի քննարկումը թողնելով միջազգային իրավունքի մասնագետներին, կփորձենք հետազոտել առաջին հնարի զուտ ռազմական կողմերը: Հատկապես,

[13] Տես, օրինակ, *В. Г. Беспалько*. Принцип талиона в Моисеевом уголовном законодательстве. «Вестник КГУ», 2016, № 2:

[14] Տես *И. З. Фархутдинов*. Израильская доктрина о превентивной самообороне и международное право. «Евразийский юридический журнал», 2016, № 8:

[15] Տես նույն տեղում:

որ ՀՀ Պաշտպանության նախարար Դ. Տոնոյանը վերջերս հայտարարել է, որ պետք է ավելացնել հատուկ օպերացիաներ վարելու ունակ ստորաբաժանումների թվաքանակը՝ մարտական գործողությունները հակառակորդի տարածք տեղափոխելու և այնտեղ քաոս ստեղծելու համար[16]:

Նախարարի այս հակիրճ հայտարարության մեջ պարունակվում է խոր ու շատ բարդ իմաստ, որը պահանջում է լուրջ հետազոտություններ ու գնահատումներ: Բանն այն է, որ այս գաղափարը կարող է իրականացվել երկու մակարդակում՝ օպերատիվ ու ռազմավարական:

Օպերատիվ մակարդակում այն կարող է իրագործվել զորամիավորման հրամանատարի պատասխանատվության գոտում՝ հակառակորդի ուշադրությունը հիմնական հարվածի ուղղությունից շեղելու, հարվածային խմբավորման ուժերը ջլատելու՝ դրանց մի մասին իրենց իսկ թիկունքում դիվերսիոն խմբերի դեմ մարտերում ներգրավելու համար, թիկունքային ապահովման ու կառավարման համակարգի բնականոն գործունեությունը խաթարելու համար[*]:

Ռազմավարական մակարդակում խնդիրը, ինչպես վերը նշեցինք, բավական բարդ է և պահանջում է համակողմանի կշռադատում:

Այսօր Ադրբեջանը զարկ է տվել սպառազինությունների մրցավազքին՝ օգտվելով շրջափակման մեջ գտնվող Հայաստանի նկատմամբ իր ավելի բարվոք տնտեսական վիճակից ու նավթադոլարների ներհոսքից: Սպառազինությունների մինչ այդ եղած հաշվեկշիռը, որը Հայաստանին այնուհանդերձ հնարավորություն էր տալիս զսպելու հակառակորդին, այսօր էապես և անդառնալիորեն խախտվել է: Հայաստանը, Իսրայելի նման, ևս չունի պաշտպանության ռազմավարական խորություն, առաջագծից անգամ փոքր չափով զորքը հետ քաշելու հնարավորություն (սահմանի մոտակայքում կան զգալի թվով բնակավայրեր), ռեզերվային զորքերի տեղաբաշխման վայրերը գտնվում են հակառակորդի ՕՀՄ-ների համար մի քանի րոպեի հասանելիության գոտում և այլն: Անգամ զորահավաքի առաջանցիկ կազմակերպումը, եթե չուղեկցվի կանխիչ կամ առաջանցիկ հարվածով, չի կարող տալ որևէ օգուտ, քանի որ հակառակորդը իր զորահավաքով կարող է իր օգտին է՛լ ավելի մեծացնել ուժերի հարաբերակցությունը:

Նման պայմաններում, ինչպես ցույց են տվել ռազմական տեսության դասականները, որոնց աշխատություններից համապատասխան պատառիկներ բերել ենք հոդվածի առաջին մասում, խոսք չի կարող լինել հավանական հակառակորդի նկատմամբ ջախջախման ռազմավարություն կիրառելու մասին: Այդ է վկայում երկու պետությունների զինված ուժերի վերաբերյալ տվյալների համեմատությունը:

[16] Տես «Դավիթ Տոնոյան. Հաղթանակի կարևորությունը պետք է արժևորենք»: «Media max», 2019 թ. ապրիլի 8 (https://www.mediamax.am/am/news/interviews/33013/):

[*] Հարկ ենք համարում նշել, որ ժամանակին՝ ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, այս խնդիրները հաջողությամբ լուծում էին պարտիզանները, որոնք գործում էին ոչ միայն բռնազավթված խորհրդային տարածքներում, այլև գերմանացիների նվաճած այլ պետությունների սահմաններում:

Ինքնին հասկանալի է, որ ուժերի նման հարաբերակցության պայմաններում, նույնիսկ ՀՀ ԶՈՒ-ի մարտունակության մակարդակի զգալի գերազանցության պայմաններում, հակառակորդի ջախջախման կամ սովորական իմաստով հյուծման մասին խոսելը իրատեսական չէ: Սակայն, կարծում ենք, որ արժե դիտարկել հակառակորդի տարածք մարտական գործողությունների տեղափոխման ռազմավարական հեռանկարները: Շեշտենք, որ *ստորև շարադրված տեսակետներն ու գաղափարները ներկայացվում են քննարկման կարգով և պահանջում են ռազմական գործի տարբեր ոլորտների հայ մասնագետների ու փորձագետների համատեղ քննարկում*:

Հայաստանի Հանրապետությունը ո՛չ տարածքային, ո՛չ ժողովրդագրական, ո՛չ ֆինանսատնտեսական, ո՛չ նյութահումքային ռեսուրսների տեսակետից ի վիճակի չէ իր հավանական հակառակորդին ենթարկելու հյուծման: Անգամ դաշնակիցների առումով Ադրբեջանն ունի որոշակի առավելություն՝ Թուրքիայի հետ հանդես գալով որպես միևնույն ազգի երկու պետություն: Ուրեմն ի՛նչ լուրջ իրատեսական «զենք» կարող է հայությունը հակադրել իր ագրեսիվ հարևանների նկրտումներին:

Քոչվոր թուրք-ադրբեջանական ցեղերի դեմ իր դարավոր պայքարում հայ ժողովուրդը, թվապես զիջելով թշնամուն, մշտապես գերազանցել է նրան իր հոգևոր-մտածողական կարողություններով, իր կամային հատկանիշներով: Ուստի այժմ էլ հայությունը կարող է հակադրել հակառակորդին հոգու կորովը, տոկունությունը, հանուն ազգի ապագայի իր անձնականը գիտակցաբար զոհաբերելու պատրաստակամությունը և, միևնույն ժամանակ, խելքը, անձնական արիությունը: Հայտնի է, որ Սմբատ Բագրատունին բյուզանդական կրկեսի ասպարեզում, անզեն, բայց հաջողությամբ մարտնչել է իրենից տասնապատիկ ուժեղ վայրի գազանների դեմ: Նա ապավինել է իր խելքին, իր կամքին, թշնամու մասին ունեցած իր գիտելիքներին, իր հնարամտությանն ու ճարպկությանը[17]: Ասվածի վառ ապացույցն է նաև 20-րդ դարի վերջի Արցախյան ազատամարտը:

Այս դեպքում մարտական գործողությունները հակառակորդի տարածք արագորեն տեղափոխելը դառնում է հակառակորդի զսպման ռազմական-ռազմաքաղաքական խնդրի համալիր լուծման միջոցներից և պետք է կիրառվի որպես միևնույն նպատակին ծառայող, միևնույն մտահղացմամբ ընդգրկված միջոցների միասնական համակարգի տարր: Մեր կարծիքով՝ այդ մտահղացումը պետք է նպատակաուղղված լինի հաղթելու կամքից հակառակորդի զրկմանը:

Տվյալ ռազմավարական խնդիրը արդյունավետ կերպով լուծելու համար պետք է պարզ որոշել հակառակորդի «ծանրության կենտրոնը»:

Ինչպես ցույց է տալիս զինված պայքարի վերջին տասնամյակների պրակտիկան, հակառակորդի «թույլ տեղերը» որոշելու համար լայնորեն կի-

[17] Տես «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 10: Ե., 1984, էջ 453:

րառվում են Ուորդենի օղակները և Բոյդի փուլաշրջանը, կամ հանգույցը[18]:

Ուորդենի օղակները (տես նկ. 1) հնարավորություն են տալիս ժամանակակից ազգ-պետությունները ներկայացնելու մի յուրօրինակ մոդելի տեսքով:



Նկ. 1. Ուորդենի հինգ օղակների մոդելը

Այն կազմված է հինգ համակենտրոն օղակներից, որոնք արտացոլում են պետության բոլոր կենսականորեն կարևոր հատվածները. ղեկավարություն, արտադրություն, ենթակառուցվածք և հաղորդակցություններ, բնակչություն, զինված ուժեր:

Արտաքին՝ ռազմական, դաշտն ընդգրկում է մյուս բոլորին՝ պաշտպանելով արտաքին ազդեցություններից: Գաղափարն այն է, որ հակառակորդին հանձնվել ստիպելու համար անհրաժեշտ է գտնել այդ հատվածների կրիտիկական հանգույցը (կամ հանգույցները) և շարքից հանել դրանք, ինչը կհանգեցնի պետական համակարգի գործունեության կազմալուծման: Ըստ Ուորդենի՝ նման նպատակի հասնելու առավել օպտիմալ միջոցը օդային հարվածներն են, քանի որ դրանք հնարավորություն են տալիս նվազարկելու յուրային կորուստները և զերծ մնալու անմիջական բռնազավթումից, որը պահանջում է մեծ ծախսեր և կապված է զգալի ռիսկերի հետ: Տվյալ մոդելը Իրաքից հետո («Փոթորիկ անապատում» օպերացիայի «Ակնթարթային կայծակ» օդային օպերացիան, որի մտահղացման հեղինակը հենց նա էր՝ ԱՄՆ-ի ՌՕՈՒ-ի գնդապետ Ձոն Ուորդենը) լրամշակվել և փորձարկվել է Հարավսլավիայում 1999 թ.: Սերբիայում օդային հարվածներ հասցվել են ոչ միայն զորակայաններին ու սերբական բանակի տեղաբաշխման կետերին, այլև քաղաքացիական արտադրանք թողարկող ձեռնարկություններին, երկաթգծին, կամուրջներին, հեռուստակայաններին, կրոնական հաստատություններին: Դրանով, նախ, սերբ ժողովրդին պատվաստվում էր ագրեսիայից չպաշտպանվածության զգացողություն (հոգեբանական հարված), ապա և պատճառվում էր զգալի նյութական վնաս, քանի որ ենթակառուցվածքի վերականգնման համար պահանջվում էին զգալի ծախսեր[19]:

Տվյալ մեթոդը, մեր կարծիքով, կարող է օգտակար լինել նաև այն դեպքերում, երբ կիրառող կողմը չունի անհրաժեշտ օդային ուժ կամ գերազանցություն օդում և ապավինում է անհամաչափ պայքարի եղանակներին,

[18] Այս մասին հանգամանորեն տես *John A. Warden (III).* Enemy as System. “Airpower Journal”, Spring 1995, N 9; *Chet Richards*. Boyd’s OODA Loop. “J. Addams & Partners”, 21 March 2012; *Л. Савин*. Новые способы ведения войны: как Америка строит империю. СПб., 2016:

[19] Տես, օրինակ, *Л. Савин*. Пять стратегических колец Уордена и петля Бойда НОРД. «Геополитика.ru» (https://www.geopolitica.ru/article/pyat-strategicheskih-kolec-wordena-i-petlya-boyda-nord):

հատկապես՝ եթե հակադիր կողմը սուլթանական կառավարման համակարգով (խիստ կենտրոնացված) պետություն է:

Նշենք, որ այժմ ԱՄՆ-ում հետզհետե հրաժարվում են այս մոդելի կիրառումից: Բանն այն է, որ որոշ հեղինակավոր մասնագետների կարծիքով, այդ տեսությանը բնորոշ են հետևյալ թերությունները: Ցանցակենտրոն կազմակերպվածքով հակառակորդի դեպքում «կենսականորեն կարևոր հանգույցները» ցրված են ամբողջ տարածքով, շարժական են և միմյանցով փոխարինելի: Այսինքն՝ հնարավոր չէ դրանք շարքից այնպես հանել, որ պետական համակարգի գործունեությունը խաթարվի կամ դրա վերականգնման համար պահանջվեն մեծ ծախսեր[20]: Դրա հետ մեկտեղ «...օղակների տեսության մարտավարական կիրառումը, կարծես, փոխարինել է ռազմավարությանը: Ակնկալվում է, որ մարտավարական մակարդակում ձեռք բերված հաջողությունը ինքնաբերաբար վերածվում է ռազմավարական հաղթանակի: Դա կոչվում է «ռազմավարության մարտավարացում»: Զուտ ռազմական իմաստով դա կարող է պիտանի լինել որոշ ռազմական ուժերի դեպքում, ինչպիսիք են ԱՄՆ-ի Զինված ուժերը, որոնց ռազմական դոկտրինը խարսխվում է զանգվածեղ ու ահարկու կրակային հզորության վրա»[21]:

Միևնույն ժամանակ, ներկայիս միջազգային առևտրի ցանցի տարածվածության ու կարևորության զգալի աճման պայմաններում նյութերի և ապրանքների տեղափոխումը կարող է դուրս մնալ զինված ուժերի օղակի սահմաններից (օրինակ՝ ԱՄՆ, ՉԺՀ)[22]: Զարգացած պետությունների համար էներգառեսուրսները կարող են դառնալ վեցերորդ տարր: Սակայն փոփոխակված մոդելում էներգիան վերցվում է երկրորդ օղակից և իր վրա պարփակում երրորդ օղակի ենթակառուցվածքը՝ դրանք միավորելով ու դարձնելով մեկ միասնական օբյեկտ և ընդարձակելով այն[23]:

Ուորդենի տեսությունը քննադատել է նաև ռազմածովային ռազմավարության ոլորտի ճանաչված մասնագետ պրոֆեսոր Ջեյմս Հոլմսը: Երբ Պենտագոնում քննարկվում էր ԻԼԻՊ-ին օդային հարվածներ հասցնելու հարցը, օղակների նույնականացումը ենթարկվել էր որոշակի փոփոխակման: Այսպես. երկրորդ օղակում ներառվել էին ահաբեկիչների վարժաճամբարները և նավթամշակող գործարանները, իսկ չորրորդ օղակում նշվել էր, որ այդ հարվածների շնորհիվ կդադարեն բնակչության հետ ահաբեկիչների համագործակցությունը և հումանիտար օգնության առբերումը: Հոլմսը նշել էր, որ «անմիարժեքությունները շատանում են, երբ պատերազմում է ոչ պետություն հակառակորդը, մի հակառակորդ, որը հռչակել է պետականություն, սակայն չունի պետականությանը բնորոշ գծերի ամբողջ հավաքածուն,

[20] Տես “Revisiting Warden’s Rings: Targeting for Today?”. “Te Matataua”, RNZAF, Air Power Development Centre Bulletin, April 2018, Issue 19:

[21] Տես նույն տեղում:

[22] Տես *Л. Савин*. Пять стратегических колец Уордена …:

[23] Տես նույն տեղում:

որի վրա խորհուրդ է տալիս օդից գրոհել Ուորդենը: Ոչ պետական թշնամու ղեկավարությունը գտնվում է շարժման մեջ ավելի հաճախ, քան զբաղեցնում է պալատներ կամ այլ անշարժ կացարաններ: Հասարակական զարգացումները դեռ հասունացած չեն, ենթակառուցվածքը թերի է կամ դեռ ստեղծված չէ: Մարտիկները խառնվում են ոչ կոմբատանտների հետ: Նման պայմաններում կարելի է հեշտությամբ հարվածել սխալ թիրախի, ինչը կհանգեցնի անողջախոհ դիվանագիտական հետևանքների, որոնք կվնասեն դաշինքում ձևավորված փոխհարաբերությունները և հայրենիքում տիրող հասարակական բարոյականությունը»[24]: Այդուհանդերձ՝ կարելի է ընդունել այն տեսակետը, թե *Ուորդենի օղակները ոչ թե ռազմավարություն են, այլ հակառակորդի ծանրության կենտրոնը գտնելու գործիք*[25] և այս տեսակետից կարող են օգտակար լինել մեր դեպքում:

Զոն Բոյդի ԴԿՈՋ փուլաշրջանը, կամ հանգույցը, որը ռազմական ոլորտից «քոչել» է նաև բիզնեսի, պետական կառավարման և այլ քաղաքացիական ոլորտներ, նպատակ ունի ապահովել որոշումների կայացման գործընթացի արագացում և արդյունավետության մեծացում (հակառակորդ-մրցակցից ավելի արագ և լավ)[26]: Բոյդը կարևորում է երկու հանգամանք: Հակառակորդին հաղթելու համար անհրաժեշտ է հանգույցի բոլոր փուլերն անցնել ավելի արագ, քան դա անում է մրցակիցը, այսինքն՝ գործել առաջանցիկության սկզբունքով: Երկրորդ. հայտնվել հակառակորդի ԴԿՈՋ փուլաշրջանում և մնալ այնտեղ[27]:

Բոյդի փուլաշրջանը (տես աղյուսակը) ներառում է 4 տարր. դիտում *(observation*; *наблюдение*), կողմնորոշում *(orientation*; *ориентирование*), որոշում *(decision; решение),* ձեռնարկում *(action; действие)*:

Աղյուսակ

ԴԿՈՋ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃԿՈՒՆ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՄԱՆ, ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ[28]

Հեռանկար	Քայլ	Գործընթաց	Կիրառում
1	2	3	4
ռազմավարական	դիտում	• Ինչ է այն «պրոբլեմի ձևակերպումը», որը մենք փորձում ենք լուծել կամ շտկել • Ինչ փաստեր ունենք	

[24] *James Holmes*. What Air Power Can and Cannot Accomplish. “The Diplomat”, 7 October 2014.

[25] Տես “Revisiting Warden’s Rings:…”:

[26] Տես, օրինակ, *Patrick Van Hoeserlande*. How to Speed Up Your OODA Loop? (https://www.webdiver.be/Non_diving/Docs/Article-17-How-to-Speed-Up-Your-OODA-Loop.pdf):

[27] Տես *О. П. Иванов*. Военная сила в стратегии США. М., 2008, сс. 63–64:

[28] Տես *Nick Horney*. Initiating Action: Applying the OODA Loop to Accelerate Your Decision Making, 2011 (http://agilityconsulting.com/resources/Agility%20Org/Initiating%20Action-Applying%20the%20OODA%20Loop%20to%20Acceleterate%20Your%20Decision%20Making.pdf):

1	2	3	4
		• Ինչ այլ փաստեր են հարկավոր... ինչպես կարող ենք ունենալ ավելի լավ հեռանկար • Ինչպիսին են առկա միտումները	
	կողմնո-րոշում	• Ինչպես է այս իրավիճակն առնչվում մեր ռազմավարությանը, արժեքներին, նպատակներին, ստանդարտներին կամ սպառողի ակնկալիքներին • Որքանով է եղած պետությունը համապատասխանում մեր իդեալական պետությանը կամ ստանդարտին • Որ թերությունները պետք է վերացվեն • Կան արդյոք այլ հեռանկարներ, որոնք պետք է քննարկվեն... շուրջբոլորը դիտելու դեպքում Ինչ զտիչներ և հակվածություններ են ազդում այս հարցի վրա	
մարտավա-րական	որոշում	• Ինչ չափանիշներ պետք է օգտագործվեն դեպի ճիշտ որոշում կամ ձեռնարկում ուղղորդվելու համար • Ինչ այլ հնարավոր այլընտրանքային լուծումներ կան • Ինչպես համեմատել տարբեր այլընտրանքային գործողությունները, երբ գնահատվեն որոշումների չափանիշների միջոցով, ... որն է «լավագույնը»	
	ձեռնար-կում	• Ինչպես լավագույնս իրագործել պլանը, և ինչպես պետք է ես աջակցեմ դրան • Ինչ ուղենիշներ և միջոցներ պետք է կիրառվեն, որպեսզի երաշխավորված լինի լուծումների ու բարելավումների կենսունակությունը • Կառավարման ու հաղորդակցությունների ինչ փոփոխություն է պահանջվում • Որն է մշտական հետադարձ կապի համակարգը	

2003 թ. Կանադայի ԶՈՒ-ի Պաշտպանական հետազոտությունների և զարգացման *(Defence Research and Development)* գործակալության աշխատող Դևիդ Բրայանտը որպես այլընտրանք առաջարկել է մի նոր հանգույց, որի տարրերն են՝ Քննավերլուծություն, Հետազոտություն, Բաղդատում, Հարմարեցում (ՔՀԲՀ հանգույց՝ *Critique-Explore-Compare-Adapt,* կամ *CECA*)[29]:

Այս մոդելը (տես նկ. 2) ներկայումս դիտվում է որպես կառավարման նոր հայեցակարգ, որը նախատեսված է առանձին անձանց և կառավարման կառույցների որոշումների ընդունման ընթացքի ընդհանուր նկարագրության

[29] Տես *David Bryant*. Rethinking OODA: Toward a Modern Cognitive Framework of Command Decision Making. “Military Psychology”, July 2006, Vol. 18, N 3:

համար: Դրա հիմքում դրված է աշխարհի արտացոլման և իմաստավորման գործում մտածողական մոդելների կենտրոնական դիրքի մասին գաղափարը: Տվյալ մոդելը շեշտում է ընկալման հարցում վերևից դեպի ներքև ղեկավարման անհրաժեշտությունը, ինչը բնորոշ է զինված ուժերի աստիճանակարգված կառուցվածքին: Այն կիրարկվում է զորքերի կառավարման ամբողջ համակարգի կազմակերպման նկատմամբ, որովհետև տարաբաշխված զորքերի ամբողջ անձնակազմը (և՛ մարտին մասնակցող, և՛ աջակից) պետք է գործի օպերացիայի մտահղացման շրջանակում: Ուստի շտաբում կատարված պլանավորման հիման վրա մշակված հայեցակարգային մոդելը պետք է տարածվի այնպես, որ տվյալ օպերացիայում ներգրավված ցանկացած անձ ձևավորի իր ճշգրիտ պատկերացումը առնվազն մոդելի այն տարրերի մասին, որոնք կարող են այս կամ այն կերպ իրեն առնչվել[30]:



Նկ. 2. Բրայանտի ՔՀԲՀ փուլաշրջանի մոդելը[31]

Հարկ է շեշտել, որ տվյալ հայեցակարգային մոդելը կիրառման ընթացքում ենթարկվում է վերանայման, ինչի շնորհիվ անցումային ցանկալի վիճակները, նույնիսկ ցանկալի վերջնական վիճակը կարող են փոփոխվել ըստ մարտական տարածության մեջ տեղի ունեցող փոփոխությունների[32]:

[30] Տես նույն տեղում:

[31] Տես *David J. Bryant*. Critique, Explore, Compare, and Adapt (CECA): A new model for command decision making. Defence R&D Canada - Toronto, July 2003 (https://www.researchgate.net/publication/267362626_Critique_Explore_Compare_and_Adapt_CECA_A_new_model_for_command_decision_making):

[32] Տես *Л. Савин*. Пять стратегических колец Уордена …:

Ուստի մոդելը դիտարկվում է որպես պլանավորման միջոցով ստեղծված անցումային վիճակների շարք, որոնք սկզբնական վիճակից հասցնում են մինչև ցանկալի վերջնական վիճակը: Հայեցակարգային մոդելի հարմարեցման համար անհրաժեշտ է ունենալ իրավիճակային մոդել, որն արտացոլի մարտական տարածության ընթացիկ վիճակը այն ձևով, որն ընկալելի լինի հայեցակարգային մոդելին հարաբերակցմամբ: Ընդսմին իրավիճակի հետևանքների համապատասխան ըմբռնումը տեղի է ունենում միմիայն ակտիվ բանելակարգում[33]:

Գործողությունների հաջորդականությունը հետևյալն է: Պլանավորմամբ որոշվում է ելակետային հայեցակարգային մոդելը, որն ըստ էության պլանի մտավոր մոդելն է: Հայեցակարգային մոդելը նկարագրում է այն պատկերը, «որը դուք ցանկանում եք տեսնել», քանի որ արտացոլում է օպերացիայի նպատակները, ինչպես նաև դրանց հասնելու եղանակները: Ուստի և տվյալ մոդելը անմիջականորեն համապատասխանում է օպերացիայի ռազմավարական (օպերատիվ) մտահղացմանը[34]:

Այսպիսով՝ մենք ունենք *նպատակ,* այն է՝ զրկել հակառակորդին պատերազմը շարունակելու և հաղթելու կամքից, ունենք դրա համար *հակառակորդի ծանրության կենտրոնը որոշելու արդյունավետ գործիք,* այն է՝ Ուորդենի օղակները, և ունենք *որոշումների մշակման և ընդունման գործուն մոդելներ,* այն է՝ Բոյդի ԴԿՈՋ և Բրայանտի ՔՀԲՀ հանգույցները: Դա մեզ հնարավորություն է տալիս հիմնավոր կերպով պլանավորելու մեր ապագա գործողությունները:

Այստեղ հարկ ենք համարում ավելացնել հետևյալ նկատառումները: Ինչպես երևում է Ուորդենի օղակներից և ժամանակակից պատերազմների վարման տեսությունների վերլուծությունից[35], ներկայումս պատերազմներում կիրառվում է պայքարի ռազմական (ուժային) և ոչ ռազմական (ոչ ուժային) եղանակների ու միջոցների սերտ համակցությունը: Մասնավորապես՝ կարևոր տեղ է տրվում հետախուզության կազմակերպմանը (ընդսմին հակառակորդի ամբողջ տարածքի ընդգրկմամբ), քաղաքական-դիվանագիտական ջանքերին (յուրային դաշինքների ամրապնդում և դաշնակիցների ներգրավում, չեզոք պետությունների համակրանքի ձեռքբերում, թշնամական դաշինքների քայքայում), տեղեկատվական ընդդիմամարտությանը (հակառակորդի բնակչության և ԶՈՒ-ի անձնակազմի վրա բացասական ներգործություն՝ հաղթանակի նկատմամբ նրանց հավատը խորտակելու համար, միջազգային հանրությանը հակառակորդին որպես ագրեսորի ներկայացում, յուրային բնակչության ու զորքի տոկունություն ու մարտական ոգու

[33] Տես *David J. Bryant*. CECA model of the JSTAFF. Defence R&D Canada - Toronto, January 2008 (https//www.researchgate.net/publication/235051820_CECA_Model_of_the_JSTAFF):

[34] Տես նույն տեղում:

[35] Տես, օրինակ, *А. А. Бартош*. Стратегия и контрстратегия гибридной войны. «Военная мысль», 2019, № 5:

ամրապնդում և այլն), տնտեսական միջոցառումների ձեռնարկում (անհրաժեշտ նյութական մոբիլիզացիոն ռեսուրսների ստեղծում, ներմուծմամբ մատակարարման աղբյուրների և ուղիների բազմազանեցում)[36] և այլն:

Այս համառոտ թվարկումից անգամ հստակ կերպով երևում է, որ հակառակորդի տարածք մարտական գործողությունների տեղափոխման ռազմավարական մակարդակը հրամայաբար պահանջում է համալիր ձեռնարկումներ պետության կենսագործունեության զանազան ոլորտներում, ուստի զուտ պետության ռազմական կազմակերպության խնդրից, զուտ ռազմական ոլորտից տեղափոխվում է համապետական ասպարեզ՝ դառնալով Կառավարությամբ և Անվտանգության խորհրդով առաջնորդվող ամբողջ պետական համակարգի կարևոր ու հրատապ խնդիրը:

СТРАТЕГИЯ

ПЕРЕНОС БОЕВЫХ ДЕЙСТВИЙ НА ТЕРРИТОРИЮ ПРОТИВНИКА: СТРАТЕГИЧЕСКИЙ РАКУРС

Г. В. ТАВАРАЦЯН, генерал-майор, Начальник Национального исследовательского университета обороны МО РА

РЕЗЮМЕ

До сих пор Армения в отношении агрессивно настроенного Азербайджана успешно применяла политику сдерживания. Однако сейчас баланс сил серьезно нарушен в результате гонки вооружений, развязанной Азербайджаном. В данных условиях необходимо культивировать иные методы борьбы при том, что Армения значительно уступает Азербайджану по размерам территории (нет стратегической глубины), численности населения, объемам производства, количеству ВВТ. Одним из таких методов является провозглашенный Министром Обороны РА Давидом Тонояном перенос боевых действий на территорию противника.

При этом данный метод может рассматриваться в двух ракурсах – в зависимости от масштабов цели и вовлеченных сил. Если это действие предпринимается командиром соединения в своей зоне ответственности в интересах отвлечения части сил противника для подавления диверсионных очагов в своем тылу и препятствования нарушению функционирования системы управления, то оно является тактической мерой. Однако перенос боевых действий на территорию противника может являться и стратегической инициативой. В частности, военная доктрина Израиля зиждется на двух идеях, заложенных в основу обеспечения военной безопасности со дня основания

[36] Տես նույն տեղում:

государства. Первая – это перенос боевых действий на территорию противника, вторая – нанесение превентивных или упреждающих ударов. Исходя из отсутствия стратегической глубины обороны, немногочисленности населения и расположения населенных пунктов вблизи границы, превосходства противника в объемах производства, Израиль нацеливает свою стратегию ведения войны на нанесение вооруженным силам противника максимально возможного урона с их выводом из строя на длительное время.

В стратегическом ракурсе перенос боевых действий на территорию противника должен рассматриваться в комплексе мер военного, политико-дипломатического, экономического, информационного и иного характера, нацеленных на лишение противника воли к победе. При разработке данной стратегии войны «на измор» целесообразно пользоваться такими инструментами определения центра тяжести противника, как кольца Уордена, и моделями скорейшего принятия эффективных решений, как петли Бойда НОРД и Брайанта КИСА.

Поскольку данная проблема перерастает в общегосударственную задачу, то она требует всестороннего и глубокого осмысления со стороны ведущих специалистов и экспертов РА в соответствующих областях жизнедеятельности нашего государства и общества.

STRATEGY

TRANSFERRING HOSTILITIES TO THE OPPONENT'S TERRITORY: STRATEGIC PERSPECTIVE

G. V. TAVARATSYAN, Major General, Head, National Defense Research University, MOD, RA

SUMMARY

So far, Armenia has been successfully implementing a containment policy towards aggressively disposed Azerbaijan. However, now the balance of power is seriously upset due to the arms race unleashed by Azerbaijan. Under these conditions, it is necessary to develop other methods of struggle, while Armenia is significantly inferior to Azerbaijan in terms of the territory size (there is no strategic depth), population, production volumes, and the amount of the Armament and Military Equipment. One of such methods is the transfer of hostilities to the opponent's territory proclaimed by *David Tonoyan*, the RA Defense Minister.

In this case, this method can be reviewed in two perspectives depending on the scopes of the target and the forces involved. If this

action is taken by the commander of the tactical formation in his area of responsibility in order to divert part of the enemy's forces for suppressing subversive hotbeds in his rear and preventing malfunction of the command and control system, then it is a tactical measure. However, the transfer of hostilities to the opponent's territory can be a strategic initiative as well. In particular, the Israeli military doctrine is built up on two ideas underlying the ensuring of military security since the foundation of the state. The first idea is the transfer of hostilities to the opponent's territory, the second one is the infliction of preventive or preemptive strikes. Due to the lack of defense strategic depth, its small population and the location of settlements near the border, the superiority of an enemy in production volumes, Israel directs its warfare strategy to the infliction of the maximum possible damage to the armed forces of an opponent with their incapacitation for a long time.

In a strategic perspective, the transfer of hostilities to the opponent's territory should be considered in the complex of military, political-diplomatic, economic, informational and other measures targeted at depriving the enemy of the will to win. When developing this "war of attrition" strategy, it is expedient to use such tools for determining the center of gravity of the enemy, as Warden's Five Rings, and the models of the quickest effective decision-making, such as Boyd's OODA Loop and Bryant's CECA Loop.

Since this problem develops into a nationwide task, it requires a comprehensive and deep conception on the part of leading specialists and experts of the Republic of Armenia in relevant areas of activity of our state and society.

1950–1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՈՐՈՇ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ

Ա. Կ. ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Գիտահիրատարակչական կենտրոնի պետի– գլխավոր խմբագրի տեղակալ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՏԵՂԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԻՑ

Տեղային պատերազմ է կոչվում երկու կամ մի քանի պետությունների միջև ըստ քաղաքական նպատակների ու թափի սահմանափակ պատերազմը, որում ռազմական գործողությունները դուրս չեն գալիս պատերազմող պետությունների տարածքներից և շոշափում են առավելապես միայն այդ պետությունների շահերը (տարածքային, տնտեսական, քաղաքական և այլն)[1]:

Նկատվել է, որ այս տեսակի համարյա բոլոր պատերազմները տեղի են ունենում այն նախկին կայսրությունների սահմանամերձ գոտիներում, որոնք աշխարհում հարյուրամյակներ շարունակ ունեցել են տիրապետող դիրք[2]: «Այսպես, օրինակ, բալկանյան պատերազմները, որոնք բռնկվեցին Հարավսլավիայի քայքայման հետևանքով, ծագեցին Հաբսբուրգյան և նախկին Օսմանյան կայսրությունների սահմանին: Նման իրավիճակ է ստեղծվում նաև Կովկասում, որը սահմանային գոտի է նախկին Ռուսաստանյան և Օսմանյան կայսրությունների միջև: ... Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով Օսմանյան կայսրության վերջնական քայքայումը նպաստեց ռազմական հակամարտությունների ծագմանը ոչ միայն Բալկաններում և Կովկասում, այլև Մերձավոր Արևելքում ու Պաղեստինում»[3]:

1950–1953 թթ. Կորեական պատերազմը ծագեց նախկին Ճապոնական, իսկ Վիետնամական պատերազմը՝ փլուզված Ֆրանսիական գաղութատիրական կայսրությունների սահմանամերձ գոտիներում[4]:

---

[1] Տես «Локальная война». «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь под редакцией Д. Рогозина (http://www.voina-i-mir.ru/article/85):

[2] Տես *В. В. Афанасьев*. Современные локальные конфликты. «Вестник Московского университета». Серия 18: «Социология и политология», 2014, № 1:

[3] Տես նույն տեղում:

[4] Տես «Французская империя». «Теории и истории империй. Академический словарь». СПб., 2012, сс. 494–544:

Տվյալ հայեցակետը համապատասխանում է այն պատմագիտական տեսությանը, ըստ որի՝ «մարդկության պատմությունը կարելի է բնութագրել որպես կայսրությունների պատմություն»[5]: Կայսրությունները պայքարում են իրենց կենսական տարածության ընդարձակման համար՝ վարելով ծավալապաշտական կայսերական քաղաքականություն, որի ուժային տարբերակը կայսերական պատերազմներն են, ագրեսիվ, զավթողական պատերազմները, որոնք նպատակաուղղված են նոր տարածքների, բնական, տնտեսական ու մարդկային ռեսուրսների նվաճմանը, ժողովուրդների հպատակեցմանն ու նրանց ինքնիշխանության սահմանափակմանը (դրանից զրկմանը)[6]:

Աշխարհի գաղութային բաժանումից հետո կայսերական պատերազմները ձեռք են բերում նոր՝ աշխարհը համաշխարհային կայսրությունների միջև վերաբաժանելու համար տեղի ունեցող համընդգրկուն բախումների բնույթ: Համարվում է, որ այդպիսին էին 19-րդ դարի – 20-րդ դարի սկզբի հակամարտությունները, օրինակ՝ 19-րդ դարի առաջին կեսի ռուս-թուրքական ու ռուս-պարսկական, 1853–1856 թթ. Ղրիմի, 1899–1902 թթ. անգլո-բուրական և այլ պատերազմներ: Կայսերական պատերազմների մասշտաբայնությունը շարունակում է աճել, և 20-րդ դարում դրանք վերաճում են համաշխարհային պատերազմների, որոնց նպատակն է մի համաշխարհային կայսրության հաղթանակը մյուսի նկատմամբ և նրա գաղութների լրիվ կամ մասնակի կլանումը: Այսպես. առաջին համաշխարհային պատերազմում (1914–1918) կործանվեցին Գերմանական, Ավստրո-Հունգարական, Օսմանյան և Ռուսաստանյան կայսրությունները, առաջ եկավ միջազգային հարաբերությունների Վերսալյան համակարգը, որի ներքին հակասությունների հետևանքով ստեղծվեց նոր կայսրություն՝ Երրորդ ռայխը: 1917–1922 թթ. քաղաքացիական պատերազմից հետո Ռուսաստանյան կայսրության փլատակների վրա ստեղծվեց նոր կայսրություն՝ ԽՍՀՄ-ը:

Նոր ու հին կայսրությունների միջև պայքարը վերածվեց 1939–1945 թթ. երկրորդ համաշխարհային պատերազմի, որում ոչնչացան Երրորդ ռայխն ու կայսերական Ճապոնիան, իսկ ԽՍՀՄ-ը՝ որպես կայսրություն, հզորացավ և Արևելյան Եվրոպայում ձևավորեց արբանյակ-պետությունների ճամբար[7]: Հզորացավ նաև ԱՄՆ-ը, և ձևավորվեց երկբևեռ աշխարհակարգ, որում երկու համաշխարհային կայսրություններ՝ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, իրենց դաշնակիցներով հանդերձ միմյանց դեմ պայքարում էին ազդեցության գոտիների (կայսերական տարածության) համար:

Ընդ որում, այս երկու բևեռների միջև անմիջական առճակատումը գործ-

[5] Տես «Империя как исторический феномен». «Теории и истории империй. Академический словарь», с. 152:

[6] Տես «Имперские войны». «Теории и истории империй. Академический словарь», сс. 213–216:

[7] Տես նույն տեղում:

նականում բացառված էր, քանի որ երկուսն էլ ունեին միջուկային զենքի մեծ պաշարներ, որոնք ստեղծվել էին որպես սպառազինությունների մրցավազքի արդյունք[8], իսկ միջուկային պատերազմը կնշանակեր երաշխավորված ինքնաոչնչացում: Այսպես. 1945 թ. ԱՄՆ-ն ուներ 6 միջուկային ռումբ, ԽՍՀՄ-ը՝ ոչ մեկը, 1949 թ. ԱՄՆ-ը՝ 235 ռումբ, ԽՍՀՄ-ը՝ 1 (պայթեցված), 1953 թ. ԱՄՆ-ը՝ 1436, ԽՍՀՄ-ը՝ 120, 1960 թ., համապատասխանաբար՝ 20434 և 1605, 1970 թ.՝ 22492 և 11643: Հաջորդ տասնամյակում ԽՍՀՄ-ը միջուկային մարտագլխիկների թվով հասնում և անցնում է ԱՄՆ-ին. 1978 թ. հարաբերակցությունը արդեն ԽՍՀՄ օգտին էր՝ 24424 և 25393, 1986 թ.՝ 23410 և 45000 (ամերիկացիներինը՝ 1,9 անգամ քիչ)[9]:

Մյուս կողմից՝ նրանք երկուսն էլ ձգտում էին ընդլայնելու իրենց ազդեցության գոտիները փլուզված գաղութատիրական համաշխարհային համակարգի (այլ կայսրությունների) նախկին տարածքների հաշվին: Սա հանգեցրեց այն բանին, որ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը միմյանց դեմ պայքարում էին՝ Աֆրիկայի ու Ասիայի տարածքներում բռնկված տեղային հակամարտություններում՝ աջակցելով հակադիր կողմերի: Այդպես էր 1950–1953 թթ. Կորեական, 1964–1975 թթ. Վիետնամական, 1967 թ. և 1973 թ. Արաբա-իսրայելական, 1980–1989 թթ. Աֆղանական և բազմաթիվ այլ պատերազմներում:

Սա է պատճառը, որ նշված ժամանակահատվածում ռազմարվեստը զարգացել է հիմնականում տեղային պատերազմների փորձի հիման վրա, երբ համեմատաբար փոքր տարածքում կիրառվել է մեծ թվով սովորական սպառազինություն:

2. ՏԵՂԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՈՐՈՇ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Ռազմական ռազմավարությունում պատերազմի բնույթ ասելով հասկանում ենք այն հատկանիշների և առանձնահատկությունների ամբողջությունը, որոնք հանգամանորեն արտացոլում են նրա սոցիալ-քաղաքական ու ռազմավարական կողմերը:

Պատերազմի սոցիալ-քաղաքական կողմը արտահայտում է զինված բռնությամբ քաղաքական, տնտեսական և այլ նպատակների հասնելու

[8] Տես *М. Ф. Полынов*. Гонка вооружений как метод изматывания СССР США. 1945–1990 гг. «Вестник Санкт-Петербургского университета». Серия 2. «История». 2005, вып. 3:

[9] Տես նույն տեղում:

* Այս և հաջորդ ենթավերնագրի ներքո նյութը շարադրելիս օգտվել ենք հետևյալ գրականությունից. «Курс лекций Военной Академии ГШ ВС РФ», 2007; «История военного и военно-инженерного искусства». Учебное пособие для высших военно-учебных заведений МО РФ (http://www.xn----ctbbwbm3avbalj.xn--p1ai/local_wars.html), *Ю. П. Кулешов, О. А. Манцуров*. Особенности современных военных конфликтов и их влияние на развитие вооруженных сил. «Вестник Восточно-Казахстанского технического университета», 2013, № 1 (https://www.ektu.kz/files/vestnik/mil01_2013.pdf):

մտահղացումը, և պատերազմի նկատմամբ բանակի ու ժողովրդի վերաբերմունքը, իսկ ռազմավարական կողմը՝ հակամարտող կողմերի ռազմավարական նպատակներն ու խնդիրները, պատերազմի մասշտաբը, կիրառվող զինատեսակները, պատերազմի սկսման պայմաններն ու սանձազերծման եղանակները, ռազմական գործողությունների վարման ձևերն ու եղանակները, ռազմական գործողությունների առանձնահատկությունները, պատերազմի պարբերացումը և տևողությունը, դրա հնարավոր հետևանքներն ու արդյունքները:

Նշենք տեղային պատերազմների որոշ ռազմավարական առանձնահատկություններ.

ա) տերությունների շահերի ազդեցությունը ռազմական գործողությունների ընթացքի և արդյունքի վրա: Ցայտուն օրինակներ են 1950–1953 թթ. Կորեական, 1964–1975 թթ. Վիետնամական և 1980–1989 թթ. Աֆղանական պատերազմները, որոնց ընթացքի և արդյունքի վրա անմիջական ազդեցություն ունեին ԱՄՆ-ի և ԽՍՀՄ շահերը,

բ) օդային տարածությունում ռազմական գործողությունների դերի մեծացումը: Օրինակ՝ Կորեական պատերազմում գերտերությունների օդային դիմակայությունը մեծ նշանակություն ունեցավ թե՛ ավիացիոն տեխնոլոգիաների ու նոր սպառազինության (կառավարելի հրթիռներ), թե՛ նրանց ռազմական քաղաքականության ու ռազմավարությունների մշակման ու զարգացման համար: Կորեական և Վիետնամական պատերազմներում մեծ դեր խաղացին մարտական ուղղաթիռները: 1967 թ. արաբա-իսրայելական պատերազմի հենց սկզբում Եգիպտոսի օդանավակայաններին իսրայելական ավիացիայի հասցրած հարվածները կանխորոշեցին պատերազմի ելքը: 1982 թ. անգլո-արգենտինական պատերազմում երկու կողմերի ռազմածովային ուժերի կորուստների 80 %-ը ավիացիայի հարվածների հետևանք էր,

գ) ապահովող տիեզերական միջոցների լայն կիրառումը: Օրինակ՝ նշված անգլո-արգենտինական պատերազմում բրիտանական կողմը կիրառել է տիեզերական հետախուզության, ուղղորդման և կապի համակարգեր, իսկ Խորհրդային Միությունն իր տիեզերական հետախուզության տվյալները տրամադրել է արգենտինական կողմին,

դ) բաց զորաթևերի առկայությունը: Օրինակ՝ Կորեական պատերազմում Հյուսիսային Կորեայի և Չինաստանի զորամիավորումները լեռնաանտառային տեղանքի պայմաններում հաճախ հարձակման հնարավորություն էին ստանում միայն մեկ ճանապարհի երկայնքով, և ըստ այդմ էլ ծավալվում էր նրանց մարտակարգը: Որպես արդյունք՝ դիվիզիաների զորաթևերի միջև ճեղքվածքները հասնում էին 15–20 կմ-ի,

ե) հատուկ նախանշանակման օպերացիաների ուժերի և իջազորի (դեսանտ) լայն կիրառումը: Օրինակ՝ 1956 թ. արաբա-իսրայելական պատերազմում իսրայելական զորքերը զորէջքի (դեսանտի իջեցում) միջոցով գրավել են Սինայի թերակղզում գտնվող լեռնանցքները, բարձունքները,

ճանապարհների խաչմերուկները: Վիետնամական պատերազմում ամերիկյան հրամանատարությունը հարձակողական օպերացիաներում կիրառում էր զորէջքով այնպիսի տեսակների տարաշարժեր, ինչպիսիք են «շրջապատումը», «օղակը», «մուրճ ու զնդանը», «կրկնակի թռիչքը», «ճանկերը», «գիծը»: Օդային մարտավարական զորէջք էին կիրառում խորհրդային զորքերը Աֆղանական պատերազմում, բրիտանական զորքերը՝ 1982 թ. Ֆոլկլենդյան պատերազմում,

զ) կրակային գերազանցության նվաճում և հարվածների կենտրոնացում կենսականորեն կարևոր օբյեկտների ու զորքերի խմբավորումների վրա: Այսպես. 1950–1953 թթ. Կորեական պատերազմում ավերվել է երկու կորեական պետությունների արդյունաբերական ու տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտների ավելի քան 80 %-ը: 1980–1988 թթ. իրանա-իրաքյան պատերազմում ավերվել են հակամարտող պետությունների կարևոր տնտեսական օբյեկտները՝ նավթահանքեր, նավթավերամշակման գործարաններ, խողովակաշարեր, նավահանգստային շինություններ, արդյունաբերական և բնակելի շենքեր, պահեստարաններ և ենթակառուցվածքների այլ տարրեր: Ընդհանուր առմամբ, Իրանի կրած նյութական վնասը գնահատվում է 645 մլրդ դոլար, իսկ Իրաքինը՝ շուրջ 340 մլրդ դոլար,

է) տեղեկութահոգեբանական օպերացիաների վարում: Գործնականում բոլոր տեղային պատերազմներում իրագործվել են նման օպերացիաներ: 1967 թ. պատերազմում Իսրայելը կիրառել է քաղաքական, դիվանագիտական ու ռազմական խորամանկություն: Հունիսի 5-ի հարձակումը արաբների համար միանգամայն անսպասելի էր: Պատերազմում լայնորեն օգտագործվել են ապատեղեկատվություն, ցուցադրական ու նմանակող գործողություններ. կառուցվել են կեղծ օդանավակայաններ ու վայրէջքի հարթակներ, ցուցադրվել ու նմանակվել են զորքերի (հատկապես՝ տանկային) կեղծ կուտակումներ, կատարվել են կեղծ ռադիոհեռարձակումներ: Իրենց պարտությունից դասեր քաղելով՝ արաբները կարողացել են 1973 թ. պատերազմում մոլորեցնել ու հանկարծակիի բերել իսրայելացիներին:

1982 թ.՝ այն բանից հետո, երբ Արգենտինան գրավել է Ֆոլկլենդյան կղզիները, անգլիական հրամանատարությունը ձեռնարկել է համալիր միջոցառումներ՝ Արգենտինայի ղեկավարությանը մոլորեցնելու նպատակով: Մշակվել է ԶԼՄ-ների միջոցով ապատեղեկացման հատուկ պլան, մտցվել է խիստ գրաքննություն: Անգլիական հրամանատարությունն իր հրամանով ձևավորել է կեղծ պատկերացում սպասվող ծովային և օդային զորէջքերի վայրի մասին,

ը) իրական ռազմական գործողությունների ընթացքում սպառազինության ժամանակակից և նորագույն տեսակների փորձարկում: Այսպես. 1950–1953 թթ. Կորեական պատերազմում կիրառվել է նախկինում անհայտ 9 տեսակի սպառազինություն, 1964–1975 թթ. Վիետնամական պատերազմում՝ 25 տեսակի, 1967, 1973, 1982, 1986 թթ. մերձավորարևելյան պատերազմներում՝ շուրջ 30:

3. 1950–1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ՕՊԵՐԱՏԻՎ-ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ ՈՒ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ա) Հարձակողական գործողություններ.

N/n	Պրոբլեմ	Լուծման եղանակ
1.	Ուժերի և միջոցների կուտակում	– զինված պայքարի միջոցների և զորքերի տարաշարժունության խելամիտ օգտագործում, – մարտակարգի կատարելագործում, – կրակային խոցման միջոցների հեռահարության մեծացում
2.	Նախապատրաստված պաշտպանության ճեղքում	– գլխավոր հարվածի և 1-2 լրացուցիչ հարվածների միաժամանակյա կիրառում հակառակորդի ուժերի մասնատման նպատակով, – ճակատային հարվածների ու լայն տարաշարժի զուգակցում, – արդյունավետ կրակային խոցում
3.	Հակառակորդի հետապնդում	– տանկային զորքերի և առաջավոր ջոկատների լայն կիրառում, – ուժերի ու միջոցների տարաշարժ, – մարտավարական զորէջքի, դիվերսիոն-հետախուզական խմբերի լայն կիրառում, – մարտական գործողությունների շրջանի մեկուսացում՝ հակառակորդի ռեզերվի ներթափանցումն արգելելու նպատակով
4.	Առաջին հարվածի հանկարծակիություն	– մարտական գործողությունների պլանավորման գործում սահմանափակ թվով անձանց ներգրավում, – հետախուզություն, – քողարկում՝ թաքուցում, նմանարկում, ցուցադրում, ապատեղեկացում, – ռազմական խորամանկություն, – զինված պայքարի նոր միջոցների կիրառում, – տեսանելիությունը սահմանափակող գիշերային և այլ պայմանների հմուտ օգտագործում
5.	Հակառակորդի խմբավորումների շրջապատում և արագ ոչնչացում	– հետախուզություն, – օդում գերազանցության նվաճում, – մարտավարական զորէջք, – ռեզերվների ջախջախման և հակահարձակումների կասեցման ակտիվ միջոցառումների իրագործում, – հզոր զորաթևային հարված՝ գլխավոր խմբավորման շրջանցմամբ
6.	Հակառակորդի կրակային խոցում	– ներգրավվող միջոցների զինանոցի ընդլայնում և կրակային խնդիրների լուծման գործում դրանց դերերի վերաբաշխում, – տարասեռ ուժերի ու միջոցների համաձայնեցված կիրառում, – կրակային հարվածների ճշգրտության մեծացում,

N/n	Պրոբլեմ	Լուծման եղանակ
		– անձնակազմի (թնդանոթների հաշվարկների) պատրաստման որակի բարձրացում
7.	Ձանքերի պատեհաժամ մեծացում	– ռեզերվների ստեղծում և անընդհատ վերականգնում, – մարտի մեջ նոր ուժերի զորամուտի փութաջան ապահովում, – զորքերի կայուն կառավարում
8.	Ուժերի և միջոցների փոխգործություն	– ըստ մարտի փուլերի ձևավորվող ռեալ իրադրության պայմաններում մարտական գործողությունների խաղարկմամբ վարժեցում փոխգործությանը, – փոխգործություն ապահովող հատուկ մարմինների ստեղծում, – փոխգործության կազմակերպման գծով գործառութային պարտականությունների բաշխման հստակեցում և փաստաթղթերի որակյալ մշակում, – փոխգործող զորքերի միջև ներկայացուցիչների փոխանակում
9.	Զորքերի և զենքի կառավարում	– ԿԱՀ-ի ներդրում – համազորային հրամանատարների դերի մեծացում, – պաշտոնատար անձանց ճշտորոշված կազմակերպական աշխատանք զորքերում և տեղանքում, – կառավարման համակարգերի ու կետերի հուսալի պաշտպանություն, – կառավարման ժամանակակից շարժական կետերի լայն օգտագործում, – մարտական առաջադրանքների կատարման անընդհատ վերահսկում, – զորքերի և զենքի կառավարման կազմակերպման նկատմամբ գիտական մոտեցում

բ) Պաշտպանության բնութագրական գծերը

N/n	Միջոցառում	Առանձնահատկություն
1.	Զորքերի պաշտպանական խմբավորումների ստեղծում և կիրառում	– զորքերի՝ մեծ շարժունակությամբ օժտված խմբավորումների ու խոցման միջոցների դերի մեծացում, – հակատանկային միջոցների խմբավորումների հնարավորությունների մեծացում, – մարտակարգի նոր տարրերի ստեղծում, – ուժերի և միջոցների մի մասի հատկացում մատույցների պաշտպանության համար, – պատերազմի սկզբնական շրջանում միասնական պաշտպանական-հարձակողական խմբավորումների ստեղծում

N/n	Միջոցառում	Առանձնահատկություն
2.	Գոտիների կառուցում և դրանց ինժեներական սարքավորում.	– պաշտպանության խորության մեծացում, – պաշտպանության գոտիների կառուցման նոր տարրերի կիրառում (թունելներ, ստորանցքեր), – դիմադրության առանձին հանգույցների և հենակետերի համակարգի լայն կիրառում, – պատերազմի սկզբնական շրջանի դերի աճում, – հրետանու դիրքերի ինժեներական սարքավորման դերի մեծացում:
3.	Հակատանկային պաշտպանության կազմակերպում և վարում	– նոր հակատանկային միջոցների դերի մեծացում, – տանկերի դեմ պայքարում հետևազորի դերի մեծացում, – հակատանկային միջոցների խտության մեծացում, – տանկերի դեմ պայքարում նոր հնարների կիրառում, – տանկերի դեմ պայքարում տարաշարժի նշանակության մեծացում
4.	Հակառակորդի կրակային խոցում.	– կրակի կազմակերպման որակի բարձրացում, – տարասեռ ուժերի ու միջոցների համալիր կիրառում, – կրակային խնդիրների լուծման գործում ավիացիայի դերի մեծացում
5.	Հակաօդային պաշտպանության կազմակերպում և վարում	– ՀՕՊ-ի ուժերի ու միջոցների միավորում կառավարման միասնական համակարգում, – ուժերի ու միջոցների համալիր օգտագործում՝ դրանց սերտ փոխգործությամբ, – ՀՕՊ-ի ջանքերի կենտրոնացում հիմնական օբյեկտների և զորքերի գլխավոր խմբավորումների ծածկապաշտպանության համար, – օդային հարձակման միջոցների դեմ վարվող մարտական գործողություններում նոր հնարների ու եղանակների կիրառում, – ՀՕՊ-ի համակարգի ակտիվության ու կայունության աստիճանի բարձրացում

4. ԱՄՓՈՓՈՒՄ

Վերջին տասնամյակներում պատերազմները փոխում են իրենց ավանդական ձևերը: 21–րդ դարում պետությունը կորցրել է պատերազմ վարելու մենաշնորհը: Մեծ թվով ժամանակակից պատերազմներում գործում են ոչ միայն պետական, այլև թվացյալ պետական ու մասնավոր դերակատարները, որոնց համար պատերազմը եկամուտների աղբյուր է, ուստի և նրանք

չեն ձգտում խաղաղության: Աֆրիկայում, Հարավսլավիայում, Կովկասում, Աֆղանստանում ու Սիրիայում տեղի ունեցած և ընթացող բոլոր պատերազմները ավելի շատ հիշեցնում են Երեսնամյա պատերազմը, քան 20-րդ դարում պետությունների միջև ծագած պատերազմները[10]:

Ժամանակակից տեղային պատերազմների առանձնահատկություններն են.

– բազմաթիվ դերակատարների առկայությունը,
– մեծ տևողությունը,
– դիմակայության անհամաչափությունը, մասնակիցների անհավասարությունը,
– քաղաքացիական բնակչության մեծաթիվ կորուստները,
– քրեածին ստվերային տնտեսությունը,
– զինված պայքարի միջոցների էժանացումը,
– կոնկրետ տեղափակում և մեծ ճակատամարտեր չլինելը,
– պարտիզանական պատերազմի հյուծիչ մարտավարությունը,
– էթնիկական և կրոնական գործոնների նշանակության աճումը,
– ավանդական գաղափարախոսությունների դերի նվազումը,
– երեխաների՝ որպես մարտիկների օգտագործումը,
– մեծ թվով սեռական հանցագործությունները[11]:

Վ. Աֆանասևի կարծիքով՝ տվյալ իրողությունը բացատրվում է այն բանով, որ ամերիկյան կայսրությունը 20-րդ դարում մշակված «քաղաքացիական պատերազմի» կազմակերպման տեխնոլոգիայով (որովհետև բացահայտ առճակատումը՝ դասական պատերազմը, և՛ ծախսատար է, և՛ ավերիչ) պայքարում է «հին» ազգային պետությունների դեմ՝ նպատակ ունենալով դրանց փլատակների վրա ստեղծել համաշխարհային կայսրություն: Մեր կարծիքով՝ այդ պրոցեսում անխուսափելի է այլ կայսրությունների (բևեռների) առաջացումը, քանի որ կան մի շարք պետություններ և ժողովուրդներ, որոնք ունեն կայսերական հավակնություններ և այսօր էլ հանդես են գալիս որպես այլընտրանքային կայսրություններ: Այլ կերպ ասած՝ կայսրությունների ստեղծման ու փլուզման պատմական պրոցեսը շարունակվում է, և աշխարհն ամենայն հավանականությամբ թևակոխում է բազմակենտրոնության փուլաշրջան: Քանի որ կայսրություններն ստեղծվում են ազդեցության տարածմամբ, ապա պետք է ենթադրել, որ այդ պրոցեսը կուղեկցվի նոր բնույթի տեղային պատերազմների թվի աճմամբ:

---

[10] Տես *Վ. Վ. Աֆանասև*, Նշ. աշխ.:

[11] Տես նույն տեղում:

ОПЕРАТИВНОЕ ИСКУССТВО

НЕКОТОРЫЕ СТРАТЕГИЧЕСКИЕ И ОПЕРАТИВНО-ТАКТИЧЕСКИЕ ХАРАКТЕРНЫЕ ЧЕРТЫ ЛОКАЛЬНЫХ ВОЙН 1950–1980-ЫХ ГОДОВ

А. К. ЯЛАНУЗЯН, полковник, заместитель начальника Научно-издательского центра НИУО МО РА – главного редактора

РЕЗЮМЕ

Под характером войны обычно понимают совокупность свойств, раскрывающих ее социально-политическую и стратегическую стороны. Стратегическая сторона войны включает: стратегические цели и задачи сторон, масштаб войны, применяемое оружие, условия начала и способы развязывания войны, формы, способы и особенности военных действий, периодизацию и продолжительность войны, ее возможные последствия.

Стратегическими особенностями военных действий в локальных войнах 1950-1980-ых годов являются: влияние интересов высокоразвитых государств на ход и исход военных действий; возрастание роли военных действий в воздушном пространстве; опора на обеспечивающие действия космических средств; наличие открытых флангов; широкое применение сил специальных операций и десантов; достижение огневого превосходства и массирование ударов по критически важным объектам и группировкам войск; проведение информационно-психологических операций; испытания современных и новейших образцов вооружения и военной техники в условиях реальных боевых действий.

Оперативно-тактическими особенностями локальных войн указанного периода являются пути решения актуальных проблем наступательных действий: массирование сил и средств (совершенствование боевого порядка, повышение дальнобойности средств огневого поражения); прорыв подготовленной обороны (сочетание фронтальных ударов с широким маневром); преследование противника (широкое применение танковых войск и передовых отрядов); обеспечение внезапности нанесения первоначального удара (военная хитрость); окружение и быстрое уничтожение группировок противника (проведение активных мероприятий по разгрому резервов и срыву контратак); огневое поражение противника (расширение арсенала привлекаемых средств и перераспределение их роли в решении огневых задач); своевременное наращивание усилий (создание и непрерывное восстановление резервов); взаимодействие сил и средств (создание специальных органов взаимодействия); совершенствование систем управления войсками и оружием (внедрение АСУ).

Особенностью локальных войн при организации и ведении

20-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՏԵՂԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

1950–1953 թթ. Կորեական պատերազմ

ա)

բ)

ա) ամերիկացի զինվորները կրակում են 105 մմ-անոց հաուբիցից,
բ) հյուսիսկորեացի զինվորներն ու սպան զինադադարի ժամանակ
Պանմունժոնում կատարում են պարեկային ծառայություն

1964–1975 թթ. Վիետնամական պատերազմ

ա)

բ)

ա) ամերիկյան «ՍիԷյչ-46 Սի Նայթ» խոցված ուղղաթիռը Հյուսիսային
և Հարավային Վիետնամների միջև ապառազմականացված գոտու
հարավում, բ) Վիետկոնգի զինվորներ

1956 թ. արաբա-իսրայելական պատերազմ
(Սինայական ռազմարշավ)

ա)

բ)

ա) իսրայելական տանկային շարասյունը Սինայի թերակղզում,
բ) եգիպտական խորտակված նավերը Սուեզի ջրանցքում

1967 թ. արաբա-իսրայելական պատերազմ

ա)

բ)

ա) իսրայելական տանկերը գրոհում են Գոլանի բարձունքների վրա,
բ) սիրիական բնակչությունը Գոլանի բարձունքներից փախչում է Դամասկոս

1973 թ. արաբա-իսրայելական պատերազմ

ա) բ)

ա) եգիպտական զորքերը անցնում են Սուեզի ջրանցքը, բ) իսրայելական տանկը և վիրավորված զինվորները պատերազմի երկրորդ օրը

1980–1988 թթ. իրանա-իրաքյան պատերազմ

ա) բ)

ա) իրանական հետևակը Խորեմշեհեր քաղաքի համար մարտերում, բ) իրաքցի զինվորները առաջագծում

1979–1989 թթ. Աֆղանական պատերազմ

ա)

բ)

ա) աֆղանացի զինյալները Աֆղանստանի արևելյան Պակտիա նահանգում,
բ) խորհրդային բանակի զինվորները զննում են տեղանքը

1982 թ. անգլո-արգենտինական պատերազմ

ա)

բ)

ա) արգենտինական իջազորը Ֆոլկլենդյան կղզիներում, բ) բրիտանական
զրահատեխնիկան Պորտ Ստենլիում

обороны является осуществление следующих мероприятий: создание и применение оборонительных группировок войск (повышение роли высокомобильных группировок войск и средств поражения); построение полос и их инженерное оборудование (увеличение глубины построения обороны); организация и ведение противотанковой обороны (возрастание роли новых средств борьбы с танками); огневое поражение противника (возрастание роли авиации в решении огневых задач); организация и ведение противовоздушной обороны (повышение активности и устойчивости системы ПВО) и др.

На основе теории империй, согласно которой история человечества – это история создания и разрушения империй, делается предположение о том, что в 21-м веке в мире возникнут новые империи, мир станет полицентричным и, соответственно, возрастет число локальных войн, обладающих новыми характерными чертами.

OPERATIONAL ART

A NUMBER OF STRATEGIC AND OPERATIONAL-TACTICAL FEATURES OF LOCAL WARS IN 1950–1980

A. K. YALANUZYAN, Colonel, Deputy Head, Academic-Publishing Center, NDRU, MOD, RA – Deputy Editor-in-Chief

SUMMARY

The nature of war is usually perceived as a combination of features revealing its social, political and strategic aspects. The strategic aspect of war includes: the strategic goals and objectives of the parties, the scale of the war, the weapons used, prerequisites for starting and methods of unleashing the war, the forms, methods and features of military operations, the periodization and duration of the war, and its possible consequences.

The strategic features of military operations in the local wars of the 1950–1980s are: the influence of the interests of highly developed states on the course and outcome of military actions; the increasing role of hostilities in the airspace; reliance on the supporting actions of space assets; the availability of open flanks; widespread use of special operations and landing forces; achieving fire superiority and concentrating attacks on critical objects and army forces; carrying out information and psychological operations; testing of the up-to-date and modern weapons and military equipment in real combat.

The operational and tactical features of local wars of the specified period are the ways to solve actual problems of offensive actions: concentrating forces and means (improving combat order, increasing the

range of fire weapons); the breakthrough of the prepared defense (combination of frontal strikes with a wide maneuver); pursuit of the enemy (widespread use of tank forces and advanced detachments); ensuring the surprise initial strike (military deception); encirclement and rapid destruction of enemy groupings (taking active measures to destroy the reserves and disrupt counterattacks); fire damage of the enemy (expansion of the arsenal of means implemented and the redistribution of their role in solving fire tasks); timely build-up of efforts (creation and continuous restoration of reserves); interaction of forces and means (formation of special interaction bodies); improvement of troops and weapon control systems (introduction of automated control systems).

A feature of local wars in the organization and conduct of defense is the implementation of the following measures: the creation and use of defensive groups of troops (increasing the role of highly mobile groups of troops and means of destruction); construction of zones and their engineering reinforcement (increasing the depth of defense construction); organization and management of anti-tank defense (increasing the role of new means of fighting tanks); fire damage of the enemy (increasing the role of the aviation in solving fire tasks); organization and maintenance of air defense (increasing the activity and stability of the air defense system), etc.

Based on the theory of empires, according to which the history of mankind is the history of the creation and destruction of empires, it is assumed that in the 21st century new empires will arise in the world, the world will become polycentric and, accordingly, the number of local wars with new characteristic features will increase.

ՕԴԱՅԻՆ ՆՇԱՆԱԿԵՏԵՐԻ ԹՌԻՉՔՆԵՐԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴ

Մ. Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, գնդապետ, տեխնիկական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի ՀՕՊ-ի ֆակուլտետի պետ

Մոդելավորվել է օդային նշանակետի թռիչքը դեկարտյան կոորդինատային և ռադիոտեղորոշումային կայանի (ՌՏԿ) կոորդինատային համակարգերում, ինչի համար օգտագործվել են նախնական տվյալներ՝ օդային նշանակետի թռիչքի և ՌՏԿ մարտական հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև ԷՀՄ-ի MathCad ծրագիրը: Հետազոտման ընթացքում ստացվել են հետևյալ արդյունքները. դեկարտյան ինչպես նաև ՌՏԿ եռաչափ կոորդինատային համակարգերում օդային նշանակետի թռիչքների ընթացիկ կոորդինատները և թռիչքի հետագծի բնութագրիչները թռիչքների տարբեր եղանակներում՝ հորիզոնական թռիչք հաստատուն արագությամբ, թեքադարձ աջ տարաշարժ, թեքադարձ ձախ տարաշարժ, օձաձև տարաշարժ: Ստացված մոդելների հավաստիությունը կազմել է 88-93 %: Ստացված արդյունքները թույլ կտան հետագայում մշակել օպտիմալ ֆիլտրեր և բարձրացնել օդային նշանակետերի ուղեկցման որակը և կոորդինատների ու թռիչքի հետագծի բնութագրիչների ճշգրտությունը:

Ժամանակակից մարտական գործողություններում լայնորեն կիրառվում են օդային հարձակման միջոցներ (ՕՀՄ-ներ), որոնց մի զգալի մասը պատկանում է նոր սերնդի արտադրանքի: Որպես օրինակ կարելի է դիտարկել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, ՌԴ և այլ պետությունների արտադրության ՕՀՄ-ները, որոնք ստեղծվել են նոր սկզբունքներով, մասնավորապես՝ օգտագործվել են քարշի փոփոխվող վեկտորով շարժիչներ, ինչը հնարավորություն է տալիս կատարելու կտրուկ և կարճատև տարաշարժեր: Դա հանգեցնում է հակառակորդի հակաօդային պաշտպանության զենիթահրթիռային համալիրների և ռադիոտեղորոշումային կայանների գործունեության արդյունավետության զգալի անկման:

ՀՕՊ-ի ՁՀՀ-ների և ՌՏԿ-ների արդյունավետությունը մեծացնելու համար նպատակահարմար է կատարելագործել ռազմական տեխնիկան՝ ռադիոտեղորոշումային տեղեկույթի երկրորդային մշակման նոր մեթոդների և ալգորիթմների կիրառմամբ:

Ռադիոտեղորոշումային տեղեկույթի մշակումը ներառում է առաջնային,

երկրորդային և երրորդային մշակման փուլեր[1]: Մենք կհետազոտենք ռադիոտեղորոշումային տեղեկույթի երկրորդային մշակումը (ՌՏՏԵՄ):

ՌԱԴԻՈՏԵՂՈՐՈՇՈՒՄԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ

ՌՏՏԵՄ-ն ներառում է՝ օդային նշանակետերի կոորդինատների գնահատում, շարժման պարամետրերի (ուղեգիծ, արագություն և այլն) որոշում, հետագծի հայտնաբերում և ուղեկցում: Այդ փուլում հնարավոր է ռադիոտեղորոշումային տեղեկույթի մշակման մեթոդների կատարելագործմամբ մեծացնել նշանակետի ուղեկցման կայունությունը, ինչպես նաև բարելավել տեղեկույթի որակը (ճշգրտել նշանակետի կոորդինատներն ու նրա շարժման արագությունը, արագացումը և ուղղությունը):

Այս նպատակով անհրաժեշտ է հետազոտել ՌՏՏԵՄ-ի կիրառվող մեթոդները: Հետազոտությունները հիմնականում կատարվում են փորձով կամ մոդելավորմամբ: Քանի որ փորձարկումները բավական ծախսատար են (անհրաժեշտ են ինքնաթիռների թռիչքների, ՌՏԿ-ների մարտական աշխատանքի կազմակերպում), ուստի մենք կիրառել ենք մոդելավորման եղանակը:

ՌՏՏԵՄ-ը կատարվում է երկու փուլով.

– առաջինը՝ նշանակետի շարժման հետագծի հայտնաբերում,
– երկրորդը՝ նշանակետի շարժման հետագծի պարամետրերի պարբերական ճշգրտում, որն էլ հենց կոչվում է նշանակետի ***ուղեկցում:***

Նշված պրոցեսի պատկերը ներկայացված է նկ. 1-ում:



Նկ. 1. Նշանակետի հետագծի հայտնաբերման և ուղեկցման ընթացքը

Նշանակետը հնարավոր է հայտնաբերել տարածության *Dmax-Dmin* հատվածում, որը նկարում նշագրված է S_1-ով: S_1 տարածությունը կոչվում է նշանակետի հետագծի ***առաջնային կալման ստրոբ***[2]: Հաջորդ ժամանա-

[1] Տես *С. З. Кузьмин.* Цифровая радиолокация. Киев, 2000:

[2] Տես *Ю. Панасюк, А. Пудовкин.* Обработка информации в радиотехнических системах. Тамбов, 2016:

կահատվածի համար նշանակետի կոորդինատների որոշումը կոչվում է արտարկում (էքստրապոլյացիա), իսկ ստացված դրա նշակետը՝ արտարկված նշակետ: Նշանակետի նախնական պարամետրերի (արագություն և ուղղություն) ճշգրտումը և հաջորդ ժամանակահատվածի համար նշանակետի շարժման արտարկումը կոչվում են հատուկ զտում (կամ հարթեցում):

Արտարկված նշակետերի (նկ. 1-ում նշված են սև եռանկյուններով) շրջակայքում նաև հաշվարկվում է S_2 ստրոբը, որի չափերը պայմանավորված են արտարկման ու ՌՏԿ-ով կոորդինատների չափման սխալներով, և որը կոչվում է ***ուղեկցման ստրոբ***: Եթե S_2 ստրոբում հայտնվում է նշանակետ, ապա որոշում է ընդունվում, որ այդ նշանակետը պատկանում է տվյալ օբյեկտի հետագծին, ուստի և հետագծի ուղեկցումը շարունակվում է, եթե ոչ, ապա ուղեկցումը դադարեցվում է (նկ. 1-ում O_4 նշանակետը հայտնվել է S_4 ստրոբից դուրս):

ՌՏՏԵՄ վերլուծմամբ կարելի է կատարել եզրակացություն, որ նշանակետի հետագծի ուղեկցման խափանման հանգեցնում են հետևյալ հանգամանքները.

- օդային նշանակետերի կտրուկ տարաշարժը,
- ՌՏԿ-ում օդային նշանակետերի ուղեկցման մեթոդների և ալգորիթմների թերությունները,
- ՌՏԿ ուղեկցման համակարգում նշանակետերի պարամետրերի ուղեկցման զտիչների մոդելի անհամապատասխանությունը իրական թռիչքին:

Աերոդինամիկական օբյեկտների դեպքում անհրաժեշտ է մշակել թռիչքի մոդելները, թռիչքի դիտարկման մոդելները և գնահատել դրանց ճշգրտությունը: Մշակված մոդելները պետք է առավելագույնս համապատասխանեն իրական թռիչքներին:

Մեր հետազոտության գիտական խնդրի առաջադրման և լուծման նպատակով սահմանվել են հետևյալ ***նախնական տվյալները***:

- հակառակորդի ՕՀՄ-ներ՝ ՄիԳ-29 ավիացիոն համալիր,
- ՕՀՄ-ների մարտավարատեխնիկական բնութագրեր՝
  - արագություն՝ 1000÷1300 կմ/ժ,
  - բարձրություն՝ 200÷4000 մ,
  - թվաքանակը՝ 1,
  - առավելագույն գերբեռնվածությունը՝
    - ըստ ուղղության՝ 9 g_0,
    - ըստ արագության՝ 1 g_0,
- թռիչքի տեսակներ՝
  - հորիզոնական թռիչք առանց տարաշարժի,
  - տարաշարժ՝ «թեքադարձ» (աջ շրջապտույտ, ձախ շրջապտույտ), «օձաձև»,
- յուրային ՌՏԿ տեսակը՝ երեք կոորդինատային:

Հետազոտությունների կատարման համար որոշվել են ***սահմանները,*** որոնք են. ա) հակառակորդի ՕՀՄ-ները աերոդինամիկական օբյեկտներ են,

հիմնականում՝ մարտավարական ավիացիայի կործանիչներ կամ ռազմաճակատային ռմբակոծիչներ, բ) ՌՏԿ հայտնաբերման գոտում գործում է մեկ ՕՀՄ, գ) օբյեկտը չունի չափեր (նյութական կետ է) և նրա վրա արտաքին ուժեր չեն ազդում, հետևաբար՝ նրա թռիչքը մոդելավորվում է միայն ֆիզիկայի կինեմատիկական օրենքների կիրառմամբ:

Հաշվի առնելով հետազոտության սահմանները և նախնական տվյալները, ինչպես նաև նշանակետերի կոորդինատների, դրանց պարամետրերների գնահատման ու հետագծի ուղղորդման որակների բարելավման անհրաժեշտությունը, կարող ենք գիտական հետազոտության խնդիրը ձևակերպել հետևյալ կերպ. *մշակել մեթոդ և դրա կիրառմամբ ալգորիթմ, որը հնարավորություն է տալիս ստանալու աերոդինամիկական նշանակետի իրական թռիչքի մոդելը, ինչի հիման վրա հետագայում հնարավոր կլինի մշակել օդային նշանակետերի հետագծի ուղղորդման որակի բարելավման և կոորդինատների ու թռիչքի պարամետրերի ճշգրիտ գնահատման համար օպտիմալ զտիչներ:*

Գիտական հետազոտության խնդիրը կարելի է բաժանել հետևյալ ենթախնդիրների.

- կազմել ինքնաթիռի թռիչքի համար նախնական տվյալներ,
- կազմել ՌՏԿ-ի համար նախնական տվյալներ,
- տեսականորեն նկարագրել աերոդինամիկական թռիչքի և ՌՏԿ-ով դրա դիտման մոդելները,
- մոդելավորել օդային օբյեկտի թռիչքը և ՌՏԿ-ով դրա դիտումը՝ հաշվողական տեխնիկայի և համապատասխան ծրագրերի օգտագործմամբ,
- ստանալ օդային նշանակետի թռիչքի ընթացիկ կոորդինատները և հետագծի պարամետրերի (արագություն, արագացում և ուղղություն) արժեքները,
- վիճակագրական մեթոդներով մշակել ստացված տվյալները,
- գնահատել մոդելավորմամբ ստացված պարամետրերի հավաստիությունը՝ ՌՏԿ մարտավարատեխնիկական բնութագրերում տրված արժեքների հետ ստացված միջին քառակուսային շեղումների արժեքների բաղդատմամբ,
- կատարել ստացված արդյունքների վերաբերյալ եզրահանգում:

Եվ այսպես. օդային նշանակետի թռիչքը կարելի է նկարագրել հետևյալ արտահայտությամբ, որը կոչվում է *վիճակի հավասարում*[3].

$$v[n] = \Phi[n]\, v[n-1] + B[n]\eta[n],\ \Phi[n] = \begin{bmatrix} 1 & T_n & T_n^2/2 \\ 0 & 1 & T_n \\ 0 & 0 & 1 \end{bmatrix},\ B[n] = \begin{bmatrix} T_n^2/2 \\ T_n \\ 1 \end{bmatrix}: \quad (1)$$

[3] Տես *Ս. Զ. Կուզմին,* Նշ. աշխ., *Ա. Фарина, Ф. Студер.* Обработка радиолокационной информации. Сопровождение целей. М., 1993:

Օդային նշանակետի թռիչքի հետագծի պարամետրների գտման խնդիրը լուծելիս անհրաժեշտ է հստակորեն որոշել կոորդինատների դիտման *Y(t)* վեկտորի և նշանակետի հետագծի (դիտվող և ոչ դիտվող) պարամետրների *v(t)* վեկտորի միջև կապը: Տվյալ կախումը արտահայտվում է հետևյալ բանաձևով, որը կոչվում է չափման (դիտման) հավասարում՝

$$Y[n] = H[v[n]] + \Delta Y[n], \qquad (2)$$

որտեղ՝$Y[n]$-ը չափվող կոորդինատների վեկտորն է ***n***-րդ քայլում, $H[v[n]]$-ը՝ դիտման վեկտորի փոխադրական մատրիցը, որը ցույց է տալիս դիտվող կոորդինատների և թռիչքի պարամետրերի միջև կապը, $\Delta Y[n]$-ը՝ նշանակետի կոորդինատների չափման սխալների վեկտորը:

Եթե թռիչքի մոդելավորումը *(վիճակի վեկտորը)* մշակված է ազիմուտ-հեռավորություն համակարգում (բևեռային կոորդինատների համակարգ), իսկ դիտումը կատարվում է դեկարտյան կոորդինատներով, ապա դիտման կոորդինատները (հեռավորություն, ազիմուտ, տեղի անկյուն) և շառավղային արագությունը որոշվում են հետևյալ բանաձևերով՝

$$r_n = \sqrt{\hat{x}_n^2 + \hat{y}_n^2 + \hat{z}_n^2},\ \beta_n = \mathrm{arctg}\frac{x_n}{y_n},\ \ \varepsilon_u = asin\left(\frac{ztr_u}{\sqrt{(xtr_u)^2+(ytr_u)^2+(ztr_u)^2}}\right),$$

$$v_r_u = |Vc_u|\cos(\eta_u),\ \eta_u = \left(\frac{\overline{Vc_u}\cdot\overline{LV_u}}{|\overline{Vc_u}|\cdot|\overline{LV_u}|}\right): \qquad (3)$$

(2)-րդ հավասարման մեջ նշանակետի կոորդինատների չափման սխալների վեկտորը՝ $\Delta Y[n]$-ը, ներկայացվում է որպես գաուսյան պատահական հաջորդականություն, ինչից հետևում է, որ կոորդինատների չափման սխալները միմյանցից կախված չեն, ինչը հնարավորություն է տալիս մոդելավորման խնդիրը հաշվարկելու յուրաքանչյուր կոորդինատի համար առանձին, և կոորդինատների չափման սխալները ժամանակի $t_1, t_2, \dots, t_n$ պահերին կարելի է ներկայացնել որպես նորմալ բաշխված պատահական պարամետրների հաջորդականություն, ընդսմին դրանք կազմում են սահմանված համահարաբերակցային R_n մատրից[4]:

ՈՒՂՂԱԳԻԾ ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ԹՌԻՉՔԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ

Օդային օբյեկտի թռիչքը մոդելավորել ենք դեկարտյան կոորդինատների համակարգում: Մոդելավորման համար օգտագործել ենք ԷՀՄ *MathCad* ծրագիրը: Ստեղծված իրադրությունը հետևյալն է. ՕՀՄ-ն կատարում է թռիչք հետևյալ պարամետրներով. թռիչքի բարձրությունը $H_c = 4000$ մ, ՈՏԿ-ի և ՕՀՄ-ի միջև հեռավորությունը $D_c = 60$ կմ, ինքնաթիռը կատարում է ուղղագիծ հավասարաչափ թռիչք $V_c = 1000$ կմ/ժ հաստատուն արագությամբ, և ըստ արագության $\pm(0{,}8 - 1{,}0)\ g_0$ գերբեռնվածությամբ տարաշարժեր՝ արագացում, դանդաղեցում, կոորդինատների մշակման պարբերականությունը T=0,1 վ է:

[4] Տես *С. Н. Сигнеева, М. Зильберман.* Исследование алгоритмов взаимодействия моделей движения в задачах сопровождения воздушных целей. “Transport and Telecommunication”, 2005, Vol. 6, N 3; *Յու. Պանայուկ, Ա. Պուդովկին,* Նշ. աշխ.:

Երեք կոորդինատների համար վիճակի վեկտորի փոխադրման մատրիցը և պատահական աղմուկների (թեթև տարաշարժի) վեկտորի փոխադրման մատրիցը որոշվում են հետևյալ բանաձևերով.

$$F := \begin{pmatrix} 1 & T & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 1 & T & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & T & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \end{pmatrix} \qquad G := \begin{pmatrix} \frac{T^2}{2} & 0 & 0 \\ T & 0 & 0 \\ 1 & 0 & 0 \\ 0 & \frac{T^2}{2} & 0 \\ 0 & T & 0 \\ 0 & 1 & 0 \\ 0 & 0 & \frac{T^2}{2} \\ 0 & 0 & T \\ 0 & 0 & 1 \end{pmatrix} : \qquad (4)$$

ՕՀՄ թռիչքի ընթացիկ կոորդինատները և պարամետրները (արագություն և արագացում) թեթև տարաշարժը չհաշվառելու և հաշվառելու դեպքում որոշվում են հետևյալ բանաձևերով.

$$X1_i := F \cdot X1_{i-1}, \; X1_i := X1_i + G \cdot w1: \qquad (5)$$

ՌՏԿ-ով թռիչքի դիտումը կատարվում է բևեռային կոորդինատների համակարգում: ՌՏԿ-ից մինչև ՕՀՄ եղած հեռավորությունը, ազիմուտը, տեղի անկյունը և շառավղային արագությունը որոշվում են (3)-րդ արտահայտություններով: ՕՀՄ հեռավորության և ազիմուտի արժեքները, որոնք ստացվել են մոդելավորմամբ, պատկերված են նկ. 2-ում: Այդ նկարում բերված կախումների վերլուծությունը ցույց է տալիս, որ հեռավորությունը, ազիմուտը, տեղի անկյունը և շառավղային արագությունը փոփոխվում են ոչ գծային օրենքով, թեև ինքնաթիռի թռիչքը դեկարտյան կոորդինատների համակարգում մոդելավորվել էր գծային կախման օրենքով: Այսինքն՝ դեկարտյան համակարգում կոորդինատները և արագությունը ենթարկվում են գծային օրենքի, իսկ բևեռային կոորդինատների համակարգում՝ ոչ գծային:



Նկ. 2. Նշանակետի հեռավորությունը, ազիմուտը, տեղի անկյունը, շառավղային արագությունը ՌՏԿ-ի նկատմամբ

Դեկարտյան կոորդինատների եռաչափանի համակարգում ինքնաթիռի թռիչքը դիտման սխալները հաշվառելու և չհաշվառելու դեպքերում պատկերված է նկ. 3-ում:



Նկ. 3. ՕՀՄ **ուղղագիծ հավասարաչափ** թռիչքի մոդելները. ա) առանց տարաշարժի և դիտման սխալների հաշվառման, բ) սխալների հաշվառմամբ

Նկ. 3-ից պարզ է դառնում, որ սխալների արժեքները կախված են ՕՀՄ հեռավորությունից. որքան ՕՀՄ-ն մոտենում է ՌՏԿ-ին, այնքան դիտման սխալների արժեքները նվազում են (նկ. 4):



Նկ. 4. Օդային նշանակետի դիտման սխալներն ըստ x, y և z կոորդինատների. օձաձև տարաշարժով թռիչքի մոդելավորում

ՕՀՄ թռիչքի նախնական տվյալները. թռիչքը բաղկացած է 7 հատվածից, ընդսմին 1-ին, 4-րդ և 7-րդ հատվածներում ՕՀՄ-ն կատարում է ուղղագիծ հավասարաչափ թռիչք, 2-րդ և 5-րդ հատվածներում՝ ձախ թեքադարձ, 3-րդ և 6-րդ հատվածներում՝ աջ թեքադարձ, կոորդինատների մշակման

պարբերականությունը՝ T=0,1 վ, ՌՏԿ կոորդինատները՝ xr=0 մ, yr=0 մ, zr=0 մ, ՌՏԿ-ի ալեհավաքի պտտման պարբերությունը՝ $Tobz$=10, ինքնաթիռի կառավարման համակարգի անկայունության և մթնոլորտի վիճակի հետ կապված արագացման մեծությունը՝ a_h=0,2 մ/վ^2:

Հետագծի 2-րդ և 5-րդ հատվածներում օդային նշանակետը կատարում է ***ծախ թեքադարձ*** տարաշարժը: Վիճակի վեկտորի և պատահական աղմուկների (թեթև տարաշարժի) վեկտորի փոխադրման մատրիցները ***ծախ թեքադարձի*** դեպքում որոշվում են հետևյալ բանաձևերով[5].

$$FL := \begin{bmatrix} 1 & T & 0 & 0 & -\omega\cdot\frac{T^2}{2} & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 1-\frac{(\omega\cdot T)^2}{2} & 0 & 0 & -\omega\cdot T & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & \omega\cdot\frac{T^2}{2} & 0 & 1 & T & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & \omega\cdot T & 0 & 0 & 1-\frac{(\omega\cdot T)^2}{2} & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & T & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \end{bmatrix} \quad GL := \begin{pmatrix} -\omega\cdot\frac{T^2}{2} & 0 & 0 \\ -\omega\cdot T & 0 & 0 \\ 0 & 0 & 0 \\ 0 & \omega\cdot\frac{T^2}{2} & 0 \\ 0 & \omega\cdot T & 0 \\ 0 & 0 & 0 \\ 0 & 0 & \frac{T^2}{2} \\ 0 & 0 & T \\ 0 & 0 & 0 \end{pmatrix} : \qquad (6)$$

Վիճակի վեկտորի և պատահական աղմուկների (թեթև տարաշարժի) վեկտորի փոխադրման մատրիցները ***աջ թեքադարձ*** տարաշարժի դեպքում որոշվում են հետևյալ բանաձևերով[6].

$$FR := \begin{bmatrix} 1 & T & 0 & 0 & \omega\cdot\frac{T^2}{2} & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 1-\frac{(\omega\cdot T)^2}{2} & 0 & 0 & \omega\cdot T & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & -\omega\cdot\frac{T^2}{2} & 0 & 1 & T & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & -\omega\cdot T & 0 & 0 & 1-\frac{(\omega\cdot T)^2}{2} & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & T & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \end{bmatrix} \quad GR := \begin{pmatrix} \omega\cdot\frac{T^2}{2} & 0 & 0 \\ \omega\cdot T & 0 & 0 \\ 0 & 0 & 0 \\ 0 & -\omega\cdot\frac{T^2}{2} & 0 \\ 0 & -\omega\cdot T & 0 \\ 0 & 0 & 0 \\ 0 & 0 & \frac{T^2}{2} \\ 0 & 0 & T \\ 0 & 0 & 0 \end{pmatrix} : \qquad (7)$$

ՕՀՄ թռիչքի ընթացիկ կոորդինատները և պարամետրերը (արագություն և արագացում), թեքադարձ տարաշարժի ժամանակ թեթև տարաշարժը հաշվի առնելու և հաշվի չառնելու դեպքում որոշվում են հետևյալ բանաձևերով.

---

[5] Տես նույն տեղում:

[6] Տես *Ս. Զ. Կուզմին,* Նշ. աշխ., *Յու. Պանասյուկ, Ա. Պուդովկին,* Նշ. աշխ.:

$$XL1_i = FL \cdot XL1_{i-1},\ XR1_i = FR \cdot XR1_{i-1}, \qquad (8)$$
$$XL1_i = XL1_i + GL \cdot w1, \quad XR1_i = XR1_i + GR \cdot w1$$

ՕՀՄ հեռավորության, ազիմուտի, տեղի անկյան և շառավղային արագության արժեքները, որոնք ստացվել են մոդելավորման եղանակով, պատկերված են նկ. 5-ում:



Նկ. 5. Ժամանակի ընթացքում ՕՀՄ պարամետրների փոփոխման գրաֆիկներ

Դեկարտյան եռաչափ կոորդինատային համակարգում ինքնաթիռի թռիչքը առանց դիտման սխալի և այդ սխալի հաշվառմամբ պատկերված է նկ. 6-ում:



Նկ. 6. ՕՀՄ **օձաձև տարաշարժով** թռիչքի դիտումը ՌՏԿ-ով.
ա) առանց դիտման սխալի հաշվառման, բ) սխալի հաշվառմամբ

Նկ. 6-ից պարզ երևում է, որ սխալների արժեքները փոփոխվում են՝ կախված ՕՀՄ հեռավորությունից. որքան ՕՀՄ-ն մոտենում է ՌՏԿ-ին, այնքան դիտման սխալների արժեքները փոքրանում են (նկ. 7):

Մոդելավորմամբ ստացվել են հետևյալ տվյալները. միջին քառակուսային շեղումներն ըստ հեռավորության, ազիմուտի ու տեղի անկյան կազմել են՝ $\sigma_{PД} = 355$ մ, $\sigma_{P\beta} = 0{,}28^0$, $\sigma_{P\varepsilon} = 0{,}88^0$, մինչդեռ ՌՏԿ տեխնիկական բնութագրում նշված են հետևյալ արժեքները՝ $\sigma_Д = 400$ մ, $\sigma_\beta = 0{,}3^0$, $\sigma_\varepsilon = 1^0$: Ըստ այդմ շեղումները կազմել են՝ $\delta_{\sigma Д} = 11{,}2\ \%$, $\delta_{\sigma\beta} = 6{,}7\ \%$, $\delta_{\sigma\varepsilon} = 12\ \%$:



Նկ. 7. Օդային նշանակետի դիտման սխալներն ըստ *x, y, z* կոորդինատների

Մշակված մոդելների հավաստիությունը կազմում է 88 - 93 %, այսինքն՝ թռիչքի մոդելը և ՌՏԿ-ով դրա դիտման մոդելը հիմնականում համապատասխանում են իրական թռիչքին և դրա դիտման արդյունքներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Նշանակետերի կոորդինատների ու հետագծի պարամետրերի գնահատման որակի բարելավման նպատակով, հետազոտության սահմանների ու նախնական տվյալների հաշվառմամբ մշակվել են այն մեթոդը և դրա կիրառման ալգորիթմը, որոնք հնարավորություն են տվել ստանալու օդային նշանակետի թռիչքի մոդելը:

2. Աերոդինամիկական մոդելը մշակվել է օդային միջավայրի անհամասեռության օդերևութաբանական վիճակի, ինչպես նաև ինքնաթիռի կառավարման համակարգի սխալների և իներցիոնության հաշվառմամբ:

3. Ընդհատ (դիսկրետ), համակարգերում օդային նշանակետի թռիչքի հետագծի պարամետրերի պատահական (ոչ կանխամտածված) փոփոխությունները ներկայացվել են որպես ոչ համահարաբերակցված աղմուկ՝ զրոյական մաթեմատիկական սպասումով և տրված ցրմամբ:

4. Հետազոտման ընթացքում ստացվել են հետևյալ արդյունքները.

– եռաչափ դեկարտյան և ՌՏԿ բևեռային կոորդինատային համակարգերում մոդելավորվել են օդային նշանակետի թռիչքները՝ կատար-

ված հետևյալ եղանակներով՝ ***հորիզոնական թռիչք*** հաստատուն արագությամբ, ***աջ թեքադարձ*** տարաշարժ, ***ձախ թեքադարձ*** տարաշարժ, ***օձաձև*** տարաշարժ,

– ՕՀՄ թռիչքի մոդելի հավաստիությունը կազմել է 88–93 %,
– որոշվել են օդային նշանակետի ընթացիկ կոորդինատները, տանգենցիալ և շառավղային արագությունները,
– օդային նշանակետի դեկարտյան կոորդինատների սխալների արժեքները փոփոխվում են՝ կախված դիտակետից (ՌՏԿ-ից) նրա ունեցած հեռավորությունից. որքան օդային նշանակետը մոտենում է ՌՏԿ-ին, այնքան սխալների արժեքները նվազում են,
– դեկարտյան համակարգում օդային նշանակետի կոորդինատները ուղղագիծ և հավասարաչափ թռիչքի դեպքում փոփոխվում են գծային օրենքով, իսկ ՌՏԿ կոորդինատային համակարգում՝ ոչ գծային,
– ստացված դոպլերային հաճախականությունները հավասարաչափ և ուղղագիծ թռիչքի դեպքում տարաշարժ սկսելու կամ ավարտելու կետերում փոփոխվում են (միալար) ձևով, իսկ տարաշարժի դեպքում՝ թռիչքաձև,

5. Ստացված արդյունքների հիման վրա, ըստ չափված դոպլերյան հաճախականությունների, հնարավոր է որոշել (հայտնաբերել) օդային նշանակետի տարաշարժի սկիզբը և ավարտը, այսինքն՝ որոշել նշանակետի թռիչքի բնույթը,

6. Ստացված արդյունքները հնարավորություն են ընձեռում մշակելու օպտիմալ տեղեկութային զտիչներ և բարելավելու օդային նշանակետերի ուղեկցման որակն ու թռիչքի պարամետրների որոշման ճշգրտությունը:

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

МЕТОД МОДЕЛИРОВАНИЯ ПОЛЕТА ВОЗДУШНЫХ ЦЕЛЕЙ

М. Р. АБРАМЯН, полковник, кандидат технических наук, начальник факультета ПВО Военного авиационного университета им. А. Ханферянца МО РА

РЕЗЮМЕ

При моделировании полета воздушных целей в декартовой системе координат и системе полярных координат, привязанных к РЛС, использовались исходные данные о полете воздушной цели и тактико-технических и боевых возможностях РЛС, а также компьютерная программа *MathCad.* В результате проведенного исследования были получены модели полета цели в трехмерной декартовой системе координат и в системе полярных координат РЛС для **горизонтального полета** с постоянной скоростью, ***виража вправо***, ***виража влево***, маневра ***«змейка»*** при соответствии разработанных моделей

истинному полету в пределах 88-93 %. Полученные результаты позволят в дальнейшем разработать оптимальные фильтры и повысить качество сопровождения воздушных целей и точность оценивания координат и параметров полета.

MILITARY ENGINEERING

METHOD OF MODELLING THE AIR TARGETS FLIGHT

M. R. ABRAHAMYAN, Colonel, PhD in Technical Sciences, Head, Department of Air Defense, Marshal Armenak Khanperyants Military Aviation University, MOD, RA

SUMMARY

When modelling the air targets flight in the Cartesian coordinate system and the polar coordinate system tied to the radar station, the initial data on the air target flight, and the performance and combat capabilities of the radar, as well as the computer software MathCad were used. Following the study carried out, the models of a target flight in the three-dimensional Cartesian coordinate system and the polar coordinate system of the radar station for the **horizontal flight** at a constant speed, for a ***right turn***, a ***left turn***, and ***"snake"*** maneuver were obtained at the correspondence of the models developed to the actual flight within 88-93 %.The results achieved will allow further development of optimal filters and improvement of the quality of convoying air targets and the accuracy of estimating flight coordinates and parameters.

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴՐՈՒՄ

Ս. Ա. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ, ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ

Արցախահայության դեմ մղված պատերազմում ծանր պարտություն կրելուց հետո Ադրբեջանը չի հրաժարվում ռևանշիստական մտադրություններից՝ ձգտելով Արցախի նկատմամբ իր գերիշխանությունը հաստատելու ռազմական ճանապարհով: Այս նպատակով նա զգալի ծախսեր է անում հարձակողական սպառազինություն գնելու համար, հաճախակի ձեռնարկում է դիվերսիոն ներխուժումների փորձեր, Թուրքիայի հետ համատեղ իրագործում է Հայաստանի և Արցախի տրանսպորտային ու տնտեսական շրջափակում, այդ թվում նաև փորձելով նրանց մեկուսացնել ռազմավարական տարածաշրջանային տնտեսական ծրագրերից, միջազգային ասպարեզում հայության դեմ վարում է տեղեկատվական պատերազմ՝ հայերին ներկայացնելով որպես ագրեսորների ոչ միայն 20–21-րդ դարերում, այլև խոր անցյալում[1]:

Ադրբեջանի այս նկրտումներին Հայաստանը հակադրում է հավասարակշռված արտաքին քաղաքականություն՝ ձգտելով իր խելամիտ պաշտպանական քաղաքականությամբ ու դիվանագիտությամբ զսպելու հակառակորդի «ախորժակը»[2]:

Այս եղանակի կարևոր բաղադրիչներից է միջազգային աջակցությունը: Համաձայն այս ուղեգծի՝ Հայաստանը ակտիվորեն մասնակցում է միջազգային անվտանգության ճարտարապետության զանազան համակարգերի ու կառույցների, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՀԱՊԿ-ը, ԵԱՀԿ-ն: Դրա հետ մեկտեղ Հայաստանը փորձում է իր և Արցախի անվտանգության համար ստանալ միջազգային երաշխիքներ նաև առանձին պետությունների հետ երկկողմ բարեկամական հարաբերությունների ստեղծմամբ[3]: Այս առումով կարևոր են այն պետությունները, որոնց տիտղոսային ժողովուրդներն ունեն հայերի

---

[1] Տես, օրինակ, *Հ. Ս. Քոթանջյան,* Ռազմավարական ուղենիշներ Հայաստանի պատմության նենգափոխման դեմ գիտական պայքարում՝ ցանցապետականության տեսանկյունից: «Աշխատանքային տետրեր», 2010, հմ. 4:

[2] Տես, օրինակ, *Ս. Մ. Մինասյան,* Ռազմական ու քաղաքական դիվանագիտական զսպման տեսությունը և պրակտիկան Ղարաբաղյան հակամարտության դեպքում: «ՀԲ», 2014, հմ. 1–2:

[3] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 30–44:

հետ վաղեմի բարեկամական կապեր, լավ ու դրական կողմերից են ճանաչում հայերին: Այդպիսի պետություններից է Բուլղարիայի Հանրապետությունը:

Հայ և բուլղար ժողովուրդներին միավորում է դարավոր բարեկամությունը: Առաջին հայկական համայնքները Բուլղարիայում ձևավորվել են դեռ 5-րդ դարում: Ավարայրի ճակատամարտից հետո Արտավան և Գագիկ իշխանները, խուսափելով երկրում ստեղծված ծանր կացությունից, իրենց զորքերով հաստատվել են Բալկանյան թերակղզու արևմտյան կողմերում՝ Նիկիա (այժմ՝ Նիշ) քաղաքում: Այնուհետև պարսիկների և արաբների դեմ Բյուզանդիայի վարած պատերազմների հետևանքով (մասնավորապես՝ Հուստինիանոս Ա (527–565 թթ.), Մորիկ (կամ Մավրիկիոս, 582–602 թթ.) և Կոստանդին Ե Կոպրոնիմոս (741–775 թթ.) կայսրերի հրամաններով) հայերը Վասպուրականից, Կարինից ու Մելիտենեից բռնի կերպով տեղափոխվել ու բնակեցվել են Բյուզանդական կայսրության հյուսիսային և արևմտյան սահմաններում[4]:

Առանձնակի մեծ զանգվածներով հայեր բռնագաղթվեցին, երբ Բյուզանդիայում ջախջախվեցին պավլիկյանների և թոնդրակեցիների աղանդավորական շարժումները: Թեոդորա (842–856 թթ.), Վասիլ Ա (867–886 թթ.), Հովհաննես Ա Չմշկիկ (969–976 թթ.) կայսրերը հազարավոր հայերի բնակեցրին Ֆիլիպոպոլսի (այժմ՝ Պլովդիվ) շրջակայքում, Մակեդոնիայում և Դանուբի առափնյա շրջաններում: Հայ և օտար պատմիչների վկայությամբ՝ հայազգի հմուտ զորապետ Սամուել «Կոմսաձագը» գլխավորել է Բյուզանդիայի դեմ բուլղարների ապստամբությունը, վայելել նրանց սերն ու հարգանքը և 997–1014 թթ. եղել նրանց թագավորը[5]:

Հիշատակության է արժանի նաև հայ կամավորների մասնակցությունը 1912–1913 թթ. Բալկանյան պատերազմներին: Բուլղարահայության հոծ զանգվածների հետ ուսուսի բուլղարական բանակի շարքերում կռվում էր Հայաստանից գնացած վաշտը՝ «վոյեվոդա» Անդրանիկի գլխավորությամբ և Գարեգին Նժդեհի մասնակցությամբ[6]:

Բուլղարիայում հայերի թիվն զգալի չափով աճեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում կազմակերպված Հայոց եղեռնից, ապա հունա-թուրքական պատերազմից հետո:

Ընդհանրապես հայերի ու բուլղարացիների բարեկամության կարևոր հանգուցակետերից է միևնույն դարավոր թշնամու՝ հայերին ու բուլղարացիներին բազմաթիվ անգամ սրի քաշած Թուրքիայի գործոնը: Եվ պատահական չէ, որ նույնիսկ «ժողովուրդների բարեկամության» կարգախոսով առաջ-

[4] Տես *Ն. Գասապյան,* Բուլղարահայ անցյալի շուրջ: «Երևան» (Սոֆիա), 1959, հմ. 23, *Ա. Գ. Աբրահամյան,* Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա: Ե., 1964, էջ 308–317:

[5] Տես նույն տեղում:

[6] Այս մասին հանգամանորեն տես *Ռ. Հ. Համբարձումյան,* Գարեգին Նժդեհը 1912–1913 թթ. առաջին բալկանյան պատերազմում: «ՀԲ»: 2005, հմ. 1:

նորդվող բուլղարական կոմունիստների ղեկավարները Տոդոր Ժիվկովի գլխավորությամբ իրագործում էին մահմեդականների բռնի բուլղարացում[7]:

Ու թեև այսօր Բուլղարիան, ներգրավվելով արևմտյան ժողովրդավարական համակարգում, առերես հրաժարվել է նման դրսևորումներից և պահպանում է չեզոքություն, սակայն, մեր կարծիքով, նա մեզ համար ներկայացնում է որոշակի բարեկամական ներուժ, որը խելամիտ ու կշռադատված քաղաքականության դեպքում կարող է տալ որոշակի հայանպաստ պտուղներ:

Նման տեսակետին հիմք են ծառայում ժողովրդավարական Բուլղարիայի և անկախ Հայաստանի ղեկավարների միջև տեղի ունեցած շփումներում արտահայտված մի շարք կարծիքներ:

Այսպես. 1994 թվականից զգալիորեն աճում են ՀՀ-ից Բուլղարիա արտահանվող և այնտեղից ներկրվող ապրանքների ծավալները: Դա պայմանավորված է երկկողմ հարաբերությունների կայունացմամբ և փոխադարձ բարձր մակարդակի հանդիպումներով[8]: Այս ցուցանիշով Բուլղարիան առաջինն է Արևելյան Եվրոպայի այն երկրների շարքում, որոնք չեն եղել ԽՍՀՄ կազմում:

Բուլղարիայի Հանրապետության դիրքորոշումը ԼՂ հակամարտության վերաբերյալ հստակ է և հիմնված է միջազգային հարթակներում ընդունված սկզբունքների վրա: Բուլղարիան բազմիցս հայտարարել է, որ հարգում է Մինսկի խմբի աշխատանքները և վստահում է եռանախագահների գործունեությանը: Երկու երկրների՝ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության հետ հարաբերություններում նա հանդես է գալիս խիստ հավասարակշռված և չի ցուցաբերում կողմերին այնպիսի աջակցություն, որը հակասեր մյուսի շահերին:

Բուլղարիայի դիրքորոշումը հետաքրքրական է թեկուզ այն առումով, որ այստեղ ապրում է հոծ թուրքական համայնք, որի թիվը հասնում է շուրջ 800000-ի: Թուրքերը մեծապես ազդում են ինչպես Բուլղարիայի տնտեսական, այնպես էլ քաղաքական գործունեության վրա: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ թուրքերը Բուլղարիայում թվաքանակով երկրորդ էթնիկական խումբն են: Նրանք 8 տարի շարունակ եղել են Բուլղարիայի կառավարող դաշնադրության անդամ[9]: Բուլղարիայի հավասարակշիռ մոտեցումը ԼՂ խնդրում մեծ ջանքեր էր պահանջում ինչպես կառավարող շրջանակների կողմից, այնպես էլ տեղի հայկական համայնքից, որ մի քանի անգամ պակաս էր ներկայացված Բուլղարիայի կառավարման օղակներում և տնտեսության մեջ:

---

[7] Տես, օրինակ, *Искра Баева.* Ведущие тенденции в болгарской внешней политике в 70-80-е годы XX века. «Славяноведение», 2010, № 1:

[8] Տես «ՀՀ տնտեսությունը 1994 թ. հունվար-մարտին»: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 1994 թ. մայիսի 10:

[9] Տես *Հ. Նահապետյան,* Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը: Ե., 2010, էջ 93:

Ամբողջ հակամարտության ընթացքում, ինչպես նաև հետագա տարիներին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողքին է եղել բուլղարուհի լրագրող Ցվետանա Պասկալևան, որը իր ֆիլմերի միջոցով ավելի է ջերմացնում երկու ժողովուրդների հարաբերությունները՝ բուլղարների համար ավելի հանգամանորեն և անաչառ կերպով ներկայացնելով խնդրի էությունն ու ավելի հասկանալի դարձնելով հայերի պահանջների ու քայլերի արդարացիությունը:

ԼՂ խնդիրը հայ-բուլղարական հարաբերություններում մշտական քննարկման առարկա է ամենաբարձր մակարդակով տեղի ունեցող հանդիպումների ժամանակ: Ընդսմին Հայաստանի և Բուլղարիայի ղեկավարների հանդիպումներին հաջորդում կամ նախորդում են բուլղարական կողմի հանդիպումները Ադրբեջանի ղեկավարության հետ, սակայն դրանք հիմնականում բացատրվում են տնտեսական գործոններով[10], իսկ Բուլղարիայի ղեկավարների այցերը կրում են գլխավորապես տարածաշրջանային բնույթ: Այդպիսով՝ Բուլղարիան ի ցույց է դնում իր տարածաշրջանային քաղաքականության հավասարակշռվածությունը:

Այսպես. 1997 թ. Հայաստանի և Բուլղարիայի արտգործնախարարներ Ա. Արզումանյանը և Ն. Միխայիլովան բանակցությունների ընթացքում քննարկեցին ԼՂ խնդիրը: Ընդսմին Ն. Միխայիլովան հայտարարեց, որ Բուլղարիան ողջունում է 1994 թվականից ի վեր Ղարաբաղյան ռազմաճակատում պահպանվող կրակի դադարեցման ռեժիմը, պատրաստ է աջակցելու հակամարտության կարգավորմանն ուղղված հայկական ջանքերին և հանդես է գալիս հակամարտությունը զուտ բանակցությունների միջոցով կարգավորելու օգտին[11]: Այս առումով Բուլղարիայի դիրքորոշումը էական տարբերություններ չուներ մի շարք Եվրոպական երկրների ունեցած տեսակետից, թեև, ըստ էության, հակադրվում էր Ադրբեջանի նկրտումներին:

Միևնույն ժամանակ, Բուլղարիան, Ադրբեջանի հետ ներգրավված լինելով մի շարք տարածաշրջանային ծրագրերում, որոնց վտանգումը խիստ անբարենպաստ ազդեցություն կունենար բուլղարների տնտեսական դրության վրա, այդուհանդերձ փորձում էր օգնություն ուղարկել ԼՂՀ հատկապես՝ հակամարտության զինված փուլի օրերին: Մասնավորապես՝ 1994 թ. Բուլղարական Կարմիր խաչի օգնությամբ Հայաստան փոխադրվեց դեղորայք, որը հատուկ ցուցումով պետք է ուղարկվեր Լեռնային Ղարաբաղ[12]:

Ղարաբաղյան խնդրի վերաբերյալ Բուլղարիայի Հանրապետության Նախագահ Գ. Պրվանովը խոստովանում էր, որ բալկանյան հակամարտությունների լուծման մոդելը հնարավոր չէ ամբողջությամբ կիրառել հայ-ադրբեջա-

[10] Տես «Զարգացումները վերածենք գործնական հարաբերությունների»: «Հայաստանի Հանրապետություն», 1999 թ. դեկտեմբերի 3:

[11] Տես «Հայաստանի և Բուլղարիայի համագործակցությունը կխորանա»: «Հայաստանի Հանրապետություն», 1997 թ. նոյեմբերի 8:

[12] ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանք, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, g. 1, գ. 218, թ. 123:

նական հարաբերությունների համար, քանի որ հակամարտությունները տարբեր են, սակայն բալկանյան փորձից կարելի է քաղել ուսանելի օրինակներ[13]:

«Ղարաբաղյան հարցի կարգավորումը, ինչպես հայտնի է, իրականացվում է ԵԱՀԿ շրջանակներում՝ Մինսկի խմբի միջնորդությամբ, և ԵԱՀԿ նախագահող երկիրը բավական լուրջ դերակատարություն է ունենում»,– 2003 թ. սեպտեմբերի 8-ին Սոֆիայում Բուլղարիայի Նախագահի հետ համատեղ ասուլիսում հայտարարեց Հայաստանի այն ժամանակվա Նախագահ Ռ. Քոչարյանը, որի այցը Բուլղարիա ԼՂ խնդրի համար բավական կարևոր էր, քանի որ Բուլղարիան հենց այդ տարի ստանձնեց ԵԱՀԿ նախագահությունը: ԵԱՀԿ նախագահությունը Բուլղարիային հանձնելու առաջարկությունը ԵԱՀԿ անդամ պետությունների մեծ մասի հետ պաշտպանել էր Հայաստանը, որը աջակցել էր Բուլղարիային նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ լիիրավ անդամ ընտրվելու հարցում[14], ուստի այս մարմիններում վերջինից ակնկալում էր հայանպաստ դիրքորոշումներ:

Բուլղարիան՝ որպես ԵԱՀԿ նախագահ, դրականորեն էր գնահատում և պաշտպանում ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերն ու պատրաստ էր աջակցելու Ադրբեջանին և Հայաստանին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկարաժամկետ փոխընդունելի լուծում գտնելու նրանց ջանքերում: 2004 թ. դրությամբ հարկավոր էր, ըստ Բուլղարիայի դեսպանի, ջանքերը կենտրոնացնել «շփման գծի» իրադրության վատթարացումը կանխելու և Հայաստանի ու Ադրբեջանի միջև ավելի կառուցողական ու արդյունավետ երկխոսություն հաստատելու վրա: Եվ ըստ այդմ այսպես կոչված «Պրահայի գործընթացի» շրջանակներում կայացան երկու պետությունների արտաքին գործերի նախարարների հանդիպումները, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ Վարշավայում և Աստանայում նախագահներ Քոչարյանի ու Ալիևի հանդիպումները, որոնք կարևոր քայլեր էին այդ ուղղությամբ[15]:

Բուլղարիան երկու երկրներին կոչեր էր անում զերծ մնալու ռազմատենչ հայտարարություններից և շահարկումներից, քանի որ հակամարտության ռազմական կարգավորման փորձերն ավելի կբարդացնեն Հարավային Կովկասում տիրող իրավիճակը և բավական բացասական հետևանքներ կունենան տարածաշրջանի կայունության համար, այդ թվում նաև Ադրբեջանի ու Հայաստանի ժողովուրդների համար[16]:

Արժեքավորելով տարածաշրջանում խաղաղության և համագործակ-

[13] Տես նույն տեղում:

[14] Տես «Ազգ» օրաթերթ, 2003 թ. սեպտեմբեր 4, էջ 8:

[15] Տես «Մենք գտնվում ենք բուլղարա-հայկական հարաբերությունների աշխուժացման փուլում»: «Հայաստանի Հանրապետություն», 2004 թ. հոկտեմբերի 5:

[16] Տես «Սերգեյ Ստանիշև. ԵՄ-ին միանալու ձգտումներում Հայաստանը կարող է աջակցություն ստանալ Բուլղարիայից»: «Հայաստանի Հանրապետություն», 2007 թ. նոյեմբերի 13:

ցության մթնոլորտի առկայությունը՝ ԲՀ վարչապետ Ս. Ստանիշևը նաև նշում էր, որ Բուլղարիան շատ լավ է գիտակցում Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման բարդությունը և գիտի, որ դա բաց վերք է Հայաստանի ու Ադրբեջանի համար՝ պատերազմում եղել էին բազում զոհեր, կային մեծ թվով փախստականներ: Բայց որքան էլ բարդ լինեն բանակցությունները՝ Բալկանների փորձը վկայում է, որ ավելի լավ է տարին 365 օր բանակցել, քան մեկ օր պատերազմել: Ստանիշևի գնահատմամբ՝ այդ գործընթացում կան որոշակի ռիսկեր, մասնավորապես՝ Ադրբեջանը, հիմնվելով տնտեսական զարգացման վրա, որոնում է ռազմական լուծումներ: Ստանիշևը նաև օրինակ էր բերում Բուլղարիայի և Հունաստանի միջև դարեր ի վեր մղված պատերազմները՝ դեպի Եգեյան ծով ելք ունենալու համար: Երկու երկրները, լինելով ԵՄ-ի անդամ, բնավ չունեին խնդիրներ սահմանների առումով, և դա լավագույն ելքն էր իրական համագործակցությամբ խնդիրները լուծելու համար:

Ադրբեջանը մշտապես փորձել է դիվանագիտական միջոցներով սահմանափակել Բուլղարիայի հայ գործիչների ազդեցությունը: Ադրբեջանի ջանքերով կազմակերպված այդպիսի իրադարձություն էր ՀԲԸՄ Բուլղարիայի մասնաճյուղի երիտասարդական միության նախագահ Հայկ Կարապետյանի հեռանալը Պլովդիվի ազգային և ինտեգրման հարցերով զբաղվող խորհրդի անդամի պաշտոնից[17]: Ադրբեջանի ԱԳՆ ուղարկված հերթական զեկուցագրերից մեկում Ադրբեջանի դեսպան Գուրբանովան տեղեկացնում էր, որ Բուլղարիայի էկոնոմիկայի նախարար Էմիլ Կարանիկոլովի հետ 2017 թ. մայիսի 17-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ նշել էր, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Բուլղարիայի մասնաճյուղը 2017 թ. հունիսի 20-ին Սոֆիայի Հայկական հանրային տանը կազմակերպելու է «Հայացք Ղարաբաղին – պատմություն և լուսանկարներ» միջոցառումը: Նա դժգոհել էր այն հանգամանքից, որ միջոցառմանը մասնակցելու էր նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության Պլովդիվի երիտասարդական կազմակերպության նախագահ, Պլովդիվում բնակվող և Արցախ այցելած՝ Բուլղարիայի քաղաքացի Հայկ Կարապետյանը:

Գուրբանովան Բուլղարիայի էկոնոմիկայի նախարարին խնդրել էր միջնորդել, որպեսզի բուլղարական կառավարությունը արգելի միջոցառումը: Թեև միջոցառումը չէր արգելվել, սակայն հիմք էր ծառայել Հ. Կարապետյանին պաշտոնից ազատելու համար[18]: Ըստ Հայկ Կարապետյանի՝ բուլղա-

[17] Տես *Ա. Անանյան, Ա. Պետունց, Դ. Մամյան,* Ադրբեջանի բուլղարական թղթապանակ. ՀԲԸՄ Բուլղարիայի մասնաճյուղի դեմ Ադրբեջանի ճնշումների բացահայտումը նոր սկանդալային մանրամասներ է ստանում: «Արմենպրես», 08.08.2017 (https://armenpress.am/arm/news/901192/exposure-of-azerbaijanE28099s-pressures-on-agbuE28099s-bulgarian-branch-results-in-new-scandalous-details.html):

[18] Տես *Ա. Անանյան, Ա. Պետունց, Դ. Մամյան,* Ադրբեջանի բուլղարական թղթապանակը. Ձախողվել են Բուլղարիայում օրինական գործող ՀԲԸՄ միջոցառումը խոչընդոտելու դեսպանի քայլերը: «Արմենպրես», 14.06.2017 (https://armenpress.am/arm/news/898721.html):

ական իշխանությունները այլ պետության դեսպանությանը թույլ էին տալիս միջամտել իրենց երկրի ներքին գործերին: «Բուլղարիայի հայ համայնքը մեծապես ինտեգրված է և համատեղ կեցության հարյուրամյակների ընթացքում լուրջ ներդրում է բերել Բուլղարիայի զարգացման գործում, կյանքի բոլոր ոլորտներում», – նշում էր Կարապետյանը[19]: Նրա հնչեցրած դիրքորոշումը հիմք էր տալիս ենթադրելու, որ իր պաշտոնաթողությունը կապված էր ադրբեջանական դեսպանատան գործունեության հետ, և Բուլղարիայի պատկան մարմինները երկրի քաղաքացու իրավունքները պաշտպանելու փոխարեն տեղի էին տվել տարատեսակ ճնշումների[20]:

Բաքվի գործելաոճը հայկական կազմակերպությունների համար նորություն չէր: Հայ բարեգործական ընդհանուր միությունը համարում էր, որ իրենց կազմակերպության դեմ Բաքվի պաշտոնական ներկայացուցիչների նախաձեռնած արշավը առանձին միջադեպ չէր, այլ Հայկական սփյուռքի կազմակերպությունների դեմ ուղղված ադրբեջանական պետական քաղաքականության մաս: ՀԲԸՄ Եվրոպայի պատասխանատու Նիկոլա Դավիդյանը նշում էր, որ դա ամենայն հավանականությամբ առաջին դեպքը չէր: Ըստ նրա՝ եղել էին նաև այլ դեպքեր, պարզապես այդ մասին հայտնի չի դարձել: «Եվրոպական մի շարք երկրների ու հաստատությունների վրա ազդելու համար ադրբեջանական դիվանագիտությունն օգտագործում է նավթային լծակներն ու «խավիարային դիվանագիտության» գործիքակազմը»,–շեշտում էր նա[21]:

Դավիդյանը նաև հաստատում էր, որ իրենք նպատակ ունեն, որպեսզի եվրոպական կառավարությունները հասկանան Արցախի և տարածաշրջանի նկատմամբ ազնիվ քաղաքականություն որդեգրելու անհրաժեշտությունը:

Ըստ Ա. Քոյումջյանի, որը ՀԲԸՄ մեկ այլ մասնաճյուղի ղեկավար է, ադրբեջանական կողմը մշտապես փորձել է բուլղարական իշխանությունների վրա ճնշումներ գործել՝ օգտագործելով իր տնտեսական ռեսուրսները և համատեղ նախագծերը[22]:

Միևնույն ժամանակ, Քոյումջյանն ընդգծում է, որ Բուլղարիայի իշխանությունները մեծ դեր են տալիս տեղի հայ համայնքի հետ հարաբերություններին, քանի որ բուլղարահայերը ակտիվ գործունեություն են ծավալում ինչպես մշակութային, այնպես էլ տնտեսական և հասարակական շատ այլ բնագավառներում[23]: Հայկական համայնքը ակտիվիվ դեր է խաղում Ադրբեջանի ֆինանսավորած անձանց հակահայկական գործունեությունը չեզոքացնելու գործում:

[19] Տես *Ա. Անանյան, Ա. Պետունց, Դ. Մամյան,* Ադրբեջանի բուլղարական թղթապանակ. ՀԲԸՄ Բուլղարիայի մասնաճյուղի դեմ Ադրբեջանի ճնշումների ... (https://armenpress.am/arm/news/901192/exposure-of-azerbaijanE28099s-pressures-on-agbuE28099s-bulgarian-branch-results-in-new-scandalous-details.html):

[20] Տես նույն տեղում:

[21] Տես նույն տեղում:

[22] Տես նույն տեղում:

[23] Տես նույն տեղում:

2010-ական թվականներին Բուլղարիայում երևան եկան մի շարք գործիչներ, որոնք Ադրբեջանի օգտին ակտիվ քարոզչություն էին վարում և փորձում էին խաթարել ինչպես հայ-բուլղարական կապերը, այնպես էլ այն հավասարակշռությունը, որը Հարավային Կովկասի նկատմամբ որդեգրել էին Բուլղարիայի բարձրագույն իշխանությունները: Այդպիսի գործիչներ էին Լյուբոմիր Միխայլովան, Իրինա Բոկովան, Եվգենի Կիրիլովը, Կառլին Միտրևը և ուրիշներ[24]: Սակայն ի հեճուկս այդ մարդկանց Բուլղարիան, թեև փոքր քանակությամբ, զենք էր վաճառում ՀՀ-ին, ինչը չենք կարող ասել Ադրբեջանի պարագայում: Դա է վկայում ՄԱԿ-ի սովորական սպառազինությունների ռեգիստրում հրապարակված զեկույցը[25], ըստ որի՝ Հայաստանը ձեռք էր բերել 1094 միավոր ձեռքի գնդացիր[26]:

ՀՀ-ն և ԲՀ-ն 2004 թ. սկսած ակտիվացրեցին պաշտպանական բնագավառում իրենց համագործակցությունը: Հայաստանի և Բուլղարիայի պաշտպանության նախարարությունների միջև հոկտեմբերի 23-ին ստորագրվեց համագործակցության ծրագիր[27]:

Այս առիթով ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը իր գոհունակությունն արտահայտեց բուլղարացի գործընկեր Նիկոլայ Սվինարովի Հայաստան կատարած այցի կապակցությամբ՝ այն համարելով շատ օգտակար: «Մենք ունենք համագործակցության բազմաթիվ եզրեր, ընդհանուր հետաքրքրություններ, և դրանց վավերացմանն էր ուղղված այսօրվա փաստաթղթի ստորագրումը»,– նշեց նա[28]:

Նիկոլայ Սվինարովը հույս հայտնեց, որ երկու երկրների համագործակցությունը և՛ պաշտպանության, և՛ այլ ոլորտներում ավելի մեծ ծավալ կստանա և կօգնի Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը լուծելու գործին: Նրա խոսքով՝ եթե «միջազգային քաղաքական մթնոլորտը» թույլ տա, Բուլղարիան Հայաստանին կտրամադրի ամեն տեսակի սպառազինություն և տեխնիկա հայկական համեմատաբար երիտասարդ բանակը վերազինելու համար: «Մենք ուրախանում ենք, որ հայ-բուլղարական հարաբերությունները հաջող ներկա ունեն, և հուսով ենք, որ ապագայում դրանք է՛լ ավելի կզարգանան»,– հայտարարեց նա[29]:

Այսպիսով՝ Արևելյան Եվրոպայից դեպի Հայաստան սպառազինություններ ներկրելու տեսանկյունից Բուլղարիան կարևոր գործընկեր է:

---

[24] Հանգամանորեն տես *Գ. Կոլարով,* «Ադրբեջանական լվացքատունը» և բուլղարական ավանդական ձախ կուսակցության քաղաքական մահը: «Գլոբուս», 2017, հմ. 9:

[25] Տես “UNROCA original report: Bulgaria 2017” (https://www.unroca.org/bulgaria/report/2017/):

[26] Տես *Ն. Սարոյան,* 2017-ին Հայաստանը Բուլղարիայից գնել է ավելի քան 1000 միավոր ձեռքի գնդացիր: «Ռազմ.info», 04.06.2018 (https://razm.info/126673):

[27] Տես «Ստորագրվեց Հայաստան–Բուլղարիա 2004 թ. համագործակցության ծրագիր»: «Ազգ», 2003 թ. հոկտեմբերի 24:

[28] Տես նույն տեղում:

[29] Տես նույն տեղում:

2017 թ. օգոստոսի 17-ին Բուլղարիան Հայաստանում նշանակեց իր ռազմական կցորդին[30]: Կցորդի հետ հանդիպման ժամանակ բարձր գնահատվեցին պաշտպանության ոլորտում հայ-բուլղարական հարաբերությունների մակարդակը, և վստահություն հայտնվեց, որ ռազմական կցորդի գրասենյակի բացումը կնպաստի պաշտպանական համագործակցության հետագա զարգացմանն ու խորացմանը[31]: Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը շեշտել էր համագործակցության զարգացման հնարավորությունները մի շարք ոլորտներում և կարևորել փորձի փոխանակումը, մասնավորապես, ռազմական ոստիկանության, ռազմական կրթության, մարդկային ռեսուրսների կառավարման և այլ բնագավառներում[32]: Կարևորվել էր նաև հայ-բուլղարական ռազմատեխնիկական համագործակցության զարգացումը[33]: Առանձնահատուկ կարևորություն ունի նաև ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության պետ Արթուր Բաղդասարյանի՝ 2018 թ. Սոֆիա կատարած այցը, որի ժամանակ քննարկվեցին ռազմական ոստիկանության գործունեության հնարավորությունները, տարածաշրջանային և համընդհանուր անվտանգության արդիականացմանն ուղղված տարատեսակ հարցեր:

2018 թ. ԲՀ Նախագահ Ռումեն Ռադևի այցի ընթացքում ևս խոսվեց ԼՂ հակամարտության մասին: Նշվեց, որ ՀՀ-ի համար հույժ կարևոր է մեր գործընկերների աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով ընթացող գործընթացին, ինչը համահունչ է նաև ԵՄ-ի ընդհանուր դիրքորոշմանը[34]:

Դրա հետ մեկտեղ Բուլղարիան խրախուսում է Լեռնային Ղարաբաղում ծավալվող տնտեսական գործընթացները: Հիմնական գործոնը զբոսաշրջությունն է, որով Բուլղարիան փորձում է նաև բուլղարացիներին տեղեկացնել հակամարտության խնդիրների մասին, հաղորդակից դարձնել տեղի ժողովրդի պատմությանն ու մշակույթին: Համապատասխան բուլղարական կազմակերպությունները գովազդում են զբոսաշրջության այս ուղղությունը[35]: Հարկ է նշել, որ ընդհանրապես երկու հայկական պետությունների հետ

[30] Տես «Հանդիպում ՀՀ ՊՆ վարչական համալիրում», 17.08.2017 (http://www.mil.am/hy/news/4905):

[31] Տես *Տ. Հովհաննիսյան,* Բուլղարիան Հայաստանում ռազմական կցորդի գրասենյակ է բացել: «Ռազմ.info», 18.08.2017 (https://razm.info/109761):

[32] Տես «ՀՀ պաշտպանության նախարարը Բուլղարիայի դեսպանի հետ քննարկել է երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր», 15.02.2017 (http://www.mil.am/hy/news/4640):

[33] Տես *Գ. Հարությունյան,* Վիգեն Սարգսյանը Բուլղարիայի դեսպանի հետ քննարկել է պաշտպանական գործակցությունը: «Ռազմ.info», 15.02.2017 (https://razm.info/96408):

[34] Տես «Նախագահ Սերժ Սարգսյանի և Բուլղարիայի նախագահ Ռումեն Ռադևի համատեղ մամուլի ասուլիսը», 12.02.2018 (https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2018/02/12/President-Serzh-Sargsyan-and-President-Rumen-Radev-at-the-joint-conference-responded-to-the-questions):

[35] Տես *В. Дрехарски*. Нагорный Карабах на автомобиле глазами туриста из Болгарии, 14.08.2013 (http://www.awaytravel.ru/content/нагорный-карабах-на-автомобиле-глазами-туриста-из-болгарии):

տնտեսական գործակցությունը բավական ակտիվ է, և այս առումով Բուլղարիան ևս հավասարակշռում է տարածաշրջանում իր վարած քաղաքականությունը:

Այսպիսով՝ Հայաստանի համար կարևոր է Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ Բուլղարիայի վերաբերմունքը, որը մշտապես արծարծվում է տարբեր մակարդակի հանդիպումների ժամանակ: Բուլղարիան հակամարտության նկատմամբ իր մոտեցումների հավասարակշռությունը հնարավորինս դրսևորում է մշտապես՝ նպաստելով բանակցային գործընթացին, հատկապես՝ ԵԱՀԿ-ում իր նախագահության շրջանում: Բուլղարիայի դերը կարևոր է նաև սպառազինությունների ներկրման տեսանկյունից: Այսպիսով՝ Բուլղարիան, Ղարաբաղյան հարցում առերես պահպանելով Արևմուտքի որդեգրած հավասարակշիռ վերաբերմունքը, այդուհանդերձ ներկայացնում է զգալի ներուժ, որը ՀՀ կշռադատված քաղաքականության դեպքում կարող է վերածվել զգալի նպաստավոր գործոնի: Ընդսմին բուլղարական հասարակության և իշխանությունների հետ հնարավոր աշխատանքը նպատակահարմար է կազմակերպել ինչպես միջազգային ասպարեզում, այնպես էլ Բուլղարիայի ներպետական դաշտում թուրք-ադրբեջանական դաշինքի վարած ինտենսիվ հակահայկական գործունեության հաշվառմամբ:

ПОЛИТИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

ПОЗИЦИЯ БОЛГАРИИ В ВОПРОСЕ НАГОРНОГО КАРАБАХА

С. А. БАГДАСАРЯН, аспирант кафедры Истории Армении ЕГУ

РЕЗЮМЕ

Реваншистской и милитаристской антиармянской политике Азербайджана Армения противопоставляет сбалансированную внешнюю политику, важным компонентом которой является международная поддержка на основе как участия Армении в создании архитектуры международной безопасности (в сотрудничестве с такими ее системообразующими элементами, как ООН, ОДКБ, ОБСЕ, НАТО), так и развития двухсторонних дружественных отношений. С этой точки зрения для Армении особую важность представляют те государства, с титульными нациями которых армянский народ имеет исторические взаимоотношения, основанные на взаимопомощи и доброжелательности. Одним из таких государств является Республика Болгария, с народом которой армян объединяет не только вековая борьба против Османской империи, но и судьба народа, не раз подвергавшегося резне со стороны турок.

Несмотря на то, что сегодня в вопросе Нагорного Карабаха Болгария как часть демократического Запада стремится сохранить

нейтралитет, и несмотря на «икорную» и «нефтяную» дипломатии Азербайджана, направленные на усиление своего влияния на общественное мнение и политику Болгарии, существуют политические и экономические предпосылки для продвижения дружественных армяно-болгарских отношений и в сфере Карабахского конфликта. Эта точка зрения основывается на анализе развития взаимоотношений на уровне глав государств и правительств, а также сферы общественных и военно-экономических связей между Арменией и Болгарией.

POLITICAL SECURITY

BULGARIA'S POSITION IN RELATION TO THE NAGORNO-KARABAKH ISSUE

S. A. BAGHDASARYAN, Post-Graduate Student,
Chair of the History of Armenia, YSU

SUMMARY

Armenia opposes Azerbaijan's revanchist and militaristic anti-Armenian policy with her balanced foreign policy, a key component of which is the international support based on both Armenia's participation in crafting the international security architecture (in collaboration with such backbone elements, as the UN, CSTO, OSCE, and NATO), and on the development of bilateral friendly relations. From that point, those states, with the titular nations of which Armenia has had historical relationship based upon mutual aid and benevolence, is of particular importance for her. The Republic of Bulgaria is one of those states in the list, with whose people Armenians are tied not only with their centuries-old struggle against the Ottoman Empire, but also with the fate of the people, time and again massacred by the Turks.

Notwithstanding the fact that today Bulgaria, as a constituent in the democratic West, is seeking to preserve neutrality in relation to the Nagorno-Karabakh issue, and, notwithstanding Azerbaijan's "caviar" and "oil" diplomacy, targeted at enhancing its influence on Bulgaria's public opinion and policy, there do exist political and economic prerequisites for fostering Armenian-Bulgarian friendly relations in the sphere of Karabakh conflict. This very standpoint is based upon the analysis of the development of relations on the level of the heads of states and governments, as well as the sphere of social and military-economic ties between both Armenia and Bulgaria.

ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԵԱՏՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի ՌԽՄԽ խմբի գիտական-վերլուծաբան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն մշակման նպատակն է ներկայացնել ռազմաարդյունաբերության ոլորտում միջպետական համագործակցության հիմնական առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները: Այս համատեքստում անդրադարձ կկատարվի նաև ԵԱՏՄ շրջանակներում և Չինաստանի հետ համագործակցության հիմնական կողմնորոշիչներին:

1. ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաշխարհային տնտեսությունում ռազմաարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը տարեցտարի մեծանում է: Դա գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ ռազմաարդյունաբերությունը դարձել է համաշխարհային տնտեսական զարգացման լոկոմոտիվներից մեկը և հույժ կարևորվում է միջպետական համագործակցության ասպարեզում: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ ռազմական նախանշանակման արտադրանքի համաշխարհային շուկայի զարգացումը ենթարկվում է կառուցվածքային փոփոխությունների: Պետությունները նախընտրում են սպառազինությունների գնումից անցնել դրանց արտադրության տեխնոլոգիաների ձեռքբերման[1]: Այդ իսկ պատճառով բնութագրիչ միտում են դառնում ոչ միայն վերջնական արտադրանքի, այլև պահեստամասերի մատակարարումները, նորագույն նմուշների արտադրության համար արտոնագրերի վաճառքը, ռազմական տեխնիկայի համատեղ արդիականացմանը վերաբերող համաձայնագրերի կնքումը, դրա սպասարկման ենթակառուցվածքի ստեղծումը: Շատ ներկրող-

[1] Տես *К. Г. Буневич.* Трансформация военно-технического сотрудничества в условиях глобализации. «Вестник Московского университета имени С. Ю. Витте». Серия 1: «Экономика и управление», 2014, № 3(9) (https://cyberleninka.ru/article/v/transformatsiya-voenno-tehnicheskogo-sotrudnichestva-v-usloviyah-globalizatsii):

ների բնորոշ ֆինանսական դժվարությունները նրանց ստիպում են կենտրոնանալ ավելի էժան արտադրանքի գնման և համատեղ արտադրությունների ստեղծման վրա, ինչպես նաև կնքել լիզինգային գործարքներ: Ներկրողները նաև ներկայացնում են առաջարկություններ արտոնյալ վարկերի տրամադրման, բարտերային համաձայնագրերի կնքման վերաբերյալ[2]:

Ռազմատեխնիկական և ռազմաարդյունաբերական ոլորտում միջպետական համագործակցության գործիքներից է օֆսեթների կիրառումը, որը նախատեսում է ներկրող պետության ռազմաարդյունաբերական համալիրի մասնակցություն ներկրվող արտադրանքի թողարկմանը: Ավելի ու ավելի շատ երկրներ համաձայնվում են կնքել ՍՈՏ գնման պայմանագրեր միայն օֆսեթային համաձայնագրերի առկայությամբ: Օրինակներ կարող են ծառայել Հնդկաստանը և ԱՄԷ-ն, որոնք անգամ ընդունել են օրենքներ, համաձայն որոնց իրենց սահմանած չափը գերազանցող գումարով ռազմական արտադրանքի գնումը պետք է կատարվի միայն «փոխհատուցող գործարքների» ծրագրով[3]: Հնդկաստանը՝ որպես ՍՈՏ խոշոր ներկրող պետություններից մեկը, օգտագործում է նաև օֆսեթային պարտավորությունների կուտակման մեխանիզմը[4] *(Banking of Offset Credits)*:

Ռազմաարդյունաբերական ոլորտի միջպետական համագործակցության բաղադրիչներից է նաև կյանքի ամբողջ փուլաշրջանի ապահովման պայմանագրերի առկայությունը: Դրանցով նախատեսվում է, որ արտադրող ձեռնարկությունը ՍՈՏ-ն սպասարկում է բոլոր փուլերում՝ սկսած նախագծումից ու արտադրությունից և վերջացրած օգտահանմամբ[5]:

Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ռազմաարդյունաբերությունը, լինելով համաշխարհային տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը, զերծ չէ համընդհանուր տնտեսական էվոլյուցիոն փոփոխություններից: Այս առումով ժամանակակից համաշխարհային տնտե-

[2] Տես նույն տեղում:

[3] Տես «Военно-техническое сотрудничество России с иностранными государствами: основы, проблемы и перспективы». Под ред. Н. И. Калининой. М., 2010 (https://www.imemo.ru/files/File/ru/publ/2010/10007.pdf):

[4] Տես *К. В. Саяпина, Е. А. Дегтерева, А. М. Зобов.* Перспективные формы и механизмы реализации военно-промышленного и научно-производственного сотрудничества России и стран БРИКС. «Вестник Российского университета дружбы народов». Серия: «Экономика», 2016, № 3 (https://cyberleninka.ru/article/v/perspektivnye-formy-i-mehanizmy-realizatsii-voenno-promyshlennogo-i-nauchno-proizvodstvennogo-sotrudnichestva-rossiii-stran-briks):

[5] Տես *А. А. Бочуров, А. Х. Курбанов, А. Н. Литвиненко.* Сравнительный анализ отечественного и зарубежного опыта обеспечения экономической безопасности оборонно-промышленного комплекса. «Известия Санкт-Петербургского государственного экономического университета», 2018, № 3 (https://cyberleninka.ru/article/v/sravnitelnyy-analiz-otechestvennogo-i-zarubezhnogo-opyta-obespecheniya-ekonomicheskoy-bezopasnosti-oboronno-promyshlennogo):

սությունը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում (երբ ավելացված արժեքի մի նշանակալի մասն ստեղծվում է ոչ թե արտադրության, այլ սպասարկման ոլորտում), և դա էապես ազդում է նաև սպառազինությունների շուկայի վրա: Այսպես. ՍՈՏ-ն այլ պետություններ մատակարարելու դեպքում վաճառողն առաջարկում է մեծ թվով ռազմատեխնիկական և հավելյալ ծառայություններ, որոնց թվում են զինված ուժերի ներուժի մեծացման ուղղությամբ խորհրդատվությունները, հետագա տեխնիկական սպասարկման ու նորոգման, գնորդ պետության ազգային կադրերի պատրաստման գծով ծառայությունները, պահեստամասերի, ինչպես նաև տեխնիկական ու շահագործային փաստաթղթերի տրամադրումը և օգտահանման ծառայությունների մատուցումը[6]: ՍՈՏ պատվերների ծավալի ընդլայնման համար առաջատար մատակարարները նաև կիրառում են տարբեր ֆինանսական մեխանիզմներ, որոնց շարքում առանձնանում են համակշռիչ (կոմպենսացիոն) վճարումների պրակտիկան, արտահանման վարկերի և արտահանման գործարքների պետական ապահովագրման, ինչպես նաև ռազմաարդյունաբերական համալիրի ընկերություններին ուղիղ ֆինանսական օգնության տրամադրումը:

Համակշռիչ վճարումների շրջանակներում ՍՈՏ մատակարարողները գնորդին վերադարձնում են ավելացված արժեքի մի մասը՝ նրա ընկերություններին որպես ենթակապալառուի հատկացնելով տվյալ արտադրանքի թողարկման աշխատանքների մի մասը: Համակշռիչ վճարումներ ասելով հասկանում ենք նաև ՍՈՏ գնում այն ֆինանսական ռեսուրսներով, որոնք գնորդը մատակարար պետությունից ստացել է ի հաշիվ այս կամ այն վճարման[7]:

Համաշխարհային տնտեսության հետինդուստրիալ փուլին անցումը նպաստել է նաև բազմապրոֆիլ կորպորացիաների բազմակի ընդարձակմանը, այնպես, որ դրանք կառուցվածքով վերածվել են տարատեսակված հոլդինգների և իրենց գործունեությամբ առնչվում են օդատիեզերական, հրթիռային ու էլեկտրոնային արդյունաբերությանը: Այս կորպորացիաների մեծ մասն ստեղծվել է վերջին 20 տարվա ընթացքում ակտիվ համախմբման և այլ ընկերությունների կլանման շնորհիվ: Լինելով մեծ մասամբ կա՛մ լիովին մասնավոր, կա՛մ մասնակիորեն պետական ընկերություններ՝ դրանք նաև ակտիվորեն պայմանագրեր են կնքում տարբեր պետությունների կառավարությունների հետ՝ վերաճելով միջպետական համագործակցության ակտիվ մասնակիցների: Միևնույն ժամանակ, այդ կորպորացիաներին բնորոշ է ձգտումը կենտրոնանալու տնտեսության քաղաքացիական արտադրանքի թողարկման մասնաբաժնի մեծացման վրա[8]:

---

[6] Տես *Կ. Վ. Սայապինա, Ե. Ա. Ղեգտերևա, Ա. Զ. Զոբով,* Նշ. աշխ.:

[7] Տես նույն տեղում:

[8] Տես *А. М. Батьковский, М. А. Батьковский, И. В. Булава.* Сравнительный анализ развития оборонно-промышленных комплексов России и зарубежных

Ռազմաարդյունաբերության ոլորտում միջպետական համագործակցության առանձնահատկություններից է նաև այն, որ զարգացող երկրները որոշակի աստիճանի անկախության և հզորության հասնելու նպատակով ձգտում են բարձր տեխնոլոգիաների ներմուծման առումով նվազեցնելու իրենց կախումը մատակարար երկրներից: Նման կախվածությունը մատակարարին հնարավորություն է տալիս վերահսկելու, թե զենքերի որ համակարգերն ու տեխնոլոգիաները նրանք կարող են գնել և, հետևաբար, վերահսկելու այդ պետությունների ռազմական կարողությունները: Ավելին. ներկրող պետության տեսանկյունից մատակարարը հնարավորություն ունի ՍՈՏ նկատմամբ արգելանքի (էմբարգո) և ներկրված զենքերի համակարգերի օգտագործման վրա դրվող սահմանափակումների միջոցով ազդելու իր արտաքին քաղաքականության վրա[9]:

Որպես օրինակ կարելի է բերել ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ընդունած ակտը՝ Թուրքիայի ռուսական Ս-400 զենիթահրթիռային համալիրները գնելու կապակցությամբ: Տվյալ ակտում Վաշինգտոնն սպառնում է Թուրքիային «պատժամիջոցների միջոցով ԱՄՆ-ի հակառակորդներին հակազդեցություն գործելու» օրենքի կիրառմամբ: Թուրքիան կդասվի ԱՄՆ-ի հակառակորդների թվին՝ առնվազն մի շարք ոլորտներում: Ընդսմին որպես տվյալ ակտի ընդունման նախաձեռնողներ հիմնականում հանդես են եկել այն օրենսդիրները, որոնք ապահովում են ամերիկյան ռազմաարդյունաբերական համալիրի կորպորացիաների շահերի լոբբինգը: Եթե Թուրքիայի մտադրությունը չկասեցվի, այն կարող է դառնալ ԱՄՆ-ի այլ դաշնակիցների համար նախադեպ: Այդ երկրները հետագայում կարող են սպառազինություններ գնել ոչ թե ԱՄՆ-ից, այլ Ռուսաստանից կամ Չինաստանից[10]:

Ռազմաարդյունաբերական և ռազմատեխնիկական համագործակցության ևս մեկ առանձնահատկությունն այն է, որ ռազմական նախանշանակման արտադրանքի սպառողական յուրահատկությունը և պետական շահերի հետապնդման անհրաժեշտությունը վերջին հաշվով պայմանավորում են ՍՈՏ շրջանառության միջազգային իրավական կարգավորման ոչ բավարար մակարդակը, զենքի առևտրի նկատմամբ վերահսկողության համապիտանի միջազգային իրավական մեխանիզմների թերիությունը, սպառազինությունների նկատմամբ վերահսկողության ոլորտում կենսունակ միջազգային հաստատությունների սակավությունը:

стран. «Национальные интересы: приоритеты и безопасность», 2011, № 47(140) (https://cyberleninka.ru/article/v/sravnitelnyy-analiz-razvitiya-oboronno-promyshlennyh-kompleksov-rossii-i-zarubezhnyh-gosudarstv):

[9] Տես *Ç. Kurç, S. G. Neuman*. Defence industries in the 21st century: a comparative analysis. “Defence Studies”, 2017 Vol. 17, N 3 (https://www.tandfonline.com/doi/pdf/10.1080/14702436.2017.1350105?needAccess=true):

[10] Տես «Прогноз: Турция может быть причислена к странам-противникам США», 14.06.2019 (https://novostink.net/politics/263561-prognoz-turciya-mozhet-byt-prichislena-k-stranam-protivnikam-ssha.html):

2. ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵԱՏՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀՀ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ռազմաարդյունաբերության ոլորտում ԵԱՏՄ շրջանակներում և Չինաստանի հետ ՀՀ միջպետական համագործակցության հեռանկարների տեսանկյունից պետք է նշել, որ վերջին 20 տարիներին պետական և մասնավոր կազմակերպությունների բազայի վրա Հայաստանում ձևավորվել են արտադրական ու գիտահետազոտական կարողություններ, որոնք համակարգված ռազմատեխնիկական քաղաքականություն չլինելու պայմաններում լուծել են իրավիճակային և հատվածական խնդիրներ: Այս առումով ՀՀ-ում մշակված արտադրանքի և լուծումների օրինակներ են.

- զորքերի ավտոմատացված կառավարման համակարգերը,
- հետախուզական անօդաչու թռչող ապարատները,
- դիտողական և հրետանային հետախուզական համակարգերը,
- վարժասարքերը (տանկերի, հետևակի մարտական մեքենայի, հրաձգային զենքի, ՀՕՊ-ի ՁՀՂԿ, ականանետի և այլն),
- որոշ կապի միջոցները,
- առանձին տեսակների հրաձգային զենքը, որը, սակայն, չի ընդգրկվել ՀՀ ՁՈՒ-ի սպառազինության մեջ և այլն:

Ընդ որում, ՀՀ ՌԱՀ-ի հիմնական ընկերությունները գործում են մեքենաշինության և սարքաշինության, ռադիոէլեկտրոնիկայի, օպտիկաէլեկտրոնային և լազերային սարքաշինության, ռազմական քիմիայի, ինչպես նաև ավիաշինության (այդ թվում՝ ԱԹԱ-ների) ոլորտներում:

Պետք է նշել, որ 2016 թ. ապրիլյան ռազմական բախումներից հետո ընդունվեց ռազմատեխնիկական և ռազմաարդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը, և սկիզբ առան մի շարք ռազմավարական նախաձեռնություններ: Դրանով խթանվեց նաև մասնավոր հատվածի հետ համագործակցությունը, որի հիմքում դրանց ակտիվ նախաձեռնողականությունն է: Այս առումով այն նոր ռազմավարական նախաձեռնությունների շարքում, որոնք հետագայում կարող են դառնալ ԵԱՏՄ շրջանակներում և Չինաստանի հետ համագործակցության հենք, կարելի է առանձնացնել՝

- հետախուզական և հարվածային անօդաչու թռչող ապարատների ստեղծումը,
- նոր սերնդի դիտասարքերի (գիշերային և ցերեկային) և հետախուզական համակարգերի ստեղծումը,
- ՀՀ-ում ժամանակակից կապի միջոցների արտադրության կազմակերպումը,
- ՀՕՊ-ի յուրահատուկ ռադիոտեղորոշումային համակարգերի ստեղծումը,
- որոշ հրետանային զինամթերքի արտադրությունը:

Հայաստանում արագ տեմպերով զարգանում է նաև ՏՀՏ ծառայությունների և արտադրության ոլորտը. կան աճող կարողություններ ռոբոտատեխնիկայի, արհեստական բանականության, կիբեռանվտանգության, «մեծ

տվյալների» և կառավարման համակարգերի ավտոմատացման բնագավառները զարգացնելու համար:

Այնուամենայնիվ, ռազմաարդյունաբերության ոլորտում ՀՀ համագործակցության ծավալման համար շատ լուրջ խոչընդոտներից է Հայաստանում սպառազինություն արտադրող ընկերությունների խիստ ցածր արտադրողականությունը, ընդ որում, պետական ընկերություններում այն կրկնակի զիջում է մասնավորներին:

Այլ խնդիրների շարքն են դասվում.

- ռազմավարական պլանավորման և իրագործման միջև թույլ կապը,
- գերակայությունների սահմանման և որոշումների կայացման բնագավառում համակարգային մոտեցման, մեխանիզմների մշակման և ներդրման անհրաժեշտությունը,
- «ներմուծում–տեղական արտադրություն» որոշումների կայացման մեխանիզմների անգործունակությունը,
- հեռանկարային/ռազմավարական և երկարաժամկետ նախագծեր չլինելը,
- ֆինանսավորման մեխանիզմների սահմանափակությունը (չկան երկարաժամկետ պատվերների ֆինանսավորման գործիքներ, արտադրամիջոցների արդիականացման համար ֆինանսավորման գործիքներ, առկա է պետական ընկերությունների արտաքին ֆինանսավորման ներգրավման հնարավորությունների սահմանափակություն),
- ՌԱՀ-ի փոքր պատվերները և դրանց պլանավորման կարճաժամկետությունը (սովորաբար պատվերները ձևավորվում են յուրաքանչյուր տարի):

Նշված խնդիրների հաշվառմամբ ԵԱՏՄ շրջանակներում և Չինաստանի հետ Հայաստանի համագործակցությամբ պետք է լուծվի պետական պատվերների ծավալների մեծացման հարցը, ինչը հնարավորություն կտա ձեռք բերելու հիմնական միջոցներ և բարելավելու ենթակառուցվածքները: Կարևոր է նաև հայրենական ընկերությունների թերբեռնվածության խնդրի լուծումը և ՌԱՀ-ի ընկերությունների միջև տարատեսակ կոոպերացիաներով համագործակցության զարգացումը: Նման կոոպերացիան կարող է ձևավորվել երկակի նախանշանակման արտադրանքի թողարկման համատեղ միջազգային նախագծերի իրագործման միջոցով, ընդսմին դրանք կարող են դառնալ հայրենական ՌԱՀ-ը նորամուծական ուղու փոխադրելու ամենաարդյունավետ գործիքներից մեկը: Բացի այդ, քանի որ Չինաստանը ձգտում է սպառազինությունների իր արտադրությունն ընդլայնելու արդիականացված խորհրդային նմուշների թողարկման և իր արտահանման հնարավորությունների մեծացման հենքի վրա[11], ապա Հայաստան–Չինաստան համագործակցությունը այս ոլորտում ևս ունի ընդլայնման հեռանկարներ:

[11] Տես «Российско-китайское военно-техническое сотрудничество как важный компонент стратегического партнерства двух государств: теоретическое и практическое измерение», 02.11.2015 (http://csef.ru/ru/politica-i-geopolitica/416/

Կարծում ենք, որ անհրաժեշտ է նաև մեր պետության քաղաքական և տնտեսական զարգացման ժամանակակից փուլում ռազմատեխնիկական ռազմավարության հիմնական նպատակների ճշգրտումը: Մասնավորապես՝ կարիք կա ռազմատեխնիկական ոլորտում պետական քաղաքականության հայեցակարգային հիմքերը վերանայելու սպառազինությունների համաշխարհային շուկայում տեղի ունեցող որակական փոփոխությունների հաշվառմամբ: Հույժ կարևոր է, որ ռազմատեխնիկական զարգացման հայեցակարգում արտացոլված լինեն ինչպես ԵԱՏՄ շրջանակներում, այնպես էլ Չինաստանի հետ մեր պետության համագործակցության «ճանապարհային քարտեզները»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ռազմաարդյունաբերության ոլորտում միջպետական համագործակցության ծավալման ժամանակակից միտումները և առանձնահատկությունները վկայում են, որ ՍՈՏ առևտրին զուգահեռաբար ընդլայնվում են արտաառևտրային ծառայությունները: Բացի այդ, ավելի ու ավելի շատ պետություններ են հայտ ներկայացնում դառնալու ռազմաարդյունաբերության ոլորտում ոչ միայն ՍՈՏ գնորդներ, այլև վաճառողներ: Այս համատեքստում Հայաստանը, լինելով փոքր երկիր, սակայն ունենալով իր ուրույն համեմատական առավելությունները, կարող է ԵԱՏՄ շրջանակներում և Չինաստանի հետ ռազմաարդյունաբերական համագործակցության ոլորտում դառնալ համատեղ նախագծեր ներկայացնող և դրանց ակտիվորեն մասնակցող պետություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռազմաարդյունաբերության ոլորտում ԵԱՏՄ շրջանակներում և Չինաստանի հետ համագործակցությունում պետք է կարևորել.

- օֆսեթների կիրառման, համակշռիչ (կոմպենսացիոն) վճարումների պրակտիկայի ներդրման, արտահանման վարկերի և արտահանման գործարքների պետական ապահովագրության տրամադրման մեխանիզմների մշակումը,
- հայ-չինական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ստեղծումը,
- ՀՀ ռազմատեխնիկական քաղաքականության բազմազանեցումը, այն է՝ ոչ միայն վաճառող պետությունների, այլ հենց քաղաքականության տարատեսակումը:

rossijsko-kitajskoe-voenno-tehnicheskoe-sotrudnichestvo-kak-vazhnyj-komponent-strategicheskogo-partnerstva-dvuh-gosudarstv-teoreticheskoe-i-prakticheskoe-izmerenie-6428):

ВОЕННАЯ ЭКОНОМИКА

ОСОБЕННОСТИ МЕЖГОСУДАРСТВЕННОГО СОТРУДНИЧЕСТВА В ВОЕННО-ПРОМЫШЛЕННОЙ СФЕРЕ: ПЕРСПЕКТИВЫ СОТРУДНИЧЕСТВА В РАМКАХ ЕАЭС И С КИТАЕМ

А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, доцент, ученый-аналитик ГМСИ Центра региональных стратегических анализов ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Современные тенденции и особенности развертывания межгосударственного сотрудничества в сфере военной промышленности свидетельствуют о том, что наряду с торговлей ВВТ расширяется круг оказываемых внешнеторговых услуг. Кроме того, все больше и больше государств стремятся стать в сфере военной промышленности не только покупателями ВВТ, но и продавцами. В этом контексте Армения, будучи маленькой страной, однако имея специфические относительные преимущества, может в сфере военно-промышленного сотрудничества в рамках ЕАЭС и с Китаем стать государством, предлагающим совместные проекты и активно участвующим в них.

MILITARY ECONOMICS

PECULIARITIES OF INTERSTATE COOPERATION IN THE SPHERE OF MILITARY INDUSTRY: PERSPECTIVES OF THE RA COOPERATION WITHIN THE FRAMEWORK OF THE EAEU AND WITH CHINA

A. G. DAVTYAN, PhD in Economics, Associate Professor, Research Fellow, SGSG, Center for Regional Strategic Analyses, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

Modern trends and peculiarities of the development of interstate cooperation in the sphere of the military industry indicate that along with the trade of Armament and Military Equipment, a scope of rendered foreign trade services is getting expanded. In addition, more and more states tend to become not only customers of AME in the sphere of military industry, but also suppliers. In this context, Armenia, being a small country, but, nonetheless, having its specific relative advantages, in the sphere of military-industrial cooperation within the framework of the EAEU and with China, can become a state offering joint projects and actively participating in them.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ս. Օ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, 1-ին դասի խորհրդական,
ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայի ասպիրանտ,
ՀՀ ՊՆ ՊՔԿ պայմանագրաիրավական բաժնի պետ

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվում էին Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի՝ որոշ թվով զինծառայողներ: Ինքնին հասկանալի է, որ ծագեց նրանց իրավական կարգավիճակը սահմանելու հարց: Ըստ այդմ, երկու պետությունների երկարաժամկետ շահերի հաշվառմամբ 1992 թ. օգոստոսի 21-ին ստորագրվեց Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի իրավական կարգավիճակի մասին պայմանագիրը[1]: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1994 թ. հունիսի 22-ի որոշմամբ ՀՀ Կառավարությանը և ԳԽ պաշտպանության և ներքին գործերի հարցերով մշտական հանձնաժողովին հանձնարարվեց պատրաստել փաստաթղթերի մի փաթեթ, որով ՀՀ տարածքում գտնվող ՌԴ ԶՈՒ-ի կարգավիճակը պետք է փոխարինվեր ՀՀ տարածքում ռուսաստանյան զորակայանի կարգավիճակով[2]: Այսինքն՝ գործող պայմանագրի փոխարեն պետք է կնքվեր նոր պայմանագիր, որը վերաբերեր ռուսաստանյան զորակայանին, ինչն էլ հետագայում արվեց:

Այստեղ բերենք մի ուշագրավ փաստ: 2019 թվականին նախաձեռնվեց հայ-ռուսաստանյան պայմանագրաիրավական բազայի գույքագրումը: Այդ աշխատանքի շրջանակում ռուսաստանյան կողմը հայտարարեց, թե Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ Ռուսաստանի Դաշնության

[1] Տես «Договор между Российской Федерацией и Республикой Армения о правовом статусе Вооруженных Сил Российской Федерации, находящихся на территории Республики Армения», 21 августа 1992 г., Москва (http://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-357/48796):

[2] Տես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1994 թ. հունիսի 22-ի ««Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի իրավական կարգավիճակի մասին» պայմանագրի վավերացման մասին» հմ. Հ.Ն-1087-Ի որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=3446):

Զինված ուժերի իրավական կարգավիճակի մասին պայմանագիրը կորցրել է ուժը այն պահից, երբ կնքվել է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագիրը: Սակայն նման պնդման համար փաստական հիմքեր չկան: Դա հաստատող փաստաթղթեր չկան նաև ՀՀ ԱԳՆ-ում: Ի դեպ, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի նախաբանում շեշտվում է 1992 թ. օգոստոսի 21-ին կնքված Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի իրավական կարգավիճակի մասին պայմանագրի նշանակությունը, սակայն խոսք չկա այն անվավեր ճանաչելու մասին[3]:

Համաձայն ՀՀ տարածքում ՌԴ ԶՈՒ-ի իրավական կարգավիճակի մասին 1992 թ. պայմանագրի՝ ռուսաստանյան զորակայանի կազմում ներառված անձ են համարվում ՌԴ ԶՈՒ-ի այն զինծառայողները, որոնք զորակայանում անցնում են զինծառայություն կամ գործուղված են այնտեղ:

Ռուսաստանյան զորակայանի զինծառայողներին վերապահված է բնակելի ֆոնդից օգտվելու իրավունք: Նրանք պարտավոր են հարգել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը և ենթարկվել նրա օրենսդրության պահանջներին, իրավունք չունեն միջամտելու ՀՀ ներքին գործերին, իսկ հայկական կողմը պետք է հարգի ռուսաստանցի զինծառայողների կարգավիճակն ու իրավական դրությունը:

Ռուսաստանյան զորակայանի զինծառայողները կրում են սահմանված ձևի զինվորական համազգեստ և իրավունք ունեն հատուկ նշված դեպքերում կրելու զենք: Զենք կիրառելու կարգը սահմանված է առանձին Համաձայնագրով, որը կնքվել է 1997 թ. օգոստոսի 29-ին[4]:

Ռուսաստանյան զորակայանի կազմում ընդգրկված անձանց անվտանգությունը զորակայանի տարածքում ապահովվում է զորակայանի ուժերով:

Հայկական կողմը փոխհատուցում է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց կամ քաղաքացիների գործողությունների կամ թերացումների հետևանքով զորակայանի զինծառայողներին պատճառված վնասը:

Նշենք, որ ռուսաստանյան զորակայանի զինծառայողների իրավական

[3] Տես «Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения», 16 марта 1995 г. (http://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-310/47983):

[4] Տես «Соглашение между Российской Федерацией и Республикой Армения о порядке применения оружия военнослужащими российской военной базы вне территории российской военной базы в Республике Армения», 29 августа 1997 г., Москва (http://docs.cntd.ru/document/901779313):

կարգավիճակին առնչվող հիմնական դրույթները ձևակերպված են զորակայանի մասին պայմանագրի 1-ին Արձանագրության մեջ[5]:

Հայկական կողմը ռուսաստանցի զինծառայողներին իրավունք է տվել սահմանով անցկացնել իրենց անձնական իրերը, իրենց պատկանող փոխադրամիջոցներով ազատ կերպով տեղաշարժվելու այն նույն պայմաններով, որոնք սահմանված են ՀՀ ԶՈՒ-ի զինծառայողների համար: Ռուսաստանյան զորակայանի զինծառայողներն ունեն սեփականության իրավունք իրենց պատկանող շարժական ու անշարժ գույքի նկատմամբ, այն ազատ կերպով վաճառելու իրավունք:

Հայկական կողմը երաշխավորում է ռուսաստանյան զորակայանի զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների իրավունքը կրթություն ստանալու ՀՀ բարձրագույն, միջնակարգ ու մասնագիտական ուսումնական հաստատություններում, ընդունվելու նախադպրոցական հիմնարկներ:

Ռուսաստանցի զինծառայողներն իրավունք ունեն գնելու ապրանքներ ու ծառայություններ և օգտվելու փոստի ու կապի այլ հիմնարկությունների տրամադրած ծառայություններից այն նույն պայմաններով, որոնք սահմանված են ՀՀ քաղաքացիների համար:

Ռուսաստանյան զորակայանի կազմում ներառված անձանց նկատմամբ դատավարական գործողություններն իրականացվում են ռուսաստանյան կողմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

2000 թ. դեկտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարություններն ստորագրեցին համաձայնագիր Հայաստանի Հանրապետությունում ռուսաստանյան զորակայանի տարածքից դուրս ՌԴ զինվորական կազմավորումների ամենօրյա գործունեության ու կայազորային ծառայության կազմակերպման մասին[6]: Ըստ այդ Համաձայնագրի՝ ՀՀ ՊՆ զինվորական ոստիկանության և հանրապետության Ոստիկանության կառավարման մարմինները ծառայության և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ժամանակ իրավունք ունեն ստուգելու ռուսաստանյան զորակայանի զինծառայողների փաստաթղթերը: Եթե զինծառայողները տվյալ պահին իրենց հետ չունեն անձը հաստատող փաստաթղթեր, ապա կարող են ձերբակալվել: Այդ դեպքում ռուսաստանյան զորակայանի հրամանատարությունը պետք է անհապաղ տեղեկացվի տվյալ միջադեպի մասին: Բացի այդ, զորակայանի զինծառայողները կարող են ձերբակալվել հասարակական կարգը խախտելու կամ հանցագործություն

[5] Տես «Протокол 1 к Договору между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения» (http://www.mid.ru/ foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/ bilateral / page-310/47983):

[6] Տես «Соглашение между Правительством Российской Федерации и Правительством Республики Армения об организации повседневной деятельности и гарнизонной службы воинских формирований Российской Федерации вне территории российской военной базы в Республике Армения», 21 декабря 2000 г., Москва (http://docs.cntd.ru/document/901960657):

կատարելու դեպքում, ընդսմին այդ մասին ևս պետք է անհապաղ իրազեկվեն ՌԴ համապատասխան մարմինները:

ՀՀ Ոստիկանության պետավտոտեսչության և ՊՆ զինվորական ոստիկանության զինավտոտեսչության աշխատողները վերահսկում են, թե ինչպես են ռուսաստանյան զորակայանի փոխադրամիջոցների վարորդները (մեխանիկ-վարորդ) պահպանում ճանապարհային երթևեկության կանոնները և ճանապարհային երթևեկության անվտանգությունը կանոնակարգող ՀՀ այլ նորմատիվային իրավական ակտերի պահանջները: Ընդ որում, հայ ճանապարհային տեսուչները իրավունք ունեն կանգնեցնելու զորակայանի փոխադրամիջոցները՝ դրանց պատկանելությունը հաստատող և անհրաժեշտ այլ փաստաթղթերի առկայությունն ստուգելու համար: Ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքում նրանք իրավունք ունեն կասեցնելու խախտումը և կազմելու այդ խախտման մասին ակտ, որը հղվում է զորակայանի հրամանատարությանը: Եթե տեղի է ունեցել ռուսաստանյան զորակայանի վարորդի (մեխանիկ-վարորդի) մասնակցությամբ ճանապարհատրանսպորտային պատահար, ապա ՀՀ պետավտոտեսչության ու զինավտոտեսչության աշխատողները պետք է գործեն ըստ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան զորակայանի տեղաբաշխման հետ առնչվող գործերով իրավազորության ու փոխադարձ իրավական օգնության հարցերի վերաբերյալ ՀՀ-ի ու ՌԴ-ի միջև 1997 թ. օգոստոսի 29-ին կնքված համաձայնագրի[7]: Ռուսաստանյան զորակայանի այն զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների վրա, որոնք ունեն անձնական օգտագործման ավտոմեքենաներ, տարածվում է ճանապարհային երթևեկության կազմակերպումը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը:

Ռուսաստանյան զորակայանի՝ հանցագործություն կատարած և հետաքննությունից թաքնվող կամ զորակայանի տարածքը զենքով ինքնակամ լքած զինծառայողների հայտնաբերմանը նպատակաուղղված օպերատիվ-հետախուզական գործողությունների կատարման ժամանակ զորակայանի կառավարման մարմինները ՀՀ Ոստիկանության ու ՊՆ զինվորական ոստիկանության մարմիններին են հաղորդում տեղեկություններ նման զինծառայողների մասին: Տվյալ դեպքում կողմերը ղեկավարվում են ՀՀ տարածքում ռուսաստանյան զորակայանի տեղաբաշխմանն առնչվող գործերով իրավազորության ու փոխադարձ իրավական օգնության հարցերի վերաբերյալ համաձայնագրի դրույթներով[8]:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ-ի ու ՌԴ-ի միջև ստորագրվել է ՌԴ-ում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների ու ՀՀ-ում մշտապես բնակվող ՌԴ քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին համաձայնագիր[9]:

---

[7] Տես «Соглашение между Российской Федерацией и Республикой Армения по вопросам юрисдикции и взаимной правовой помощи по делам, связанным с нахождением российской военной базы на территории Республики Армения», 29 августа 1997 г., Москва (http://docs.cntd.ru/document/901924429):

[8] Տես նույն տեղում:

[9] Տես «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Ռուսաս-

Ավարտելով հայ-ռուսաստանյան ռազմական համագործակցության համար մեծ կարևորություն ներկայացնող տվյալ հարցի այս համառոտ քննարկումը՝ նշենք, որ դրա հանգամանալից ու համակողմանի վերլուծությունը դժվար է ամփոփել մեկ հոդվածի ծավալներում: Միևնույն ժամանակ, հարկ է շեշտել, որ Հայաստանում ռուսաստանյան զորակայանի զինծառայողների իրավական կարգավիճակը սահմանվում է ըստ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև եղած երկկողմ պայմանագրերի ու համաձայնագրերի, որոնց կնքումից հետո անցել է բավական ժամանակ, և այդ ընթացքում և՛ Հայաստանի Հանրապետության, և՛ Ռուսաստանի Դաշնության օրենսդրություններում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ: Ուստի, մեր կարծիքով, անհրաժեշտ է Հայաստանում ռուսաստանյան զորակայանի զինծառայողների իրավական դրությունը կարգավորող օրենսդրական-պայմանագրային նյութերի զանգվածը համապատասխանեցնել այսօր Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը:

տանի Դաշնության տարածքում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին պայմանագիր», 1997 թ. օգոստոսի 29, Մոսկվա (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18533), *նաև՝* «Договор между Российской Федерацией и Республикой Армения о правовом статусе граждан Российской Федерации, постоянно проживающих на территории Республики Армения, и граждан Республики Армения, постоянно проживающих на территории Российской Федерации», 29 августа 1997 г., Москва (http://www.mid.ru/ foreign_policy/ international_contracts /2_contract/-/storage-viewer / bilateral/page-274/47487):

ВОЕННОЕ ПРАВО

К ВОПРОСУ О ПРАВОВОМ СТАТУСЕ ВОЕННОСЛУЖАЩИХ ВООРУЖЕННЫХ СИЛ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

С. О. АБРАМЯН, советник 1-го класса, аспирант Дипломатической академии МИД РФ, начальник Договорно-правового отдела УОП МО РА

РЕЗЮМЕ

Согласно договорам и соглашениям, подписанным в 1992-2000 годах между РА и РФ о правовом статусе ВС РФ, находящихся на территории РА (российской военной базы, или ВБ) российские военнослужащие обязаны уважать суверенитет Республики Армения и соблюдать ее законодательство, не имеют права вмешиваться в ее внутренние дела, а армянская сторона должна уважать статус российских военнослужащих. Процессуальные действия в отношении лиц, входящих в состав ВБ, производятся с участием представителей российской стороны.

Военнослужащие ВС РФ могут быть задержаны в случае нарушения общественного порядка или совершения преступления, о чем своевременно уведомляются соответствующие органы РФ. Органы управления ВБ передают в органы Полиции РА и управления Военной полиции МО РА сведения о военнослужащих, совершивших преступление и скрывающихся от следствия или самовольно покинувших воинскую часть с оружием.

Со времени подписания регулирующих договоров и соглашений в законодательствах РА и РФ произошли существенные изменения, в связи с чем есть необходимость приведения законодательно-правовой базы о правовом статусе военнослужащих российской военной базы в соответствие с законодательством РА.

MILITARY LAW

TO THE ISSUE OF THE LEGAL STATUS OF SERVICEMEN OF THE ARMED FORCES OF THE RUSSIAN FEDERATION IN THE REPUBLIC OF ARMENIA

S. O. ABRAHAMYAN, 1st Class Counselor, Graduate Student, Diplomatic Academy, Ministry of Foreign Affairs, Russian Federation, Head, Department of Treaties and Legal Affairs, DPD, MOD, RA

SUMMARY

According to the treaties and agreements signed in 1992-2000 between the Republic of Armenia and the Russian Federation on the legal status of the Armed Forces of the Russian Federation deployed on the territory of the RA (Russian military base, or MB), Russian servicemen should respect the sovereignty of the RA and meet its legislation, they do not have the right to interfere in its domestic affairs, and the Armenian party should respect the status of Russian servicemen. Procedural actions towards the persons belonging to the MB are taken with the participation of representatives of the Russian party.

Servicemen of the RF Armed Forces may be detained in case of disturbing public order or committing a crime, what the relevant bodies of the RF are opportunely notified of. The MB governing bodies give the information about the servicemen having committed a crime and hiding from the investigation, or absent from the military unit without leave and with weapon, to the RA Police authorities and the Military Police Departments, MOD, RA.

Since the signing of regulatory treaties and agreements, the Legislations of the Republic of Armenia and the Russian Federation have undergone significant changes, and, therefore, there is a need to bring the legislative-legal framework on the legal status of servicemen of the Russian military base in line with the Legislation of the Republic of Armenia.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Գ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ



Թուրքիայի Հանրապետության Ազգային հետախուզական կազմակերպության (ԱՀԿ, թուրքերեն – *Milli İstihbarat Teşkilatı, կամ MİT*) գործունեությունն աչքի է ընկնում մի ուշագրավ առանձնահատկությամբ. նրա գործունեության գրեթե 80 %-ը մշտապես ձեռնարկվել է ոչ թե արտաքին աշխարհում, այլ պետության ներսում՝ նպատակաուղղված լինելով քաղաքական և հասարակական գործիչների հսկմանը, աչքի ընկնող անձանց վերաբերյալ տեղեկությունների հավաքմանը, ձախակողմյան և սոցիալիստական շարժումների ներկայացուցիչների հետապնդմանը և այդ գործում ազգայնամոլների օգտագործմանը, ռազմական հեղաշրջումների նախապատրաստմանը և կառավարությունից այդ գործընթացի թաքցմանն ու ապատեղեկատվության տրամադրմանը և այլ նմանատիպ միջոցառումների իրագործմանը: Ընդսմին գործունեության այդ հիմնական սկզբունքները որդեգրվել էին դեռ նախորդ դարի 20-ական թվականներին՝ ԹՀ Ազգային անվտանգության ծառայության *(Milli Emniyet Hizmeti, MEH)* ստեղծման ժամանակ և անփոփոխ են մնացել մինչ օրս: Այսպես. չունենալով համապատասխան փորձառու կադրեր և ընդհանրապես քիչ թե շատ վստահելի արտասահմանյան ցանց՝ ԱՀԿ ղեկավարներից մեկի՝ Հիրամ Աբասի առաջարկությամբ հայկական ԱՍԱԼԱ-ի դեմ պայքարում երկրի սահմաններից դուրս օգտագործվեցին ազգայնամոլական հայացքներ ունեցող թուրքական կազմակերպված հանցագործության (մաֆիայի) կնքահայրերը, ինչպիսիք էին Ալաեթթին Չաքիջին, Աբդուլլահ Չաթին, Օրալ Չալիքը և ուրիշներ, որոնց անգամ հանձնվեցին դիվանագիտական անձնագրեր: Այս փաստի բացահայտումը հանգեցրեց մեծ անախորժությունների[1]: Բացի այդ, Թուրքիայի հետախուզական ծառայությունը թուրք ազգայնական ուժերի ներկայացուցիչներին օգտագործեց Ադրբեջանում՝ Ղարաբաղյան պատերազմի ժամանակ[2]:

Պետության կայունության և նույնիսկ գոյության համար ներքին «թշնամիների» ավելի մեծ վտանգավորության գաղափարը դրված է Թուրքիայի պետության հիմքում, և պատահական չէ, որ անվտանգության ծառայությունը

[1] Տես *Belma Akçura*. Derin Devlet Oldu Devlet. İstanbul, 2006, s. 178:

[2] Ավելի հանգամանալից տես *Ա. Ավագյան*, Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990–1994 թթ.: «ՀԲ», 2006, հմ. 3:

նույնպես ձևավորվել է առաջին հերթին ներքին վտանգի չեզոքացման համար: Ուշագրավ է, որ և՛ նացիստական Գերմանիայի, և՛ թուրքական հետախուզությունների ստեղծման ակունքներում կանգնած է նույն անձնավորությունը՝ գնդապետ Վալտեր Նիկոլային:

Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից հետո (1923 թ.) հետախուզական գործառույթները հիմնականում շարունակում էին կատարել Զինված ուժերի համապատասխան կառույցները: Սակայն դա չէր կարող բավարարել արդյունավետ մասնագիտացած հետախուզության կարիք ունեցող պետությանը, քանի որ նա, բացի արտաքին մարտահրավերներից, ուներ նաև լուրջ ներքին խնդիրներ, ինչպիսիք էին, օրինակ, քրդական շարժումը, հակաիշխանական քաղաքական հոսանքները և այլն:

Վերլուծելով այդ ժամանակաշրջանում անվտանգության բնագավառում Թուրքիայի կարիքները՝ հետախուզության պատմության մասնագետ Էրդալ Իլթերը «Թուրքիայի հետախուզական կազմակերպությունը» գրքում գրում է. «Մուստաֆա Քեմալը նշում էր, որ իր ղեկավարած երիտասարդ պետությանը պետք էր արտասահմանյան լրտեսական գործունեության հետ մեկտեղ նաև աշխատանք տանել անջատողական և քայքայիչ գործունեության դեմ (հայկականություն, հունականություն, քրդականություն, կոմունիզմ, վարչակարգի հակառակորդներ և այլն)»[3]:

Ակնհայտ էր, որ մեծաթիվ ներքին և արտաքին մարտահրավերների առջև կանգնած նորանկախ պետությանն անհրաժեշտ էր հնարավորինս արագ ստեղծել անվտանգության արհեստավարժ ծառայություն, որի համար կարող էին հիմք ծառայել առաջին հերթին «Հատուկ կազմակերպության» փորձն ու անձնակազմը, ինչպես նաև ժամանակակից եվրոպական պետությունների արդյունավետ փորձն ու մեթոդները: Անվտանգության գործուն համակարգի ձևավորումը կարևոր էր ոչ միայն պետության պահանջմունքների, այլև Մուստաֆա Քեմալի անձնական անվտանգության ապահովման տեսանկյունից, քանի որ նրա վարած՝ սկզբունքային վերափոխումների քաղաքականությունը և օրըստօրե աճող անձնիշխանությունը հարվածի տակ էին դնում նրա անձը: Դրա օրինակներից է Իզմիր քաղաքում 1926 թվականին Քեմալի դեմ կազմակերպված մահափորձը: Բացի այդ, կարևոր ազդակ էր քուրդ առաջնորդ Շեյխ Սաիդի ապստամբությունը, որը Թուրքիայի իշխանությունները կարողացան ճնշել 1925 թվականին, և որի ժամանակ զգացվեց արհեստավարժ անձնակազմ ունեցող ոչ ռազմական հետախուզության անհրաժեշտությունը:

Այս զարգացումներն արագացրին հետախուզության նոր համակարգով առանձին կառույցի ստեղծման քայլերը, և Մուստաֆա Քեմալը դրա կազմավորման պարտականությունը հանձնեց ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի պետ մարշալ Ֆևզի Չաքմաքին[4]:

[3] *Erdal İlter*. Milli İstihbarat Teşkilatı Tarihçesi. Ankara, 2002, 2-A.

[4] Տես նույն տեղում, 2-A2-1:

1926 թվականի հունվարի 6-ին Ֆևզի Չաքմաքն ստորագրեց հույժ գաղտնի հմ. 10152 կարգադրությունը, որով մեկնարկ տրվեց Թուրքիայի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության* ստեղծմանը: Կարգադրության մեջ նշվում էր, որ կառույցի կենտրոնակայանը տեղաբաշխվելու է Անկարայում, իսկ շրջանային կենտրոնները (մասնաճյուղերը) գտնվելու են Ստամբուլում, Իզմիրում, Ադանայում, Դիարբեքիրում և Կարսում: Ընդ որում, հատուկ շեշտվում էր, որ մասնաճյուղերը պետք է անվերապահորեն ենթարկվեն կենտրոնին: Այսպիսով՝ իր սկզբնական տեսքով Թուրքիայի Ազգային անվտանգության ծառայությունը ներքին հետախուզական գործառույթներ իրականացնող ոչ մեծ զինվորական կառույց էր, որը գտնվում էր Թուրքիայի Զինված ուժերի ենթակայության ներքո, կազմված էր Անկարայում գտնվող փոքր կենտրոնակայանից և 5 քաղաքներում տեղաբաշխված մասնաճյուղերից[5]:

Թուրքական հետախուզաանվտանգային կառույցի մասնաճյուղերի աշխարհագրությունն ու որպես տեղաբաշխման վայր որոշված քաղաքների ընտրությունը պայմանավորված էին այդ ժամանակ թուրքական պետության պահանջմունքներով և արտաքին քաղաքական մարտահրավերներով: Ստամբուլը և Իզմիրը ամենախոշոր քաղաքներն էին և արևմտյան դարպասները: Դիարբեքիրի ընտրությունը կապված էր քրդական գործոնի հետ. Շեյխ Սաիդի ապստամբությունից հետո Անկարան պետք է մեծ ուշադրություն դարձներ երկրի հարավարևելյան, գերազանցապես քրդաբնակ շրջաններին: Կարսը, մոտ լինելով ԽՍՀՄ սահմանին, կատարում էր երկրի արևելյան դարպասի դեր, Ադանան էլ Միջերկրական ծովի ավազանի թուրքական հատվածի ամենախոշոր բնակավայրն էր:

Սակայն նորանկախ պետության համար նման սակավ չափերի հետախուզական կառույցը չէր կարող բավարար լինել, հատկապես, որ անհրաժեշտ էր նաև արտաքին հետախուզական գործառույթների իրականացում: Փորձի պակասը և կազմակերպման բացերը վերացնելու համար թուրքական կառավարությունը որոշեց դիմել մեծ փորձ ունեցող միջազգային մասնագետների, որոնք պետք է ձևավորեին Թուրքիայի արտաքին հետախուզությունը՝ շեշտը դնելով ուսուցման և փորձի փոխանակման վրա: Թուրքական ղեկավարության ընտրությունը այդ ժամանակ արդեն թոշակի անցած գնդապետ Վալտեր Նիկոլային էր**:

Լեհական ծագում ունեցող Նիկոլային առաջին աշխարհամարտի տարիներին ղեկավարել էր Օսմանյան կայսրության դաշնակից Կայզերական Գերմանիայի հետախուզական ծառայությունը: Հետագայում Վալտեր Նիկոլային նաև դարձավ ֆաշիստական Գերմանիայի ռազմական հետախուզության ծառայության՝ «Աբվերի» հիմնադիրներից մեկը:

---

* Թուրքերենով Millî Emniyet Hizmeti կամ առավել տարածված կրճատ ձևով՝ M.A.H/M.E.H:

[5] Տես նույն տեղում:

** Վալտեր Նիկոլային հեղինակել է «Գաղտնի ուժեր» (1923 թ.) և «Գերմանիայի գաղտնի կազմակերպությունը» (1924 թ.) գրքերը:

Դեռ 1925 թվականի աշնանը Թուրքիայի պատասխանատու անձինք կապ հաստատեցին Նիկոլայիի հետ՝ ճշգրտելով հնարավոր համագործակցության եզրերը: Գերմանացի հետախույզին հրավիրելու միտքը պատկանում էր թուրք գեներալ Նաջի էլդենիզին, որն զբաղվում էր թուրքական բանակի վերապատրաստման գործում Եվրոպայից սպաների ներգրավմամբ[6]: Ընդունելով Թուրքիայի կառավարության հրավերը՝ գնդապետ Նիկոլային 1926 թ. հունվարի վերջին ժամանեց Անկարա[7] և հունվարի վերջին ու փետրվարի սկզբին երկու հանդիպում ունեցավ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի պետ մարշալ Ֆևզի Չաքմաքի, արտաքին գործերի նախարար Թևֆիք Ռյուշթուի (Արասի), ներքին գործերի նախարար Մ. Զեմիլի (Ոյբադին) հետ: Հանդիպումների արդյունքներով որոշվեց հետախուզական ծառայության ստեղծման նախագիծը կյանքի կոչել մինչ գարուն:

Նույն թվականի մարտին Նիկոլային վերադարձավ Գերմանիա, որտեղ շարունակեց արտաքին հետախուզության ստեղծման աշխատանքները[8]: Այս ընթացքում ի հայտ եկան որոշակի խնդիրներ, որոնք խոչընդոտում էին ծրագրի լիարժեք իրագործմանը: Մասնավորապես՝ Թուրքիան ուշացնում էր Նիկոլայիին խոստացած դրամական միջոցների հանձնումը, ինչի հետևանքով գերմանացին սկսեց 1926 թ. հունիսի 10-ից դանդաղեցնել աշխատանքները: Գումարի հետ կապված խնդիրների առկայությունը հաստատում է մարշալ Ֆևզի Չաքմաքի՝ թուրքական կառավարությանն ուղղված 1927 թ. հունիսի 30-ի գրությունը, որում նա նշում է, որ բյուջեի հետ կապված պրոբլեմների պատճառով Նիկոլայիի համար նախատեսված վճարումները որոշակիորեն ուշացվել են, սակայն արդեն մեկ ամիս անց՝ 1926 թվականի հուլիսին, մնացորդը վճարում է: Միևնույն ժամանակ, Չաքմաքը դժգոհում է, որ գնդապետ Նիկոլային մեծ գումարի դիմաց քիչ աշխատանք է կատարում, բացի այդ, հնարավոր է, որ նա աշխատի նաև այլ պետությունների համար:

Ի սկզբանե վտանգավոր էր օտար պետության քաղաքացի նախկին հետախույզին վստահել լուրջ մակարդակի գաղտնիություն պահանջող և հույժ կարևոր պետական նշանակություն ունեցող կառույցի ստեղծումն ու ղեկավարումը, սակայն, մյուս կողմից, նորաստեղծ պետությանը, որը ձգտում էր պետական հաստատություն կառուցելու այդ ժամանակվա եվրոպական չափանիշներին համապատասխան, անհրաժեշտ էր եվրոպական փորձը, որի բացը բավական բարդ էր լրացնել օսմանյան ժամանակաշրջանից մնացած հետախուզական անձնակազմով ու փորձով: Բացի այդ, հետախուզության համար երրորդ երկրներում հետախուզության կազմակերպիչ և ղեկավար փնտրելու ձգտումը կարող էր պայմանավորված լինել այն հանգամանքով, որ օսմանյան հետախուզական կառույցների անձնակազմն ընդդիմադիր էր Մուստաֆա Քեմալի իշխանությանը, «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ կամ աջակից էր, ինչը նրա

[6] Տես *Mehmet Eymür.* Analiz: Bir Mit Mensubunun Anıları. Istanbul, 2006, s. 32–33:

[7] Տես *Էրդալ Իլթեր,* Նշ. աշխ., 2-A3:

[8] Տես նույն տեղում:

նկատմամբ կարող էր լինել անվստահության պատճառ: Այդ պայմաններում նախընտրելի էր առաջին աշխարհամարտում Թուրքիայի դաշնակից Գերմանիայի քաղաքացի, այն էլ օսմանյան յուրահատկություններին քաջածանոթ փորձառու հետախույզի թեկնածությունը:

Չնայած առկա խնդիրներին՝ Վալտեր Նիկոլային մինչ 1926 թ. նոյեմբեր աշխատեց Թուրքիայի արտաքին հետախուզության կառույցի ձևավորման ուղղությամբ:

1926 թ. մարտին ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ կառույցի անձնակազմը պետք է ուսուցման ծրագրի շրջանակներում 20-օրյա պատրաստում անցներ Գերմանիայում[9]: Գերմանիա մեկնող պատվիրակության կազմում էին փոխգնդապետ Շյուքրյու Ալին (Օգել), որը Թուրքիայի Ռազմական ուսումնարանում ռազմական պատմության դասախոս էր և դառնալու էր Ազգային հետախուզական ծառայության առաջին ղեկավարը, կադրային սպաներ Հյուսեին Ռահմին (Ափաք), Հասան Եշիթը (Թանքութ), Քեմալը (Գյուչսավ), ինչպես նաև արտաքին գործերի նախարարության մի բարձրաստիճան պաշտոնյա[10]:

Թուրքական պատվիրակությունը 1926 թ. հունիսի 16-ին ժամանեց Գերմանիա, որտեղ խմբին ընդունեց Վալտեր Նիկոլային: Վերապատրաստման դասընթացների շրջանակում թուրքական պատվիրակությունն այցելեց Բեռլին, Դրեզդեն, Համբուրգ, Մյունխեն, Վիեննա: 1926 թվականի հուլիսի 5-ին դասընթացն ավարտվեց, և խումբը վերադարձավ հայրենիք[11]: Վալտեր Նիկոլային, ևս ժամանելով Թուրքիա, սեպտեմբերից մինչև նոյեմբեր ժամանակահատվածում Ստամբուլում և Անկարայում սպաների ու քաղաքացիական անձանց համար անցկացրեց հետախուզության հարցերով սեմինարներ, ընդսմին այս ընթացքում կազմվեց նաև թուրքական արտաքին հետախուզության ներքին կանոնադրությունը:

Նիկոլայիի կազմակերպած գիտաժողովներն ու հանդիպումներն անցան գաղտնի պայմաններում, դրանց մասնակիցների անունները չեն նշվում: Այսպես. հայտնի է, որ Ստամբուլի Ռազմական ակադեմիայում կազմակերպված «Հետախուզությունը և հետախուզության վարումն ու կառավարումը» թեմայով դասախոսությանը ներկա էր 12 անձ, որոնց անունները գաղտնի էին պահվում: Նիկոլային դասախոսությունների ընթացքում կիսվում էր հետախուզությանը վերաբերող տեսական և գործնական գիտելիքներով, միջազգային փորձով: Դասախոսությունների ընթացքում ներկաներին որևէ գրականություն չէր տրամադրվում, նրանք կարող էին միայն թղթերի վրա նշումներ անել: Սա ևս արվում էր գաղտնիություն պահպանելու նպատակով: Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության՝ գաղտնազերծված արխիվային փաստաթղթերից հայտնի է դառնում, որ թեև դասախո-

[9] Տես “MİT Özel Arşivi, Komisyon Müzakereleri’ne Ait Protokol, 06.1926”. “Milli İstihbarat Teşkilatı“ (http://www.mit.gov.tr/tarih_index.html):

[10] Տես *Էրդալ Իլթեր,* Նշ. աշխ., 2-A3:

[11] Տես նույն տեղում, 2-A4:

սությունների և գիտաժողովների բովանդակությունը գաղտնի էր, սակայն նշված էր դրանց թեմատիկ ուղղվածությունը, այն է՝ հետախուզության վարումն ըստ առաջին համաշխարհային պատերազմի փորձի, ներքին և արտաքին հետախուզական գործունեության դերը, ստեղծվելիք գաղտնի ծառայությունների գործունեության կազմակերպման հիմունքները[12]:

Այսպիսով՝ Նիկոլային զբաղվում էր ոչ միայն արտաքին հետախուզությանն առնչվող հարցերով, այլև Թուրքիայի ներսում ձեռնարկվելիք հետախուզական գործունեության պրոբլեմներով:

Թուրքական հետախուզության պաշտոնական պատմագրությունը ևս նշում է, որ Նիկոլային զբաղվում էր հետախուզական կառույցի կառուցվածքի, ինչպես նաև դրա ենթակայության հետ կապված հարցերով: Ուշադրության կենտրոնում էին և՛ հետախուզությունը, և՛ հակահետախուզությունն ու քարոզչությունը:

Թուրքական կառավարությունում Նիկոլայիի աշխատանքը գնահատվում էր ոչ միանշանակ կերպով: Այսպես. Գլխավոր շտաբի պետ Ֆևզի Չաքմաքը Թուրքիայի ղեկավարությանն ուղղած իր նամակներում դժգոհում էր Նիկոլայիից: Մասնավորապես՝ 1927 թ. հունվարի 31-ի գրությունում մարշալ Չաքմաքը Թուրքիայի կառավարությանը հայտնում է, որ «Նիկոլայիի դասընթացներում ոչ բավարար խորությամբ է ուսումնասիրվում գործնական հատվածը, նվազ է դասերի օգտավետությունը»[13]:

Չնայած Թուրքիայի Գլխավոր շտաբի պետի որոշակի դժգոհություններին՝ Նիկոլային շարունակեց իր աշխատանքը: Անձնակազմի կրթության և վերապատրաստման հետ մեկտեղ խիստ կարևոր էին նաև անվտանգության կազմակերպության կառուցվածքը և ներքին կանոնադրությունը, ինչի ուղղությամբ ևս աշխատանքներ էին տարվում:

1926 թվականի աշնանը՝ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին, ավելի վաղ կատարված աշխատանքների շնորհիվ, կառույցի կազմավորումն ավարտվեց և հաստատվեց նրա կանոնադրությունը: Ըստ այդմ Թուրքիայի անվտանգության կառույցը բաղկացած էր լինելու չորս հիմնական բաժիններից.

առաջին բաժին՝ հետախուզություն (լրտեսական ծառայություն),

երկրորդ բաժին՝ հակահետախուզություն,

երրորդ բաժին՝ քարոզչություն,

չորրորդ բաժին՝ տեխնիկական աջակցություն:

Հետախուզական աշխատանքով զբաղվող առաջին բաժինը համալրված էր գերազանցապես թուրքական բանակի սպաներով, հակահետախուզությունը՝ հիմնականում ներքին գործերի նախարարության աշխատողներով (ժանդարմերիա և ոստիկանություն), քարոզչական բաժինը՝ հիմնականում արտաքին գործերի նախարարության աշխատողներով, տեխնիկական աջակցության բաժինը՝ զինվորական ու քաղաքացիական մասնագետներով:

[12] Տես նույն տեղում, 2-A5:

[13] Տես նույն տեղում, 2-A5-A6:

1926 թ. նոյեմբերին նշանակվեցին նաև այդ չորս բաժինների ղեկավարները: Առաջին բաժինը գլխավորեց կադրային մայոր Մեհմետ Նուրին, երկրորդ բաժինը՝ ժանդարմերիայի փոխգնդապետ Քեմալ բեյը, երրորդը՝ Մուհիդդին Ռաշիտ բեյը, չորրորդը՝ կադրային մայոր Շահաբ բեյը[14]:

Տվյալ ժամանակահատվածում աճեց նաև Թուրքիայի տարածքում գործող մասնաճյուղերի թիվը: Ստամբուլում, Ադանայում, Իզմիրում, Կարսում և Դիարբեքիրում գործող մասնաճյուղերին ավելացան Անթալիայի (Միջերկրական ծով) և Սամսունի (Սև ծով) բաժինները, որոնք ևս ենթակա էին Անկարայի կենտրոնական կառույցին, որը 1926 թ. աշնանը տեղափոխվեց նոր առանձին շենք*: Կենտրոնականայանի երկհարկ ոչ մեծ շենքն ուներ 5 սենյակ, որտեղ ծառայում էր 10 աշխատող[15]:

Բացի ներքին մասնաճյուղերից, հետախուզական կառույցը արտասահմանում ուներ 3 մասնաճյուղ, մասնավորապես՝ Վիեննայում (հյուսիսային ուղղություն՝ Եվրոպա), Թեհրանում (արևելյան ուղղություն՝ Իրան, Միջին և Արևելյան Ասիա) և Կահիրեում (հարավային ուղղություն՝ Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի արաբախոս պետություններ)[16]: Խորհրդային Միությունում կարող էին գործել ինչպես Թեհրանի, այնպես էլ Վիեննայի մասնաճյուղերը:

Թուրքիայի ներսում Ազգային անվտանգության ծառայության մասնաճյուղերի միջև ևս կատարվում էր գործունեության որակական ու տարածական բաժանում: Մասնավորապես՝ Ստամբուլի, Ադանայի, Դիարբեքիրի, Իզմիրի, Կարսի շրջանային կենտրոնները պատասխանատու էին ինչպես հետախուզության, այնպես էլ հակահետախուզության համար, իսկ Անթալիայի և Սամսունի կենտրոնները՝ միայն հակահետախուզության համար: Անկարայում, բացի կենտրոնականայանից, կար նաև միայն հակահետախուզական գործունեություն ծավալող բաժանմունք: Այսպիսով՝ ընդհանուր 8 մասնաճյուղերից 3-ն զբաղվում էին միայն հակահետախուզությամբ, իսկ մյուսները՝ և՛ հակահետախուզությամբ, և՛ հետախուզությամբ: Այս ճյուղերը գործում էին իրարից անկախ և հաշվետու էին միայն Անկարայի կենտրոնականայանին: Բացի այդ, միայն կենտրոնականայանում էին կատարվում տեխնիկական և քարոզչական բնույթի աշխատանքները:

1926 թ. դեկտեմբերի 19-ին Թուրքիայի Հանրապետության նախարարների խորհրդի նիստում կայացվել է պետության անվտանգության և պաշտպանության համար գաղտնի կերպով Ազգային անվտանգության ծառայություն ստեղծելու որոշում[17]: Որոշումն ստորագրել է Թուրքիայի Նախագահ Մուստաֆա Քեմալը (Աթաթուրք): Այս որոշմամբ պաշտոնապես ստեղծվել է

[14] Տես նույն տեղում, 2-A6:

* Անկարայի Շեհիթ Քեսքին փողոցում:

[15] Տես “Binalarımız”. “Milli İstihbarat Teşkilatı” (http://www.mit.gov.tr/binalarimiz.html):

[16] Տես *Էրդալ Իլթեր,* Նշ. աշխ., 2-A6:

[17] Տես «Թուրքիայի Հանրապետության կառավարության Հատուկ քարտուղարություն, N – գաղտնի որոշում, 19.12.1926» (թուրք.): “Milli İstihbarat Teşkilatı” (http://www.mit.gov.tr/tarih_index.html):

Թուրքիայի Ազգային անվտանգության ծառայությունը՝ որպես կառավարությանը ենթակա վարչություն[18]: Նույն ամսվա 25-ին կադրային փոխգնդապետ Շյուքրյու Ալին (Օգել) նշանակվել է Թուրքիայի Ազգային անվտանգության ծառայության ղեկավար: Շյուքրյու Ալիի թեկնածությունն առաջադրել է վարչապետ Իսմեթ Ինյոնյուն և հաստատել է Նախագահ Մուստաֆա Քեմալը[19]:

Շյուքրյու Ալին (Օգել) (1886–1973) ավարտել է Ստամբուլի ռազմական ակադեմիան և 1909 թվականի օգոստոսին մտել օսմանյան բանակի շարքերը կրտսեր լեյտենանտի զինվորական կոչումով: 1919–1923 թթ. եղել է ազգայնական շարժման անդամ ու ծառայել Արևմտյան ճակատում՝ մասնակցելով Հունաստանի դեմ ռազմական գործողություններին: Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից հետո՝ 1925–1926 թթ., մինչև Ազգային անվտանգության պետի պաշտոնի ստանձնումը մասնակցել է Ստամբուլում գործող Բոսֆորի և Դարդանելի նեղուցների հանձնաժողովի աշխատանքներին:

Այսպիսով՝ Թուրքիայի Ազգային անվտանգության ծառայության առաջին ղեկավարն ուներ զինվորական կրթություն ու ռազմական փորձ և, ինչը այդ ժամանակ առավել կարևոր էր, վայելում էր Թուրքիայի ղեկավարների վստահությունը: Վստահության գործոնը խիստ կարևոր էր, քանի որ անվտանգության ծառայության ղեկավարի համար փորձի տեսանկյունից ավելի նախընտրելի կլինեին օսմանյան կայսրության «Հատուկ կազմակերպության» և դրան հաջորդած կառույցների աշխատողները: Սակայն 1923–1925 թթ. ազգայնական շարժման ղեկավարների միջև պառակտման և Մուստաֆա Քեմալի դեմ իթթիհատականների ընդդիմության պայմաններում հետախուզության ղեկավարի պաշտոնում նշանակելու համար իշխանության համար առաջնայինը ոչ այնքան փորձառությունն էր, որքան հավատարմությունը:

Թուրքիայի Զինված ուժերին կից ստեղծված կառույցն այդ տարվա ընթացքում ստացավ իր անվանումը, ղեկավարը, ոչ մեծաքանակ անձնակազմ, կանոնադրություն, մի քանի ճյուղեր արտասահմանում և երկրի ներսում, ինչպես նաև անցավ Թուրքիայի կառավարության ենթակայության ներքո: Այս հետախուզական կառույցի ստեղծման գործում մեծ դեր խաղաց Վալտեր Նիկոլային՝ թուրք անձնակազմին փոխանցելով գերմանական փորձն ու հարուստ մասնագիտական գիտելիքները: Այսինքն՝ շարունակվեց երիտթուրքական շրջանի ավանդույթը, ըստ որի՝ բանակում և ուժային կառույցների ձևավորման գործում լայնորեն կիրառել գերմանական փորձն ու մոտեցումները՝ աշխատանքներ կատարելով գերմանացի մասնագետների վերահսկողությամբ և ուղղորդմամբ:

Արդեն 1927 թ. Ազգային անվտանգության ծառայության կենտրոնը տե-

[18] Տես *Էրդալ Իլթեր,* Նշ. աշխ., 2-B1:

[19] Տես «Թուրքիայի Հանրապետության կառավարության Հատուկ քարտուղարություն, N –որոշում, 25.12.1926» (թուրք.): “Milli İstihbarat Teşkilatı” (http://www.mit.gov.tr/tarih_index.html):

ղափոխվեց Անկարայում գտնվող ավելի մեծ շենք, քանի որ անձնակազմի թիվն էապես մեծացավ[20]:

1927 թվականի հունվարի 5-ին Ազգային անվտանգության ծառայությունը Ռազմական նախարարության ենթակայությունից տեղափոխվեց Թուրքիայի ներքին գործերի նախարարության համակարգ: Մի շարք գերատեսչությունների, այդ թվում՝ նահանգապետարաններին, ժանդարմերիայի հրամանատարությանը, ուղարկվեց ներքին գործերի նախարար Մ. Ձեմիլի (Ոէյբադին) ստորագրությամբ մի խիստ գաղտնի ծանուցում, որում նշվում էր. «[Թուրքիայի] կառավարության և բանակի անվտանգության, օտար պետությունների՝ քարոզչություն և հետախուզություն վարող ծառայությունների դեմ գործողությունների համար առաջ է եկել հատուկ միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն: Այս նպատակով ստեղծվել է «Ազգային անվտանգության ծառայությունը», որի կենտրոնն Անկարայում է, իսկ տարածքային կենտրոնները՝ երկրի ներսում: Ամեն շրջանում գտնվող կենտրոնները շարունակաբար կատարելու են ուսումնասիրություններ...»: Բացի այդ, սահմանվում էր, որ ԱԱԾ-ի գործունեությունը «խիստ գաղտնի» է, իսկ կառույցի գոյության մասին գիտենալու են ռազմական և պետական կառույցներից սահմանափակ թվով վստահելի անձինք: Նշվում էր, որ պետական և ռազմական կառույցները, ըստ պահանջի, Թուրքիայի կառավարության անունից պետք է հետևեին ԱԱԾ-ի կանխազգուշացումներին: ԱԱԾ-ի աշխատողներն իրավունք ունեին զենք կրելու, նրանց տրվելու էին անձնական վկայականներ:

Թուրքական պատմագրությունը 1927 թվականի հունվարի 6-ը համարում է Թուրքիայի Ազգային անվտանգության ծառայության հիմնադրման պաշտոնական օր, իսկ 1926 թ. հունվարի 6-ից մինչ այդ օրն ընկած ժամանակահատվածն էլ նշում է որպես կազմավորման փուլ[21]:

1927 թ. առաջին կեսին ԱԱԾ-ի երրորդ բաժինը, որն զբաղվում էր քարոզչությամբ, փակվել է, քանի որ չի ունեցել համապատասխան թվով մասնագետներ և քարոզչական նյութեր: Նույն թվականի հունվարի 29-ին ԱԱԾ-ի Անթալիայի կենտրոնը տեղափոխվել է Քոնիա: Արխիվային փաստաթղթերից հայտնի է դարձել ևս մեկ հետաքրքրական դրվագ: Ազգային անվտանգությանն է հանձնարարվել ոչ միայն «արտասահմանյան ծառայությունների գործակալական գործունեության», այլև «կոմունիստական գործունեության» դեմ պայքարը, որը մինչ այդ հանձնարարված էր Թուրքիայի ոստիկանության գլխավոր վարչությանը[22]: 1928 թ. Կարսի շրջանային կենտրոնը տեղափոխվել է նախ Տրապիզոն, ապա՝ Էրզրում: Այս կենտրոնն աշխարհագրորեն առավել մոտ էր Խորհրդային Միությանը և պատասխանատու էր հատկապես ԽՍՀՄ համապատասխան կառույցների գործունեության դեմ պայքարի համար: Նույն թվականին Իզմիրում և Ստամբուլում, որոնք Թուրքիայի

[20] Տես “Binalarımız”. “Milli İstihbarat Teşkilatı” (http://www.mit.gov.tr/binalarimiz.html):

[21] Տես *Էրդալ Իլթեր,* Նշ. աշխ., 2-C1:

[22] Տես նույն տեղում:

խոշոր նավահանգիստներն էին, ստեղծվել է նաև ծովային հարցերով վարչություն: 1929 թ. փակվել է Սամսունի շրջանային կենտրոնը, որի գործառույթներն ու պատասխանատվության գոտին բաժանվում են Անկարայի և Էրզրումի կենտրոնների միջև: Միևնույն ժամանակ, ֆինանսական խնդիրների պատճառով ժամանակավորապես փակվել են Վիեննայում, Թեհրանում և Կահիրեում գործող ներկայացուցչությունները:

ԱԱԾ-ն առաջին իսկ տարիներին սկսել է վարել ակտիվ գործունեություն: Թուրքական պատմագրությունը նշում է, որ նա ներգրավվել է 1927 թ. քրդական Հոյբունի ապստամբության ճնշման գործում, գաղտնի կերպով գործող Կոմունիստական կուսակցության գործունեության, Սևծովյան տարածաշրջանում Կարմիր Լազիստան ստեղծելու նախաձեռնության, Հունական պատրիարքության, Միջերկրական ծովում Մուսոլինիի գլխավորած Իտալիայի գործողությունների դեմ պայքարում: Կառույցն ակտիվորեն մասնակցել է նաև Թուրքիայի Հանրապետության Ալեքսանդրետի շրջանի (հետագայում՝ Հաթայ) միացմանը, որն ավարտվել է 1939 թ. հունիսի 30-ին: Թուրքիայի ԱԱԾ-ն 1920-ականների վերջին մասնակցել է նաև Թուրքիայում արտասահմանյան ընկերություններին ու անհատներին պատկանող գործարանների, հանքերի, ենթակառուցվածքների (այդ թվում՝ երկաթուղիների) պետականացմանը՝ համապատասխան տեղեկություններ տրամադրելով թուրքական կառավարությանը: Բացի այդ, նա 1929–1930 թվականներին փորձել է հետախուզական տվյալների փոխանակման հարցում համագործակցել Ստամբուլում ԽՍՀՄ հյուպատոսությանը կից Պետական քաղաքական վարչության (*Գ.Պ.Ս.*)[23] հետ, սակայն մերժում է ստացել: ԽՍՀՄ-ն իր հերթին Ստամբուլում ունեցել է խոշոր գործակալական ցանց, որի միջոցով, օրինակ, ձեռք է բերել այդ ժամանակ Պոլսի Հայոց պատրիարք Մեսրոպ Նարոյանի նամակագրությունը[24]:

Այսպիսով՝ արևմտյան չափանիշներին ձգտող պետության կազմավորման պայմաններում Թուրքիայի անվտանգության կառույցը ստեղծվել է որպես փոքր ռազմականացված կազմակերպություն, որի հետագա զարգացումը ժամանակի հրամայական էր: Կառույցի ստեղծման հարցում մեծ ներդրում է ունեցել Վալտեր Նիկոլային, որի շնորհիվ Թուրքիայի Հանրապետության անվտանգության առաջին կառույցի ստեղծման համար հիմք է դարձել հետախուզական կառույցների գերմանական մոդելը: Ընդսմին ԹՀ ծառայությունը, ունենալով մի շարք խնդիրներ, այդ թվում՝ անձնակազմի պակաս, նյութական միջոցների սղություն, պետք է նորաստեղծ պետության համար կատարեր հույժ պատասխանատու աշխատանք:

[23] Տես *Георгий Агабеков.* Г.П.У. (Записки чекиста). М., 1930, сс. 218–219:

[24] Տես նույն տեղում, էջ 215–216:

ИСТОРИЯ НАЦИОНАЛЬНЫХ СТРУКТУР БЕЗОПАСНОСТИ

СОЗДАНИЕ СЛУЖБЫ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ ТУРЕЦКОЙ РЕСПУБЛИКИ

Г. А. ПЕТРОСЯН, аспирант Института востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

В первый период формирования государственной структуры вновь образованной Турецкой Республики (1923–1926 гг.) роль службы безопасности продолжали выполнять соответствующие органы Вооруженных сил. Однако была необходимость в обеспечении разведывательно-контрразведывательной деятельности на профессиональном уровне. Этого требовали как интересы государства, так и вопрос обеспечения личной безопасности его лидера Мустафы Кемаля (Кемаль Ататюрк), который проводил политику коренных реформ в социально-правовом устройстве государства с последовательным усилением авторитарности своего режима.

В начале 1926 г. создание специальной структуры стартовало с приглашения для руководства этим процессом бывшего главы разведывательной службы Кайзеровской Германии в годы Первой мировой войны полковника Вальтера Николаи, в дальнейшем сыгравшего существенную роль в формировании аналогичных структур Третьего Рейха.

На турецкую службу безопасности (с 1965 г. – Национальная разведывательная организация) основная функция была возложена в соответствии с тезисом о наибольшей опасности для государства «внутреннего врага», заложенным в основу государства со дня его создания в 1923 г. В соответствии с этим НСБ Турции занималась слежкой за отдельными политическими и общественными деятелями, левыми партиями и движениями, преследованием партий национальных меньшинств, при этом широко используя потенциал националистических сил. В частности, для борьбы против армянской организации АСАЛА *(Armenian Secret Army for the Liberation of Armenia)* она (уже как НРО), не имея достаточного зарубежного потенциала, использовала националистически настроенных лидеров турецкой организованной преступности (мафии), вплоть до выдачи им дипломатических паспортов, что вызвало крупный скандал.

Знание основных принципов и методов деятельности НСБ Турции, заложенных при ее создании, позволяет лучше понять суть ее сегодняшней НРО, поскольку, несмотря на внешние изменения и законодательное закрепление в 1965 г., они по своей сути не изменились.

HISTORY OF NATIONAL SECURITY STRUCTURES

ESTABLISHMENT OF THE NATIONAL SECURITY SERVICE OF THE REPUBLIC OF TURKEY

G. A. PETROSYAN, PhD Student, Institute of Oriental Studies, NAS, RA

SUMMARY

At an early stage of the state structure formation of the newly proclaimed Republic of Turkey (in 1923–1926) the role of the security service was carried forward by its Armed Forces' relevant bodies. However, providing for the intelligence and counterintelligence activity on professional level was an urgency. This was required by both the state interests, and the issue of guaranteeing the personal safety of the state leader, Mustafa Kemal (Kemal Atatürk), who run a policy of radical reforms in the social and legal setup of the state with consistent enhancement of his regime's authority.

In the beginning of 1926, the creation of special structures kicked off by inviting Colonel Walter Nikolai, the former Chief of the Intelligence Service of German Empire during WWI, who later played a significant part in the formation of analogous structures of the Third Reich, to direct the process in Turkey.

The Turkish Security Service (since 1965 – National Intelligence Organization) undertook the main function in accordance with the thesis of "the internal enemy" posing the utmost danger for the state, which underlay the state from the very day of its establishement in 1923. And, in line with this, the Turkey National Security Service conducted surveillance of individual political and public figures, left-wing parties and movements, persecuted national minority parties, along with largely employing the capacity of nationalistic forces. In particular, for the struggle against the ASALA *(Armenian Secret Army for the Liberation of Armenia)* it (already as Turkey National Intelligence Organization), not possessing sufficient foreign potential, made use of nationalistically disposed leaders of Turkish organized crime (mafia), up to issuing them diplomatic passports, which caused a major scandal.

Awareness of the basic principles and methods of activity of the Turkey National Security Service, which underlay its background at the time of its origination, enables us to better conceive the essence of its nowadays National Intelligence Organization, since, notwithstanding its outward changes and legislative strengthening in 1965, those haven't undergone essential changes anyway.

ՈՐՈՎԱՅՆԻ ՍՈՒՐ ՑԱՎԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՀՈՍՊԻՏԱԼԱՑՎԱԾ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Վ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, բ/ծ գնդապետ, Երևանի կայազորային հոսպիտալի պետ

Որովայնի սուր ցավով հոսպիտալացված հիվանդների մոտ 50 %-ի ախտորոշումը որդանման ելունի սուր բորբոքումն է: Այն առավել հաճախ հանդիպում է տղամարդկանց 18-30 տարեկան տարիքային խմբում[1]: ՀՀ ԶՈՒ-ի զինծառայողների մեծ մասը 18-40 տարեկան տղամարդիկ են, այդ իսկ պատճառով ռազմաբժշկական պրակտիկայում բավական հաճախ են հանդիպում որդանման ելունի սուր բորբոքմամբ պայմանավորված որովայնի սուր ցավի դեպքերը: Քանի որ նշված հիվանդությունը տարածված է և ոչ պատշաճ բուժման դեպքում կարող է առաջ բերել ծանր բարդություններ, ապա սուր ապենդիցիտի վաղ ախտորոշումը և բուժումը անհրաժեշտ է դասել վիրաբուժական ծառայության կարևոր հիմնախնդիրների շարքը:

Սուր ապենդիցիտի ախտորոշումն առաջին հերթին հիմնվում է կլինիկական հետազոտությունների տվյալների վրա, որոնցում ներառվում են հիվանդի գանգատները, անամնեզի տվյալները, բժշկի կատարած օբյեկտիվ զննման և լրացուցիչ լաբորատոր ու գործիքային հետազոտությունների տվյալները:

Սուր ապենդիցիտի տարբերակիչ ախտորոշումը հաճախ կարող է լինել բարդ: Այն կարող է ունենալ ատիպիկ կլինիկական ընթացք, իսկ բնորոշ կլինիկական ախտանշանների դրսևորումը կարող է պայմանավորված լինել այլ հիվանդություններով: Տարբերակիչ ախտորոշումը հատկապես դժվար է լինում հիվանդության զարգացման վաղ շրջանում, առավելապես երիտասարդ և սակավափորձ վիրաբույժների համար:

Վերջին տասնամյակներում սուր ապենդիցիտի ախտորոշման հիմնախնդիրը մնում է արդիական, քանի որ տղամարդկանց անհարկի վիրահատությունների թիվը դեռևս 15-30 % է, կանանց դեպքում այն հասնում է 45

[1] Տես *R. E. Andersson, A. Hugander, A. J. Thulin.* Diagnostic accuracy and perforation rate in appendicitis: association with age and sex of the patient and with appendicectomy rate. “The European Journal of Surgery”, 1992, Vol. 158, N 1:

%-ի[2]: Սուր ապենդիցիտի ուշացած ախտորոշման հետևանքով առաջացող բարդություններից են որդանման ելունի թափածակումը (15-18 %) և որովայնամզաբորբը (պերիտոնիտ, 20 %)[3], ինչից խուսափելու համար վիրաբույժների մեծ մասը կասկածելի դեպքերում նախընտրում է շտապ վիրահատական միջամտությունը:

Ներկայումս սուր ապենդիցիտի ախտորոշման համար կիրառվում են ժամանակակից գործիքային հետազոտության եղանակները, ինչպիսիք են, օրինակ, սոնոգրաֆիան, համակարգչային շերտագրումը, որովայնադիտումը (լապարոսկոպիա): Կլինիկական պրակտիկայում սոնոգրաֆիան և համակարգչային շերտագրումը ավելի հաճախ կիրառվում են որովայնի սուր վիրաբուժական հիվանդությունների ախտորոշման նպատակով: Գրականության մեջ հաղորդվում են ուլտրաձայնային հետազոտության և համակարգչային շերտագրման ախտորոշիչ զգայունության և բնորոշության (սպեցիֆիկության) վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ, սակայն պարզ է, որ գործիքային հետազոտությունների արդյունքները չեն կարող վճռորոշ նշանակություն ունենալ առանց պատշաճ կլինիկական վերլուծության:

Այժմ կլինիկական պրակտիկայում լայնորեն կիրառվում է ուլտրաձայնային հետազոտությունը՝ իր մի շարք առավելությունների շնորհիվ, որոնց թվում են հետազոտության մատչելիությունը, պարզությունը և հիվանդի համար անվտանգությունը: Գրականության մեջ ներկայացված տվյալների համաձայն՝ սուր ապենդիցիտի դեպքում ուլտրաձայնային հետազոտության ախտորոշիչ զգայունությունը 44–98 % է, իսկ բնորոշությունը՝ 47–95 %[4]: Որդանման ելունի ատիպիկ տեղակայման դեպքում ուլտրաձայ-

---

[2] Տես *C. D. Douglas, N. E. Macpherson, P. M. Davidson, J. S. Gani.* Randomised controlled trial of ultrasonography in diagnosis of acute appendicitis, incorporating the Alvarado score. “British Medical Journal”, 2000, Vol. 321, N 7266; *J. M. Hay.* Appendicite. “Revue du Praticien” (Paris), 1992, N 42; *P. F. Jones*, *Z. H. Krakowski, G. G. Youngson.* Emergency abdominal surgery. Ed. 3. London, 1998; *S. H. Shah, M. Rashid.* Appendicectomy: modified Alvarado scoring system; does it help to avoid unwanted operation? “The Professional Medical Journal”, 2004; Vol. 11, N 1; *А. В. Козаченко, И. А. Дрозд, Т. П. Шумейко, С. А. Шарапанюк.* Нужны ли напрасные аппендэктомии? “Харківська хірургічна школа”, 2009, т. 34, № 3:

[3] Տես *Ռ. Է. Անդերսոն, Ա. Հուգանդեր, Ա. Ջ. Թուլին,* Նշ. աշխ., *F. T. Drake, N. E. Mottey, E. T. Farrokhi, M. G. Florence, M. G. Johnson, Ch. Mock, S. R. Steele, R. C. Thirlby, D. R. Flum.* Time to Appendectomy and Risk of Perforation in Acute Appendicitis. "JAMA Surgery", August 2014, Vol. 149, N 8:

[4] Տես *B. M. Garcia Peña, K. D. Mandl, S. J. Kraus, A. C. Fischer, G. R. Fleisher, D. P. Lund, G. A. Taylor.* Ultrasonography and limited computed tomography in the diagnosis and management of appendicitis in children. “JAMA: The Journal of the American Medical Association”, 1999, Vol. 282, N 11; *M. Hernanz-Schulman.* CT and US in the Diagnosis of Appendicitis: An Argument for CT. “Radiology”, 2010, Vol. 255, N 1; *С. А. Совцов.* Острый аппендицит. Клиническое течение, диагностика, лечение. Челябинск, 2016; *S. Kaiser, B. Frenckner, H. K. Jorulf.* Suspected appendicitis in children: US and CT – a prospective randomized study. “Radiology”, 2002, Vol. 223, N 3:

նային հետազոտության զգայունությունը նվազում է: Հետազոտության ճշգրտությունը նվազում է նաև գիրությամբ տառապող հիվանդների զննման ժամանակ և աղեգալարների փքանքի դեպքում: Ուլտրաձայնային հետազոտության ճշգրտությունն զգալի չափով պայմանավորված է նաև հետազոտող մասնագետի փորձառությամբ:

Առավել բարձր զգայունություն ու ճշգրտություն ունի որովայնի համակարգչային շերտագրումը: Դրա հիմնական թերություններն են բարձր արժեքը և հիվանդի ճառագայթահարումը[5]: Անհրաժեշտ է նաև նշել, որ ոչ բոլոր զինվորական հոսպիտալներն ունեն համակարգչային շերտագրման սարքեր և հետազոտության համար անհրաժեշտ հերթապահ մշտական բժշկական անձնակազմ:

Սուր ապենդիցիտի ախտորոշման նպատակով համակարգչային շերտագրման պարտադիր կիրառման վերաբերյալ գրականության տվյալները նույնպես հակասական են. մի շարք հեղինակներ խորհուրդ են տալիս նշված հետազոտությունը կիրառել միայն բարդ կլինիկայով դեպքերում[6]: Հետազոտություններից մեկի տվյալներով՝ սուր ապենդիցիտի կասկածով հոսպիտալացված 1630 հիվանդների ախտորոշման ժամանակ համակարգչային շերտագրման պարտադիր կիրառումը էապես չի նվազեցրել անհարկի վիրահատական միջամտությունների ցուցանիշը[7]: Մեկ այլ հետազոտության ժամանակ ևս ուլտրաձայնային հետազոտության ու համակարգչային շերտագրման կիրառումը շոշափելի կերպով չի նվազեցրել անհարկի վիրահատությունների թիվը[8]:

Ընդհանրացնելով աղբյուրներում ներկայացված տվյալները՝ կարող ենք նշել, որ ախտորոշման ժամանակակից գործիքային եղանակների կիրառու-

---

[5] Տես *K. M. Guite, L. H. Hinshaw, F. N. Ranallo, M. J. Lindstrom, F. T. Lee.* Ionizing radiation in abdominal CT: unindicated multiphase scans are an important source of medically unnecessary exposure. “Journal of the American College of Radiology”, 2011, Vol. 8, N 11; *F. A. Mettler, W. Huda, T. T. Yoshizumi, M. Mahesh.* Effective doses in radiology and diagnostic nuclear medicine: A catalog. “Radiology”, 2008, Vol. 24, N 1:

[6] Տես *J. J. Atema,* S. L. Gans, *A. van Randen, W. Laméris, H. W. van Es, J. P. M. van Heesewijk, B. van Ramshorst, W. H. Bouma, W. Ten Hove, E. M. van Keulen, M. G. W. Dijkgraaf, P. M. M. Bossuyt, J. Stoker, M. A. Boermeester.* Comparison of Imaging Strategies with Conditional versus Immediate Contrast-Enhanced Computed Tomography in Patients with Clinical Suspicion of Acute Appendicitis. “European Radiology”, 2015, Vol. 25, N 8; *А. В. Кушнир, В. В. Зуев.* Ультразвуковая диагностика и компьютерная томография в диагностике острого аппендицита. «Бюллетень медицинских интернет-конференций», т. 5, № 5:

[7] Տես *M. Petrosyan, J. Estrada, S. Chan, W. N. Yacoub, R. L. Kelso, R. J. Mason.* CT scan in patients with suspected appendicitis: clinical implications for the acute care surgeon. “European Surgical Research”, 2008, Vol. 40, N 2:

[8] Տես *S. L. Lee, A. J. Walsh, H. S. Ho.* Computed tomography and ultrasonography do not improve and may delay the diagnosis and treatment of appendicitis. “Archives of Surgery”, 2001, Vol. 136, N 5:

մը, իր կարևոր նշանակությամբ հանդերձ, չի կարող բացառել հետազոտման կլինիկական եղանակները: Սուր ապենդիցիտի ախտորոշման ժամանակ դեռևս հիմնական են համարվում կլինիկական հետազոտման եղանակները: Ախտորոշման արդյունքները բարելավելու նպատակով կիրառվում են նաև տարբեր կլինիկական սանդղակներ՝ հիմնված ախտանշանների և որոշ լաբորատոր ցուցանիշների վրա: Կլինիկական պրակտիկայում առավել հաճախ կիրառվում է Ալվարադոյի բալային սանդղակը՝ տարբեր փոփոխակներով (մոդիֆիկացիաներ) հանդերձ:

Ալվարադոյի փոփոխակված կլինիկական սանդղակը կլինիկական ախտորոշման պարզ ու մատչելի եղանակ է, որը կիրառելի է բուժհիմնարկի ցանկացած հագեցվածության պայմաններում[9]: Այնուհանդերձ, այս սանդղակը կարող է ապահովել նաև տարբեր ճշգրտություն կախված այն հանգամանքից, թե ինչ պայմաններում և ինչ խմբերի նկատմամբ է կիրարկվել: Որոշ հեղինակների տվյալներով՝ Ալվարադոյի կլինիկական սանդղակն ունեցել է նվազ զգայունություն, երբ կիրարկվել է իգական սեռի հիվանդների նկատմամբ:

Մեր կատարած հետազոտության նպատակը հոսպիտալային օղակում սուր ապենդիցիտի ախտորոշման ցուցանիշների բարելավման համար Ալվարադոյի սանդղակի կիրառման արդյունավետության գնահատումն է: Անհրաժեշտ է նշել, որ ներկայումս դեռ մշակված չեն բուժհիմնարկներում սուր ապենդիցիտի կասկածով հիվանդների վարման նկատմամբ արդյունավետ և համընդհանուր մոտեցումներ:

Հետազոտությունը կատարվել է ՀՀ ՊՆ ԿԿԶՀ և ԵԿՀ վիրաբուժական բաժանմունքներում 2015–2017 թթ. ժամանակահատվածում: Հետազոտվել են «սուր ապենդիցիտ» նախնական ախտորոշումով հոսպիտալացված 124 հիվանդների բուժման արդյունքները: 104 հիվանդ եղել է արական սեռի, տարիքը՝ 18-60-ի միջակայքում: Նրանցից 56-ը պարտադիր զինծառայության շարքայիններ էին, 38-ը՝ պայմանագրային զինծառայողներ ու սպաներ, իսկ 30-ը՝ նրանց ընտանիքների անդամներ ու քաղաքացիներ:

Որդանման ելունի սուր բորբոքման կլինիկական ախտանշաններով դիմած հիվանդների հետազոտության ընթացքում ձեռնարկվել են գանգատների ու հիվանդության մասին հարցում և կլինիկական զննություն: Կատարվել են նաև ստանդարտ լաբորատոր-գործիքային հետազոտություններ, որոնք հիմնականում ներառել են արյան ընդհանուր ու բիոքիմիական քննություն, մեզի ընդհանուր քննություն, էլեկտրասրտագրում և կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն: Յուրաքանչյուր հիվանդի տվյալների հիման վրա հաշվարկվել է նաև ընդհանուր բալի արժեքը՝ ըստ Ալվարադոյի փոփոխակված սանդղակի (տես աղ. 1):

[9] Տես *A. A. Alvarado.* How to improve the clinical diagnosis of acute appendicitis in resource limited settings. “World Journal of Emergency Surgery”, 2016, Vol 11, N 1:

Աղյուսակ 1

ԱԼՎԱՐԱԴՈՅԻ ՓՈՓՈԽԱԿՎԱԾ ԲԱԼԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ

ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԲԱԼԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ
Ցավ աջ զստափոսում	1
Ախորժակի կորուստ	1
Որովայնի շոշափման ժամանակ ցավ աջ զստափոսում	2
Սրտխառնոց/փսխում	1
Որովայնի պատի մկանային լարվածություն/որովայնամզի գրգռման ախտանշաններ	1
Մարմնի ջերմաստիճանի բարձրացում (> 37,0 C^{o})	1
Լրացուցիչ կլինիկական ախտանշաններ (Սիտկովսկու, Ռովզինգի և այլն)	1
Լեյկոցիտոզ (> 10 x 10^{9} / լ)	2
Ընդհանուր բալային արժեքը	10

Հետազոտվող հիվանդներն ըստ Ալվարադոյի կլինիկական սանդղակի բալային արժեքների բաժանվել են երեք խմբի (տես աղ. 2):

Աղյուսակ 2

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԽՄԲԵՐԻ

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԼԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ	ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԹԻՎԸ
I	1-4	28
II	5-7	52
III	8-10	44

Առաջին խմբի դեպքում Ալվարադոյի սանդղակով բալային արժեքը կազմել է 1–4, այսինքն՝ այս հիվանդներն ընդգրկվել են ցածր ռիսկայնության խմբում, երբ սուր ապենդիցիտի հավանականությունը եղել է խիստ փոքր: Նրանց նկատմամբ սահմանվել է միայն 1-2-օրյա ստացիոնար հսկողություն: Այն դեպքում, երբ բալային արժեքի աճում չի նկատվել, հիվանդները դուրս են գրվել հոսպիտալից:

Երկրորդ խմբի դեպքում Ալվարադոյի սանդղակով բալային արժեքը կազմել է 5–7: Այս հիվանդները եղել են միջին աստիճանի ռիսկային խմբում: Հիմնական կլինիկական հետազոտությունների հետ մեկտեղ կատարվել է նաև նրանց որովայնի խոռոչի ուլտրաձայնային հետազոտություն և ավագ վիրաբույժի լրացուցիչ զննում: Վիրահատական միջամտության անհրաժեշտության մասին որոշումը կայացվել է կլինիկական հետազոտության արդյունքների համալիր գնահատումից հետո: Այն հիվանդները, որոնք շտապ

կարգով չեն վիրահատվել, եղել են 24–48-ժամյա ստացիոնար հսկողության պայմաններում, և նշված ժամանակահատվածում հերթապահ բժիշկը 4-6 ժամ պարբերականությամբ զննել է նրանց: Զննումների ընթացքում որոշվել է՝ արդյոք նվազում, թե աճում է Ալվարադոյի բալային արժեքը: Եթե այն նվազել է 4-ից, ապա հիվանդները դուրս են գրվել հոսպիտալից, իսկ երբ գերազանցել է 8-ը, ձեռնարկվել է վիրահատական միջամտություն:

Երրորդ խմբի համար Ալվարադոյի սանդղակով բալային արժեքը կազմել է 8-10: Այս հիվանդները բարձր աստիճանի ռիսկային էին: Կլինիկական և ուլտրաձայնային հետազոտությունից հետո, եթե այլ հիվանդությունները ժխտվել են, ախտորոշվել է սուր ապենդիցիտ և շտապ կարգով կատարվել վիրահատական միջամտություն:

Որովայնի խոռոչի ուլտրաձայնային հետազոտության են ենթարկվել ընդհանուր առմամբ սուր ապենդիցիտի կասկածով դիմած 118 հիվանդ: Ուլտրաձայնային հետազոտությունները կատարել են համապատասխան որակավորում և բավարար աշխատանքային փորձ ունեցող մասնագետներ: Ուլտրաձայնային հետազոտության ընթացքում տարբերակիչ ախտորոշման նպատակով զննվել են նաև որովայնի խոռոչի ներքին օրգանները և հետորովայնամզային տարածությունը: Որդանման ելունի բորբոքման ուլտրաձայնային ցուցանիշներ են համարվել ելունի տրամագծի մեծացումը, սեղմման ժամանակ ելունի կարկամածությունը (ռիգիդություն), ելունի հարակից հյուսվածքների բորբոքումը, կոնքում և միջգալարային տարածություններում ազատ հեղուկի առկայությունը:

Ընդհանուր առմամբ՝ հետազոտված 124 հիվանդներից վիրահատվել են 75-ը, ընդսմին վիրահատությունը կատարվել է բաց եղանակով (վիրահատական կտրվածքի միջոցով): Վերջնական ախտորոշումը կատարվել է ներվիրահատական զննման ժամանակ որդանման ելունի հայտնաբերված ախտաբանական փոփոխությունների և հեռացված ելունների ախտաձևաբանական (պաթոմորֆոլոգիական) հետազոտության տվյալների հիման վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1-ին խմբում ընդգրկված բոլոր հիվանդների համար «սուր ապենդիցիտ» նախնական ախտորոշումը ժխտվել է, և նրանք դուրս են գրվել հոսպիտալից: 2-րդ խմբում ընդգրկված 31 հիվանդ և 3-րդ խմբում ընդգրկված 44 հիվանդ ենթարկվել են վիրահատական միջամտության: Վիրահատված 75 հիվանդից 8-ի «սուր ապենդիցիտ» ախտորոշումը չի հաստատվել, և անհարկի ապենդեկտոմիայի հաճախականությունը կազմել է 10,6 %: Մեր տվյալները համապատասխանել են որոշ հեղինակների ներկայացրած տվյալներին[10], որոնց համաձայն՝ սուր ապենդիցիտի ախտորոշմամբ կա-

[10] Տես *J. A. Alvarez Sánchez, L. R. Fernández, L. J. Marín, J. M. Gil López, A. M. Moreno.* Diagnostic validity of signs and symptoms defining the diagnosis of acute appendicitis. “Gastroenterol Heptol”, 1997, Vol. 20, N 1; *G. M. Arain, K. M. Sohu, E. Ahmed, W. Haider, S. A. Naqi.* Role of Alvarado score in diagnosis of acute

տարված անհարկի վիրահատությունների հաճախականությունը կազմել է 10-16 %:

Որովայնի սուր ցավով դիմած բոլոր հիվանդներն ստացիոնար հսկողության նպատակով հոսպիտալացվել են: Դրա շնորհիվ հոսպիտալներում որդանման ելունի սուր բորբոքման ուշացած ախտորոշման և բուժման հետևանքով զարգացող բարդությունների հաճախականությունը եղել է զրոյի մոտ:

Հեռացված ելունների հյուսվածաբանական քննությամբ 20 դեպքում հաստատվել է «կատարակտային ապենդիցիտ» ախտորոշումը, 39 դեպքում՝ ֆլեգմանոզ ապենդիցիտը, 8 դեպքում՝ գանգրենոզ ապենդիցիտը: Բալային արժեքներն ըստ Ալվարադոյի սանդղակի համեմատվել են ներվիրահատական զննման տվյալների և հեռացված ելունների հյուսվածաբանական հետազոտության արդյունքների հետ (տես աղ. 3):

Աղյուսակ 3

ԱԼՎԱՐԱԴՈՅԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՍԱՆԴՂԱԿԻ ԵՎ ՈՐԴԱՆՄԱՆ ԵԼՈՒՆՆԵՐԻ ՀՅՈՒՍՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

	Սուր ապենդիցիտը հաստատվել է	Սուր ապենդիցիտը ժխտվել է	Արդյունքների ընդհանուր թիվը
Դրական արդյունք (Ալվարադոյի սանդղակ)	64 (իրական դրական)	8 (կեղծ դրական)	72
Բացասական արդյունք (Ալվարադոյի սանդղակ)	3 (կեղծ բացասական)	49 (իրական բացասական)	52
Հիվանդների ընդհանուր թիվը	67	57	124

3-րդ աղյուսակում ներկայացված տվյալների հիման վրա հաշվարկվել են Ալվարադոյի կլինիկական սանդղակի զգայունությունը և բնորոշությունը: Զգայունությունը կազմել է (64/64+3) x 100 % = 95,5 %, իսկ բնորոշությունը՝ (49/49+8) x 100 % = 85,9 %: Տվյալ հետազոտության ընթացքում Ալվարադոյի սանդղակի բարձր մակարդակի ախտորոշիչ բնորոշությունը և զգայունությունը պայմանավորված էին նաև այն հանգամանքով, որ հոսպիտալներում հետազոտված հիվանդների մեծ մասը եղել է (18-60 տարեկան)

appendicitis. “Pakistan Journal of Surgery”, 2001, Vol. 17, N 3-4; *G. Fenyo, G. Lindberg, P.-J. Blind, L. Enochsson, A. Oberg.* Diagnostic decision support in suspected acute appendicitis: validation of a simplified scoring system. “The European Journal of Surgery”, 1997, Vol. 163, N 11; *A. Ijaz, I. Riaz, H. Hassan, M. Hanif, K. Shahzad, I. Akhtar, M. M. Khan.* Scoring System for the Diagnosis of Acute Appendicitis. “Pakistan Journal Of Surgery”, 2000, Vol. 16, N 3-4:

տարիքային խմբի արական սեռի ներկայացուցիչ: Կարևոր է նշել, որ 1-ին խմբում, որտեղ բալային արժեքը չի գերազանցել 4-ը, սուր ապենդիցիտի զարգացման դեպքեր չեն դիտվել: Ուստի կարելի է հիմնավոր համարել, որ այն հիվանդները, որոնց համար Ալվարադոյի բալային արժեքը փոքր է 4-ից, ենթակա չեն վիրահատական բուժման: 3-րդ խմբում, որտեղ Ալվարադոյի բալային արժեքը եղել է 8–10-ի միջակայքում, հազվադեպ են եղել նաև անհարկի վիրահատությունները, ուստի իրավաչափ կերպով կարող ենք համարել, որ տվյալ միջակայքում գտնվող արժեքները բավարար ցուցում են հիվանդին վիրահատական միջամտության ենթարկելու համար:

Ալվարադոյի սանդղակի կիրառումը նպաստել է նաև գործիքային հետազոտությունների անհարկի կիրառման նվազեցմանը, մասնավորապես՝ 1-ին և 3-րդ խմբերում ընդգրկված հիվանդների որովայնի ուլտրաձայնային հետազոտությունը և համակարգչային շերտագրումը կիրառվել են միայն առանձին դեպքերում, մինչդեռ մի շարք հեղինակներ նպատակահարմար են համարում սուր ապենդիցիտի կասկածով հոսպիտալացված բոլոր հիվանդների նկատմամբ համակարգչային շերտագրման և ուլտրաձայնային հետազոտության կիրառումը[11]: Անհարկի գործիքային հետազոտությունների կիրառման խնդիրը հատկապես արդիական է ռազմական բժշկության ասպարեզում, որտեղ հաճախ բժշկական ռեսուրսները սահմանափակ են:

Ավելի բարդ խնդիր է սուր ապենդիցիտի կասկածով դիմած այն հիվանդների բուժումը, որոնց բալային արժեքն ըստ Ալվարադոյի սանդղակի 5–7 բալային միջակայքում է: Տվյալ դեպքում ախտորոշումը ճշտելու նպատակով հաճախ անհրաժեշտ է լինում կիրառել լրացուցիչ գործիքային հետազոտություններ, օրինակ՝ ուլտրաձայնային հետազոտություն, սահմանել 1-2-օրյա խիստ ստացիոնար հսկողություն և համալիր կերպով վերլուծել կլինիկական տվյալները:

Մեր հոսպիտալային պրակտիկայում նման մոտեցում կիրառելու շնորհիվ հաջողվել է նշանակալիորեն կրճատել անհարկի վիրահատությունների, ինչպես նաև ապենդիցիտի ուշացած ախտորոշման հետևանքով զարգացող բարդությունների դեպքերը:

Սուր ապենդիցիտն ախտորոշելիս՝ ուլտրաձայնային հետազոտության ճշգրտությունը գնահատելու համար ուլտրաձայնային հետազոտության տվյալները համեմատվել են ներվիրահատական գննման և հեռացված որդանման ելունների հյուսվածաբանական հետազոտության տվյալների հետ (տես աղ. 4):

---

[11] Տես *Ս. Հեռնանգ-Շուլման,* Նշ. աշխ., *P. M. Rao, J. T. Rhea, R. A. Novelline, A. A. Mostafavi, C. J. McCabe.* Effect of computed tomography of the appendix on treatment of patients and use of hospital resources. “The New England Journal of Medicine”, 1998, Vol. 338, N 3; *М. Е. Соколов, А. З. Гусейнов, Т. А. Гусейнов, М. А. Шляхов.* Современная диагностика острого аппендицита. «Вестник новых медицинских технологий», 2017, т. 24, № 4; *G. Mostbeck, E. J. Adam, M. B. Nielsen, M. Claudon, D.-A. Clevert, C. Nicolau, C. Nyhsen, C. M. Owens.* How to diagnose acute appendicitis: ultrasound first. “Insights into Imaging”, 2016, Vol. 7, N 2:

Աղյուսակ 4

ՈՐՈՎԱՅՆԻ ՈՒԼՏՐԱՁԱՅՆԱՅԻՆ ԵՎ ՈՐԴԱՆՄԱՆ ԵԼՈՒՆՆԵՐԻ ՀՅՈՒՍՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

	Սուր ապենդիցիտը հաստատվել է	Սուր ապենդիցիտը ժխտվել է	Արդյունքների ընդհանուր թիվը
Դրական արդյունք (ուլտրաձայնային հետազոտություն)	34 (իրական դրական)	8 (կեղծ դրական)	42
Բացասական արդյունք (ուլտրաձայնային հետազոտություն)	28 (կեղծ բացասական)	38 (իրական բացասական)	66
Հիվանդների ընդհանուր թիվը	62	46	108

Սուր ապենդիցիտ ախտորոշելու դեպքում ուլտրաձայնային հետազոտության զգայունությունը կազմել է (34/34+28)x100%=54,8%, իսկ բնորոշությունը՝ (38/38+8)x100%=82,6%: Հետազոտության արդյունքները վկայում են, որ միայն ուլտրաձայնային հետազոտության կիրառումը չի կարող որոշիչ նշանակություն ունենալ սուր ապենդիցիտի կասկածով դիմած հիվանդների համար բուժական մարտավարության ընտրության հարցում: Մեր հետազոտությունում ուլտրաձայնային ախտորոշման զգայունությունը եղել է ցածր մակարդակի, ուստի առանց հիվանդի կլինիկական տվյալների համալիր ու պատշաճ վերլուծության, միայն ուլտրաձայնային հետազոտության տվյալների վրա հիմնված եզրահանգումները կարող են հանգեցնել ախտորոշման սխալների: Ուլտրաձայնային հետազոտության կիրառումը առավել կարևոր նշանակություն է ստանում տարբերակիչ ախտորոշման անհրաժեշտության պարագայում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եվ այսպես. որդանման ելունի սուր բորբոքման ախտորոշումը հաճախ կարող է դժվար խնդիր դառնալ առավելապես այլ մասնագիտացում ունեցող հերթապահ բուժանձնակազմի կամ սակավափորձ վիրաբույժի համար: Որդանման ելունի սուր բորբոքման կասկածով դիմած հիվանդի վարման ժամանակ առավել կարևոր են վիրահատական միջամտության անհրաժեշտության մասին որոշման պատեհաժամ կայացումը և վիրահատության կատարման ժամկետի ճիշտ ընտրությունը:

Այդ դեպքում գերադասելի է կիրառել հստակ կլինիկական ուղեցույց, քանի որ այն կհեշտացնի նմանատիպ որոշումների ընդունումը և նվազագույնի կհասցնի սխալ ախտորոշումների թիվը: Ընդսմին սույն հետազոտության տվյալները կարող են օգտակար լինել տվյալ կլինիկական ուղեցույցի մշակման համար:

Հիմք ընդունելով մասնագիտական գրականության հաղորդած տեղեկությունները, ինչպես նաև մեր կատարած հետազոտության տվյալները և պրակտիկան՝ առաջարկում ենք որդանման ելունի սուր բորբոքման կասկածով դիմած հիվանդների վարման համար կիրառել ստորև ներկայացված ընդհանրացված ախտորոշիչ սխեման:



Նկ. 1. Որդանման ելունի սուր բորբոքման կասկածով հիվանդների ախտորոշման և վարման ընդհանրացված սխեմա

Սույն սխեման մատչելի է և կարող է կիրառման առումով օգտակար լինել հոսպիտալների հերթապահ բուժանձնակազմերի համար՝ ապահովելով սխալ և ուշացած ախտորոշումների, առաջացող բարդությունների թվի զգալի նվազում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *R. K. Chhetri, M. L. Shrestha.* A comparative study of pre-operative with operative *diagnosis* in acute abdomen. “Kathmandu University Medical Journal”, 2005, Vol. 3, N 2, Issue 10.
2. *S. K. Doklestić, D. D. Bajec, R. V. Djukić, V. Bumbaširević, A. D. Detanac, S. D. Detanac, M. Bracanović, R. A. Karamarković.* Secondary peritonitis-evaluation of 204 cases and literature review. “Journal of Medicine and Life”, 2014, Vol. 7, Issue 2.

ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԴԻՍՊԱՆՍԵՐԱՅԻՆ ՁՆՆՄԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Գ. Կ. ԱԴԱՄՅԱՆ, բ/ծ մայոր, բժշկական գիտությունների թեկնածու,
ՀՀ Ոստիկանության բուժվարչության բաժնի պետ,
Վ. Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ, գնդապետ, բժշկական գիտությունների թեկնածու,
ՀՀ Ոստիկանության պետի տեղակալ

Համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ բժշկական փորձաքննությունը որոշում է ծառայության անցնելու ենթակա քաղաքացիների առողջական վիճակով պայմանավորված պիտանիությունը, հաստատում է վնասվածքների պատճառահետևանքային կապը, սահմանում է բժշկական, սոցիալական, աշխատանքային վերականգնման իրականացման տեսակները, ծավալը և ժամկետները[1]:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում՝

- Ոստիկանության հետագա շինարարությունը տեղի է ունենում մի իրադրությունում, որը բնորոշվում է բացասական ժողովրդագրական դինամիկայով, անվտանգության դեմ ուղղված նոր սպառնալիքներով ու մարտահրավերներով, մարդկային ու նյութական ռեսուրսների սղությամբ,
- համաձայն ՀՀ Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք[2],
- ըստ գործող օրենսդրության՝ ՀՀ Ոստիկանության աշխատողներն օգտվում են Ոստիկանության կամ քաղաքացիական բուժհիմնարկներում անվճար բուժօգնություն ստանալու իրավունքից[3]:

Միևնույն ժամանակ ի հայտ են եկել որոշ հակասություններ.

- առողջապահության ոլորտում կատարվող իրական ծախսերի և եղած պահանջարկի միջև կա անհամապատասխանություն,

---

[1] Տես «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ 1996 թ. մարտի 4-ի հմ. ՀՕ-42 օրենքը, հդ. 22 (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=104958):

[2] Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ»: Ընդունվել է 2015 թ., հդ. 85 (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510):

[3] Տես *Е. И. Дубинина.* Военно-врачебная экспертиза и контроль качества медицинской помощи военнослужащим. «Социальные аспекты здоровья населения». Электронный научный журнал, 2011, № 3 (http://vestnik.mednet.ru/content/view/301/30/lang,ru/):

- բուն առողջապահական և բժշկական իրավիճակը պահանջում է բուժապահովման ոլորտում երաշխավորել ավելի արդյունավետ ու որակյալ բուժօգնություն,
- Ոստիկանության աշխատողների քաղաքացիական հիմնարկներ ուղեգրման կարգը չի կարող ապահովել դրանցում որակյալ բուժօգնության ցուցաբերումը, քանի որ դա արվում է տվյալ բուժհիմնարկի հետ նախապես կնքված պայմանագրերով՝ առանց հաշվի առնելու կոնկրետ բժշկի մոտ բուժվելու հիվանդի ցանկությունը,
- տվյալ քաղաքացիական, ինչպես նաև Ոստիկանության բուժհիմնարկում ցուցաբերվող բուժօգնության որակի օբյեկտիվ և առանց վարչարարական մեթոդների կիրառման վերահսկողությունը լիարժեք չէ:

Հարկ է նշել, որ որոշակի անհամապատասխանություն կա նաև մայրաքաղաքում և մարզերում Ոստիկանության աշխատողներին ցուցաբերվող բուժօգնության ծավալների, որակի և վերահսկման միջև:

Վերջին տարիներին նկատելի է քաղաքացիական բուժհիմնարկներ Ոստիկանության համակարգի աշխատողների ուղեգրման դեպքերի հարաճում: Ընդսմին հաշվի չեն առնվում ախտորոշման և բուժական միջամտությունների անվանացանկը, մատչելիությունը, մասնագիտական բուժօգնություն ցուցաբերելու՝ Ոստիկանության բուժհիմնարկի հնարավորությունները և այլ հանգամանքներ, նաև տվյալ հիմնարկում նեղ մասնագիտական բուժօգնություն ցուցաբերելու համար կադրերի առկայությունը: Պետք է նաև նշել, որ այս գործընթացների կազմակերպական ու մասնագիտական մշտազննումը, ինչպես նաև բուժօգնության որակի վերահսկումը կապված են որոշակի դժվարությունների հետ, իսկ հոսպիտալային օղակում՝ անգամ անհնար: Ըստ էության ներկայումս այս գործառույթները սահմանափակվում են քաղաքացիական բուժհիմնարկներ ուղեգրերի դուրսգրմամբ, անհրաժեշտության դեպքում գրեթե ձևական բուժական արձակուրդների տրամադրմամբ:

Այսպիսով՝ խիստ արդիական է դարձել քաղաքացիական և Ոստիկանության բուժհիմնարկներում ցուցաբերվող բուժօգնության որակի գնահատումը ինչպես վարչական կառավարային, այնպես էլ մասնագիտական-բժշկական տեսակետից, ինչն էլ դրդել է մեզ կատարելու տվյալ հետազոտությունը:

Այս իրավիճակում, անհրաժեշտություն է ծագել ՀՀ Ոստիկանության բուժվարչության գործառույթների առանձնահատկությունների հաշվառմամբ մշակելու և գործարկելու մի մեխանիզմ, որը, մի կողմից, գործի որպես վարչակազմակերպական միջոց, իսկ մյուս կողմից՝ ունենա Ոստիկանության ու քաղաքացիական բուժհիմնարկներում ցուցաբերվող բուժական գործընթացի բովանդակային բաղադրիչի անվանացանկն ու որակը գնահատելու և վերահսկելու լիազորություն: Ընդսմին պետք է նկատի ունենալ, որ Ոստիկանության աշխատողների բուժապահովման համակարգը չի կարող լինել լրիվ բաց ու թափանցիկ, ինչի պատճառով էլ քաղաքացիական առողջապահության վերահսկողական գործառույթները կարող են իրագործվել ոչ լիարժեք կերպով:

Հարկ է նշել, որ «Թրանսպարենսի Ինտերնեյշենել հակակոռուպցիոն

կենտրոն» ՀԿ-ն 2016 թ. կատարեց մի հետազոտություն, որի արդյունքներով փաստվեց, որ ՀՀ բուժհիմնարկներում ցուցաբերվող բուժօգնության որակի վերահսկման գործում կան հետևյալ խնդիրները.

- բժշկական կազմակերպություններում բուժօգնության որակի վերահսկման մասնագիտական հանձնաժողովների գործունեությունն անբավարար է, քանի որ չկան որակի գնահատման հստակ չափանիշներ և ընթացակարգեր,
- ՀՀ առողջապահական համակարգում մինչ օրս կիրառվում են նաև խորհրդային տարիներին մշակված նորմատիվ ակտերը, ստանդարտներն ու բուժման սխեմաները, որոնց մեծ մասն արդեն հնացել է, իսկ երբեմն նույնիսկ նպատակին ծառայելու փոխարեն կազմակերպությունների բնականոն գործունեության համար ստեղծում է խոչընդոտներ:

Ներկայումս, երբ ՀՀ Ոստիկանության բուժվարչության գործառույթների համակարգը նոր բարեփոխումների փուլում է, անհրաժեշտ է մշակել հիվանդ աշխատողներին ցուցաբերվող բուժօգնության որակի և անվանացանկի գնահատման մեխանիզմների ներդրման ճանապարհային քարտեզ, որում հաշվի առնվի, որ կանխատեսվում է քրոնիկական հիվանդություններ և առողջական վիճակի որոշակի սահմանափակումներ ունեցող անձանց թվաքանակի ավելացում:

Ըստ այդմ նշենք դրա այս պահին արդեն տեսանելի և թերևս հասանելի մի քանի չափանիշ, ըստ որոնց որակի գնահատման համակարգը պետք է վարչակազմակերպական տեսակետից տարանջատված լինի բուժօգնություն պլանավորող ու ցուցաբերող օղակներից, իր իրավասություններն իրականացնի դրանցից անկախ.

- բուժական գործընթացի տեսակետից կարողանա հստակորեն կողմնորոշվել և ստուգապես գնահատել բուժօգնության անվանացանկի ու բովանդակության համապատասխանությունը կոնկրետ բուժհիմնարկում Ոստիկանության համակարգի աշխատողների հիվանդության ճիշտ ախտորոշման, մասնագիտական բուժման, հիմնավորված և ողջամիտ ժամկետներում դրա ավարտման, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության թերթիկի տրամադրման արդյունքներին:

Մեթոդաբանական տեսանկյունից անհրաժեշտ է միմյանցից տարանջատել բուժօգնության որակի գնահատման, պլանավորման, ղեկավարման և կառավարման հասկացությունները: Ընդ որում, կատարվող բուժախտորոշիչ աշխատանքի համալիր գնահատականը պետք է դիտել որպես Ոստիկանության համակարգի աշխատողներին ցուցաբերվող բուժօգնության որակի վերահսկողության օբյեկտիվ գործիք: Դրանք փոխկապված, փոխլրացնող ու փոխգործող են և կազմում են մեկ ամբողջություն:

Ընդհանրացնելով՝ կարող ենք անել մի շարք եզրակացություններ.

- Քաղաքացիական և Ոստիկանության բուժհիմնարկներ ուղեգրված՝ ՀՀ Ոստիկանության աշխատողներին ցուցաբերվող բուժօգնության որակի գնահատման համար անհրաժեշտ են այնպիսի մոտեցումներ ու գործելակերպ, որոնք պետք է լինեն սկզբունքորեն նոր, համապար-

փակ, կառավարելի, տեսանելի ու վերահսկելի, և որոնցում պետք է հաշվի առնված լինեն ոստիկանության համակարգի աշխատողների բուժապահովման առանձնահատկությունները,

- բուժօգնության որակը պետք է վերահսկվի նաև ըստ ՀՀ առողջապահական համակարգի մշակած չափանիշների, ընդսմին պետք է հաշվի առնվի այդ համակարգի կատարելագործման և բարեփոխման անհրաժեշտությունը,
- բուժօգնության որակի գնահատականը պետք է լինի համապարփակ, ներառի բուն բուժական գործընթացի, վերականգնողական բուժընթացի վարչակազմակերպական և մասնագիտական բժշկական ամբողջ համալիրը՝ ընդգրկելով անվանացանկն ու ստանդարտները:

Վերը նշվածը հիմք է տալիս կատարելու ևս մի խիստ կարևոր և առանձնահատուկ եզրահանգում, որը վերաբերում է Ոստիկանության համակարգի աշխատողներին ցուցաբերվող բուժօգնության որակի գնահատման միջոցներին ու մեխանիզմներին, համապատասխանաբար՝ նրանց բժշկական փորձաքննությանը և տվյալ հանձնաժողովի որոշումներին ու դրանց կիրառմանը:

Այդպիսի եզրահանգումը խարսխվում է փորձաքննական հանձնաժողովին առնչվող հետևյալ իրողությունների վրա.

- ենթակայություն՝ որոշակի վերապահումներով և առաջարկություններով,
- գործունեության ուսումնասիրություն,
- գործունեության արդյունքների վերլուծություն:

Հիմնախնդրի լուծման բանալիներն են.

- Ոստիկանության բժշկական հանձնաժողովի համալրումը փորձաքննության՝ որպես առողջապահության կազմակերպման և կլինիկական բժշկության մի յուրահատուկ ուղղության բնագավառում, մասնագիտացած անձանցով,
- վիճահարույց դեպքերի քննարկման համար բանավեճերի հարթակների ստեղծումը՝ հոսպիտալային համակարգի ներկայացուցիչների և բժշկական հանձնաժողովի անդամների ընդգրկմամբ,
- բժշկական հանձնաժողովի վճռի գերակայությունը:

Ոստիկանության համակարգի աշխատողներին ցուցաբերվող բուժօգնության որակի գնահատման և կառավարման համակարգի կատարելագործումը օբյեկտիվ և օրինաչափ է և միտված է նաև բուժվարչության համակարգի հետագա բարեփոխումների:

Նման գործելաոճ որոշակի առանձնահատկություններով արդեն կիրառվում է Ռուսաստանի Դաշնությունում[4]:

---

[4] Տես *Ե. Ի. Դուբինինա,* Նշ. աշխ., *И. Л. Мызников, Л. И. Устименко, А. Ю. Трофимова, Н. Н. Бурцев.* Военно-врачебная экспертиза призывников и ее качество. «Проблемы социальной гигиены, здравоохранения и истории медицины», 2013, № 3; *Н. Г. Петрова, М. В. Петров.* Анализ мнений врачей-экспертов об организации военно-*врачебной* экспертизы. «Проблемы социальной гигиены, здравоохранения и истории медицины», 2012, № 3:

ВОЕННАЯ МЕДИЦИНА

ОБЩИЕ ПОДХОДЫ К МЕДИЦИНСКОМУ НАПРАВЛЕНИЮ БОЛЬНЫХ, ГОСПИТАЛИЗИРОВАННЫХ ИЗ-ЗА ОСТРОЙ БОЛИ В ЖИВОТЕ

В. Г. ГЕВОРКЯН, полковник м/с, начальник Ереванского гарнизонного госпиталя

РЕЗЮМЕ

В настоящее время в медучреждениях не разработаны эффективные и общепринятые подходы к диагностике и лечению больных при подозрении на острый аппендицит. Целью проведенного исследования является оценка эффективности применения в госпитальном звене шкалы Альварадо для улучшения показателей диагностики острого аппендицита. Исследование было проведено в хирургических отделениях ЦГВГ и ЕГГ МО РА в 2015–2017 гг.

Были исследованы результаты лечения 124 больных, госпитализированных с предварительным диагнозом «острый аппендицит». На их основе предлагается специальная обобщенная диагностическая схема, доступная и полезная для дежурного медицинского персонала госпиталей, обеспечивающая значительную минимизацию числа ошибочных и запоздалых диагнозов и обусловленных этим излишних хирургических вмешательств и возникающих осложнений.

ВРАЧЕБНАЯ ЭКСПЕРТИЗА КАК СРЕДСТВО ОЦЕНКИ КАЧЕСТВА ДИСПАНСЕРИЗАЦИИ СОТРУДНИКОВ ПОЛИЦИИ РА

Г. К. АДАМЯН, майор м/с, кандидат медицинских наук, начальник отдела медицинского управления Полиции РА, В. В. МОВСИСЯН, полковник, кандидат медицинских наук, заместитель начальника Полиции РА

РЕЗЮМЕ

За последние несколько лет наблюдается рост случаев направления сотрудников Полиции в гражданские медицинские учреждения. При этом не учитываются перечень, доступность диагностических и лечебных вмешательств, возможности медучреждения Полиции по оказанию специализированной медпомощи и другие обстоятельства, а также наличие кадров для оказания узкой специализированной медпомощи в данном учреждении.

Для организационного и специального мониторинга этих процессов, а также контроля за качеством медицинской помощи предлагается укомплектовать медицинскую комиссию Полиции профессиональными кадрами в области экспертизы как своеобразного направления организации

здравоохранения и клинической медицины, создать для обсуждения спорных случаев дискуссионные площадки с вовлечением представителей госпитальной системы и членов медицинской комиссии, определить приоритет решения медицинской комиссии.

MILITARY MEDICINE

GENERAL APPROACHES TO THE MEDICAL REFERRAL OF PATIENTS HOSPITALIZED DUE TO ACUTE ABDOMINAL PAIN

V. G. GEVORGYAN, Colonel of Medical Service, Head, Yerevan Garrison Hospital

SUMMARY

Currently there are no effective and standard approaches elaborated in medical institutions in reference to the diagnosis and treatment of the patients with suspicion of acute appendicitis. The research conducted aims at assessing the efficiency of applying the Alvarado Score at the hospital level for improving the indicators of the diagnosis of acute appendicitis. The research was conducted in the surgical branches of the Central Garrison Military Hospital and Yerevan Garrison Hospital, MOD, RA, in 2015-2017.

The results of the treatment of 124 patients, hospitalized with the preliminary diagnosis of “acute appendicitis” were studied. A special generalized diagnostic scheme, available for and useful to the hospitals’ medical personnels on duty, is recommended. It provides for the significant minimization of the number of incorrect and late diagnoses and unnecessary surgical interventions, conditioned by that, as well as the arising complications.

MEDICAL EXAMINATION AS A MEANS OF QUALITY ASSESSMENT OF PROPHYLACTIC MEDICAL EXAMINATION OF THE RA POLICE OFFICERS

G. K. ADAMYAN, Major of Medical Service, PhD in Medicine, Head of Unit, Medical Department, the RA Police, V. V. MOVSISYAN, Colonel, PhD in Medicine, Deputy Head, the RA Police

SUMMARY

Over the past few years, there has been an increase in cases of referring Police officers to civilian medical facilities. At the same time, no account is taken of the list, the availability of diagnostic and therapeutic interventions, the resources of the Police medical institution for providing specialized medical aid, and other circumstances, as well as the

availability of the personnel to provide narrow specialized medical aid in the mentioned institution.

For organizational and special monitoring of these processes, as well as the control over the quality of medical aid, it is proposed to: man the Police Medical Commission with professional staff in the sphere of examination as a unique direction of organizing health care and clinical medicine; create discussion platforms for treating controversial cases involving representatives of the hospital system and members of the Medical Commission; prioritize the Medical Commission's decision.

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,
Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Ք. Կ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր

ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

անձնիշխանություն – автократия – autocracy

առաջադրանքային կառավարում – принцип предоставления командиру самостоятельности при выполнении задачи – mission command, Auftragstaktik

առաջավարություն – лидерство – leadership

առաջնային կալման ստրոբ – строб первичного захвата – primary lock-on gate

առճակատում – конфронтация – confrontation, face-off

արտարկված նշակետ – экстраполированная отметка – extrapolation bug

արտարկում – экстраполяция – extrapolation

ափհանում – высадка десанта (на берег) – landing

բազմակենտրոն աշխարհ – полицентричный мир – multicentric world

Բոյդի հանգույց – տես *Բոյդի փուլաշրջան*

Բոյդի փուլաշրջան – петля Бойда, цикл Бойда – Boyd's OODA Loop, Boyd's Cycle

բուժօգնություն – медицинская помощь – medical aid

– որակավոր բուժօգնություն – квалифицированная медицинская помощь – qualified medical aid

– որակյալ բուժօգնություն – качественная медицинская помощь – qualitative medical aid

գլխավոր հրամանատարի ռազմական – ставка главного командующего – general headquarters

գոյունակություն – живучесть – survivability

գործակցություն – 1. сотрудничество, 2. տես *փոխգործություն* – 1. cooperation, 2. տես *փոխգործություն*

դաշնադրություն – коалиция – coalition

զորակայան – военная база – military base

զորաշարժ – տես *տարաշարժ*

զորէջք – 1. десантирование, 2. выброска десанта – 1. landing, 2. insertion of troops

ինժեներական արգելափակոց – инженерное заграждение – manmade obstacle, manmade blockage

խանգարումապաշտպանվածություն – помехозащищенность – interference immunity

խրամատների հարկաշարք – ярус окопов – tier of trenches

խրամուղի – траншея – trench

կառավարման ծածուկություն – скрытность управления – command and control security

կենտրոնակայան – штаб-квартира – headquarters, HQ

կերպափոխում – трансформация – transformation

հակառակորդի հյուծում – изнурение противника, измор – adversary's

attrition
հաստատագրում – установления – provisions (of law)
հարված – удар – strike
– առաջանցիկ հարված – упреждающий удар – preemption, pre-emptive strike
– կանխիչ հարված – превентивный удар – prevention, preventive strike
հեռահայտնաբերման համակարգ – система дальнего обнаружения – early warning system
հետազոտության մատչելիություն – доступность исследования – availability of research
հետքաշման բնագիծ – рубеж отхода – withdrawal line
հզորություն – мощь – power, strength
– զանգվածեղ կրակային հզորություն – массированная огневая мощь – mass firepower
– համախումբ հզորություն – совокупная мощь – total power
հրամանատրում առաջադրանքի միջոցով – տես *առաջադրանքային կառավարում*
մարտակարգ – боевой порядок – battle deployment, combat formation, order of battle, tactical formation
մարտի մեջ զորամուտ – ввод в бой – introducing into battle, engaging in battle
միաբևեռ աշխարհ – однополярный мир – unipolar world
մշտազննում – мониторинг – monitoring
մտավոր-տեղեկատվական ընդդիմամարտություն – интеллектуально-информационное противоборство – intellectual and information confrontation
նույնականացում – идентификация – identification
շարակարգ – эшелон – 1. echelon, 2. serial
շոշափողական մարտ – тактильный бой – tactile fight
շրջանաձև պաշտպանություն – круговая оборона – all-round defense
որդանման ելուն – червеобразный отросток – vermiform appendix
որոշարկում – 1. детерминирование, 2. опознавание, распознавание – 1. determination, 2. identification, recognition
որովայնադիտում – лапароскопия – laparoscopy, peritoneoscopy
որովայնամզաբորբ – перитонит – peritonitis
Ուորդենի օղակներ – кольца Уордена – Warden's Rings
պատերազմ – война – war, warfare
– անհամաչափ պատերազմ – асимметричная война – asymmetric warfare
– ավանդական պատերազմ – традиционная война, обычная война – traditional warfare, conventional war
– հիբրիդային պատերազմ – гибридная война – hybrid warfare
– պատերազմի ռազմավարություն – стратегия войны – strategy of war
– սովորական պատերազմ – տես *պատերազմ՝ ավանդական պատերազմ*
– տեղային պատերազմ – локальная война – local war
– տեղեկատվական պատերազմ – информационная война – information warfare
պատերազմավարություն – տես *պատերազմ՝ պատերազմի ռազմավարություն*
ջախջախում – 1. разгром, 2. сокрушение – 1. debacle, 2. annihilation
ռադիոտեղորոշումային տեղեկույթի երկրորդային մշակում – вторичная обработка радиолокационной информации – radar data secondary processing
ռազմամոլություն – милитаризм – militarism

վերականգնողական բուժընթաց – процесс медицинской реабилитации – rehabilitation medicine
տարաշարժ – маневр – maneuver
– օձաձև տարաշարժ – маневр «змейка» – “snake” maneuver
տարաշարժուն մարտական գործողություն – маневренное боевое действие – maneuverable combat operation, mobile tactical operation
տեղաբաշխման կետ – пункт дислокации, пункт размещения – home station, deployment location
տեղափակում – локализация – localization
տեղեկութային զտիչ – информационный фильтр – data filter, information filter
ցանցակենտրոն կազմակերպվածք – сетецентричная организация – network organization
փոխադրական մատրից – передаточная матрица – transfer matrix
փոխակերպում – преобразование – transformation
փոխգործություն – взаимодействие – interaction
փոփոխակ – модификация – modification
փոքր հեռահարությամբ հրթիռ – ракета малой дальности – short-range missile
քարշակվող հրետանի – буксируемая артиллерия – towed artillery
քննավերլուծություն – критический анализ – critique
օգտահանում – утилизация – utilization

ՌՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

автократия – անձնիշխանություն
боевой порядок – մարտակարգ
буксируемая артиллерия – քարշակվող հրետանի
ввод в бой – մարտի մեջ զորամուտ
взаимодействие – փոխգործություն, գործակցություն
военная база – զորակայան
война – պատերազմ
– асимметричная война – անհամաչափ պատերազմ
– гибридная война – հիբրիդային պատերազմ
– информационная война – տեղեկատվական պատերազմ
– локальная война – տեղային պատերազմ
– обычная война – см. *война – традиционная война*
– стратегия войны – պատերազմի ռազմավարություն, պատերազմավարություն
– традиционная война – ավանդական պատերազմ, սովորական պատերազմ
вторичная обработка радиолокационной информации – ռադիոտեղորոշումային տեղեկույթի երկրորդային մշակում
выброска десанта – զորէջք
высадка десанта (на берег) – ափհանում
десантирование – զորէջք
детерминирование – որոշարկում
доступность исследования – հետազոտության մատչելիություն
живучесть – գոյունակություն
идентификация – նույնականացում
измор – *см. изнурение противника*
изнурение противника – հակառակորդի հյուծում
инженерное заграждение – ինժենեռական արգելափակոց
интеллектуально-информационное противоборство – մտավոր-տեղեկատվական ընդդիմամարտություն

информационный фильтр – տեղեկութային զտիչ
коалиция – դաշնադրություն
кольца Уордена – Ուորդենի օղակներ
конфронтация – առճակատում
критический анализ – քննավերլուծություն
круговая оборона – շրջանաձև պաշտպանություն
лапароскопия – որովայնադիտում
лидерство – առաջավարություն
локализация – տեղափակում
маневр – տարաշարժ, զորաշարժ
– маневр «змейка» – օձաձև տարաշարժ
маневренное боевое действие – տարաշարժուն մարտական գործողություն
медицинская помощь – բուժօգնություն
– качественная медицинская помощь – որակյալ բուժօգնություն
– квалифицированная медицинская помощь – որակավոր բուժօգնություն
милитаризм – ռազմամոլություն
модификация – փոփոխակ
мониторинг – մշտազննում
мощь – հզորություն
– массированная огневая мощь – զանգվածեղ կրակային հզորություն
– совокупная мощь – համախումբ հզորություն
однополярный мир – միաբևեռ աշխարհ
опознавание – որոշարկում
передаточная матрица – փոխադրական մատրից
перитонит – որովայնամզաբորբ
петля Бойда – Բոյդի փուլաշրջան, Բոյդի հանգույց
полицентричный мир – բազմակենտրոն աշխարհ
помехозащищенность – խանգարումապաշտպանվածություն
преобразование – փոխակերպում
процесс медицинской реабилитации – վերականգնողական բուժընթաց
пункт – կետ
– пункт дислокации – տեղաբաշխման կետ
– пункт размещения – см. *пункт – пункт дислокации*
разгром – ջախջախում
ракета малой дальности – փոքր հեռահարությամբ հրթիռ
распознавание – см. *опознавание*
рубеж отхода – հետքաշման բնագիծ
сетецентричная организация – ցանցակենտրոն կազմակերպվածք
система дальнего обнаружения – հեռահայտնաբերման համակարգ
скрытность управления – կառավարման ծածուկություն
сокрушение – ջախջախում
сотрудничество – գործակցություն
ставка главного командующего – գլխավոր հրամանատարի ռազմական
строб первичного захвата – առաջնային կալման ստրոբ
тактильный бой – շոշափողական մարտ
трансформация – կերպափոխում
траншея – խրամուղի
удар – հարված
– превентивный удар – կանխիչ հարված
– упреждающий удар – առաջանցիկ հարված
установления – հաստատագրում
утилизация – օգտահանում
цикл Бойда – см. *петля Бойда*
червеобразный отросток – որդանման ելուն
штаб-квартира – կենտրոնական
экстраполированная отметка – արտարկված նշակետ
экстраполяция – արտարկում
эшелон – շարակարգ
ярус окопов – խրամատների հարկաշարք

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

adversary's attrition – հակառակորդի հյուծում
all-round defense – շրջանաձև պաշտպանություն
annihilation – ջախջախում
Auftragstaktik – see *mission-command*
autocracy – անձնիշխանություն
availability of research – հետազոտության մատչելիություն
battle deployment – մարտակարգ
Boyd's Cycle – see *Boyd's OODA Loop*
Boyd's OODA Loop – Բոյդի փուլաշրջան, Բոյդի հանգույց
coalition – դաշնադրություն
combat formation – see *battle deployment*
command and control security – կառավարման ծածուկություն
confrontation – առճակատում
cooperation – գործակցություն
critique – քննավերլուծություն
data filter – տեղեկութային զտիչ
debacle – ջախջախում
deployment location – see *home station*
determination – որոշարկում
early warning system – հեռահայտնաբերման համակարգ
echelon – շարակարգ
engaging in battle – see *introducing into battle*
extrapolation – արտարկում
– extrapolation bug – արտարկված նշակետ
face-off – see *confrontation*
headquarters – կենտրոնական
– general headquarters – գլխավոր հրամանատարի ռազմական
home station – տեղաբաշխման կետ
HQ – see *headquarters*
identification – 1. նույնականացում, 2. որոշարկում
information filter – see *data filter*
insertion of troops – զորէջք
intellectual and information confrontation – մտավոր-տեղեկատվական ընդդիմամարտություն
interaction – փոխգործություն, գործակցություն
interference immunity – խանգարումապաշտպանվածություն
introducing into battle – մարտի մեջ զորամուտ
landing – 1. ափիանում, 2. զորէջք
laparoscopy – որովայնադիտում
leadership – առաջավարություն
localization – տեղափակում
maneuver – տարաշարժ, զորաշարժ
– "snake" maneuver – օձաձև տարաշարժ
maneuverable combat operation – տարաշարժուն մարտական գործողություն
manmade blockage – see *manmade obstacle*
manmade obstacle – ինժեներական արգելափակոց
mass firepower – զանգվածեղ կրակային հզորություն
medical aid – բուժօգնություն
– qualified medical aid – որակավոր բուժօգնություն
– qualitative medical aid – որակյալ բուժօգնություն
militarism – ռազմամոլություն
military base – զորակայան
mission command – առաջադրանքային կառավարում, հրամանատրում առաջադրանքի միջոցով
mobile tactical operation – see *maneuverable combat operation*
modification – փոփոխակ
monitoring – մշտազննում
multicentric world – բազմակենտրոն աշխարհ
network organization – ցանցակենտ-

ռոն կազմակերպվածք
order of battle – see *battle deployment*
peritoneoscopy – see *laparoscopy*
peritonitis – որովայնամզաբորբ
power – հզորություն
preemption – առաջանցիկ հարված
prevention – կանխիչ հարված
primary lock-on gate – առաջնային կալման ստրոբ
provisions (of law) – հաստատագրում
radar data secondary processing – ռադիոտեղորոշումային տեղեկույթի երկրորդային մշակում
recognition – see *identification 2*
rehabilitation medicine – վերականգնողական բուժընթաց
serial – շարակարգ
short-range missile – փոքր հեռահարությամբ հրթիռ
strength – see *power*
strike – հարված
– pre-emptive strike – see *preemption*
– preventive strike – see *prevention*
survivability – գոյունակություն
tactical formation – see *battle deployment*
tactile fight – շոշափողական մարտ
tier of trenches – խրամատների հարկաշարք
total power – համախումբ հզորություն
towed artillery – քարշակվող հրետանի
transfer matrix – փոխադրական մատրից
transformation – 1. կերպափոխում, 2. փոխակերպում
trench – խրամուղի
unipolar world – միաբևեռ աշխարհ
utilization – օգտահանում
vermiform appendix – որդանման ելուն
war – պատերազմ
– conventional war – see *warfare – traditional warfare*
– local war – տեղային պատերազմ
– strategy of war – պատերազմի ռազմավարություն, պատերազմավարություն
Warden's Rings – Ուորդենի օղակներ
warfare – see *war*
– asymmetric warfare – անհամաչափ պատերազմ
– hybrid warfare – հիբրիդային պատերազմ
– information warfare – տեղեկատվական պատերազմ
– traditional warfare – ավանդական պատերազմ, սովորական պատերազմ
withdrawal line – հետքաշման բնագիծ

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Լեզվական խմբագրման բաժնի պետ՝ *Տ. Մ. Անտոնյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*
Թարգմանչության խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*
Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ա. Հ. Սարուխանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի, Լ. Հ. Պապիկյանի, Դ. Ս. Չիլինգարյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ա. Դավթյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության և համացանցային

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ուլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայք՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2019 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat», «Russian Baltica» և «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար
Դավիթ Տոնոյանի աշխատանքային այցը
հանրապետության հյուսիսարևելյան սահմանագոտի

2019 թ. ապրիլ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 1 (99). 2019